Հայաստանի
ՔՀԿ-ների
Հակակոռուպցիոն
Կոալիցիա

ԶԵԿՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2019-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ

2021 թվականին իրականացման ենթակա գործողությունների մշադիտարկման արդյունքների

* Առաջին նախագիծը մշակվել է 2022 թվականի ապրիլի 25-ին, շրջանառության մեջ է դրվել մայիսի 3-ից
* Վերջնական տարբերակը մշակվել է մայիսի 25-ին, հրապարակվել է հունիսի 7-ին

ԵՐԵՎԱՆ-2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 2
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 8
ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 10
ա. Մշտադիտարկման նպատակներ 10
բ. Գնահատման աղյուսակ 10
գ. Գնահատման մեթոդներ 13
ՈԼՈՐՏ 1: ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ 16
Գործողություն 1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ձևավորում և բնականոն գործունեության ապահովում: 16
Գործողություն 2. Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման, քննության գործառույթներով օժտված և անկախության բավարար երաշխիքներ ունեցող հակակոռուպցիոն իրավապահ մարմնի՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ձևավորում և բնականոն գործունեության ապահովում: 18
Գործողություն 3. Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների ստեղծում: 20
Գործողություն 4. ՀՀ Գլխավոր դատախազությունում կոռուպցիոն հանցագործությունների քննության նկատմամբ վերահսկողություն իրականացնող վարչության ստեղծում: 22
Գործողություն 5. Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման համար պատասխանատու մարմինների, հասարակական կազմակերպությունների կարողությունների զարգացում: 23
Գործողություն 6. Դոնորների համակարգման մեխանիզմի բնականոն աշխատանքի ապահովում: 26
ՈԼՈՐՏ 2: ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ 28
Գործողություն 7. 15 000 և ավելի բնակչություն ունեցող տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի վերհանում, ծրագրերի մշակում և իրականացում: 28
Գործողություն 8. Ռիսկերի գնահատումների արդյունքների հիման վրա մշակել ոլորտային հակակոռուպցիոն, այդ թվում՝ ներքին բարեվարքության գործողությունների ծրագրեր՝ այդ թվում ներառելով նախկինում ընդունված միջոցառումների ծրագրերով սահմանված, բայց դեռևս չկատարված գործողություններ: 29

ՈԼՈՐՏ 2.1. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ (բարեվարքություն).....31

Գործողություն 9. Պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց, դատավորների և դատավորների թեկնածուների, դատախազների և դատախազների թեկնածուների, քննիչների բարեվարքության կանոնների պահպանման նկատմամբ հսկողության իրականացման կառուցակարգերի ձևավորում: 31

Գործողություն 10. «Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքների կատարման արդյունավետության գնահատում: ... 32

Գործողություն 11. «Հանրային ծառայության մասին» օրենքին համապատասխան էթիկայի հանձնաժողովների ու բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտի ձևավորում և գործարկում: 34

Գործողություն 12. Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության համակարգի բարեփոխում: 36

Գործողություն 13. Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված՝ հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների, քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնների սահմանում:..... 37

Գործողություն 14. Պատգամավորի, քննիչի վարքագծի կանոնների սահմանում: 38

Գործողություն 15. Քաղաքացիական ծառայության ոլորտում արժանիքահեն համակարգի ապահովում: 40

ՈԼՈՐՏ 2.2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ (հայտարարագրում, նվերներ, կարգավորման ազդեցության գնահատում, գնումներ, մասնավոր ոլորտ, իրական սեփականատերեր, տնտեսական մրցակցության պաշտպանություն) 42

Գործողություն 16. Հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության գնահատման համակարգի արդյունավետության բարձրացում: 42

Գործողություն 17. Գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման համակարգի կատարելագործում: Ծախսերի հայտարարագրման համակարգի ներդրում:..... 42

Գործողություն 18. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների հստակեցում: 44

Գործողություն 19. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ինստիտուտի կատարելագործում, նվերների ռեեստրի ստեղծում:.....45

Գործողություն 20. Լոբբիստական գործունեության օրենսդրական կարգավորման սահմանում, կուսակցությունների, զանգվածային լրատվության միջոցների ֆինանսավորման թափանցիկության ապահովում: 47

Գործողություն 21. Հանրային նշանակության կազմակերպությունների իրավական կարգավիճակի հստակեցում և դրանցում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման գործիքակազմի ներդրում՝ այդ թվում առկա կոռուպցիոն ռիսկերի վերհանում և դրանց հաղթահարման մեխանիզմների ներդրում: 48

Գործողություն 22. Գործարար ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության պահանջների ընդունման խթանում: 49

Գործողություն 23. Գնումների ոլորտի բարելավում: 51

Գործողություն 24. Իրավաբանական անձանց իրական սեփականատերերի ինստիտուտի ներդրում: 53

Գործողություն 25. Տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի վերաբերյալ օրենսդրության կատարելագործում: 54

ՈԼՈՐՏ 2.3. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ (էլեկտրոնային կառավարման գործիքների ներդրում, պետական կառավարման գործընթացին հասարակության մասնակցության մեխանիզմների ներդրում և կատարելագործում, վարչարարության պարզեցում) 56

Գործողություն 26. Քաղաքացիների դիմումների, բողոքների, հարցումների թեժ գծի միասնական հարթակի ներդրում 56

Գործողություն 27. Իրավական ակտերի նախագծերի մշակման գործընթացին հասարակության մասնակցայնության ապահովման արդյունավետության բարձրացում: 57

Գործողություն 28. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիներին առավել շատ մատուցվող ծառայությունների վերաբերյալ մատչելի տեղեկատվություն ստանալու գործիքակազմի ներդրում: 59

Գործողություն 29. Միասնական օպերատորների sso.am էլեկտրոնային համակարգի արդիականացում և e-gov.am-ի շրջանակներում էլեկտրոնային հարթակի ներդրում: 60

Գործողություն 30. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի շրջանակներում պահանջվող տեղեկատվության պրոակտիվ հրապարակման միասնական հարթակի ստեղծում 61

Գործողություն 31. Ազդարարման համակարգի շարունակական կատարելագործում: 62

ՈԼՈՐՏ 3. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ 65

Գործողություն 33. ՀՀ քրեական օրենսգրքում ամրագրված կոռուպցիոն հանցագործությունների հանցակազմերի միջազգային չափանիշների համապատասխանության հարցի ուսումնասիրությունՀ, անհրաժեշտության դեպքում կոռուպցիոն հանցագործությունները միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում: 65

Գործողություն 34. Կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման, քննության մեթոդիկայի մշակում, մշակված մեթոդիկայի հիման վրա քրեական հետապնդման մարմինների վերապատրաստում: 66

Գործողություն 35. Կոռուպցիոն հանցագործությունների մասին վիճակագրության համալրում: 68

Գործողություն 36. Պետական մարմինների էլեկտրոնային բազաներին քրեական հետապնդման մարմինների հասանելիության ապահովում էլեկտրոնային հարցման եղանակով: 69

Գործողություն 38. Կոռուպցիոն հանցագործությունների քննության և բացահայտման շրջանակում միջազգային համագործակցության ամրապնդում: 71

Գործողություն 39. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված կառուցակարգերի ստեղծում 72

Գործողություն 40. Կոռուպցիոն իրավախախտումների համար իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի ներդրում: ... 74

Գործողություն 41. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի 30-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկային համապատասխանեցման նախադրյալների ստեղծում: 75

ՈԼՈՐՏ 4. ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ ԵՎ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ 78

Գործողություն 42. Հանրային իրազեկման տարեկան արշավի ծրագրի մշակում, հաստատում և իրականացում: 78

Գործողություն 43. «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկայի ներառում բոլոր բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դասավանդման մոդուլներում: 80

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն 80

Գործողություն 44. Ավագ դպրոցում հակակոռուպցիոն կրթության իրականացում: .. 82

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն 82

Գործողություն 45. Քաղաքացիական ծառայության համակարգում իրականացվող բարեփոխումների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում, վերապատրաստումների իրականացում՝ այդ թվում կոռուպցիայի կանխարգելման, բարեվարքության, «Մարդու իրավունքներ» թեմայով: 83

Գործողություն 46. Քաղաքացիական ծառայողների համար հեռավար ուսուցման մոդուլների մշակում: 84

Գործողություն 47. Թափուր պաշտոնների համալրման մրցույթների թեստավորման փուլի օնլայն հեռարձակում: 85

ՈԼՈՐՏ 5. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ, ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴՐԱ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ 87

Գործողություն 48. Կոռուպցիայի, հանրային վստահության մակարդակի և հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ պարբերական հարցումների իրականացում հասարակության շրջանում, հարցումների արդյունքների հրապարակում: 87

Ծանոթագրություն 90

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 91
1. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ 91
2. ՄԵԹՈԴԱԿԱՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ 96
3. ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ 97
4. ՎԵՐՋՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ 100

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԺ	Ազգային ժողով
ԱՄՆ ՄԶԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալություն
ԱՆ	Արդարադատության նախարարություն
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԵՄ	Եվրոպական միություն
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոց
ԻՀԱ	Իրավաբանների հայկական ասոցիացիա
ԿԳՄՍ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ԿԿՀ	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀԿԿ	Հակակոռուպցիոն կոմիտե
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԱԶԾ	ՄԱԿ-ի զարգացման ծրագիր
ՊԵԿ	Պետական եկամուտների կոմիտե
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ՖԽՔ	Ֆոկուս խմբային քննարկում

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կառավարությունը 2019 թվականի հոկտեմբերի 3-ին հաստատեց «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը» (այսուհետ նաև՝ Հակակոռուպցիոն ռազմավարություն կամ Ռազմավարություն): Հակակոռուպցիոն ռազմավարության հիմնական նպատակը՝ կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ՀՀ Կառավարության հռչակած հայեցակարգային կանխադրույթների ու սկզբունքների հետևողական կենսագործումն է, այդ թվում՝ կոռուպցիան ծնող պատճառների վերհանումը և դրանց վերացումը, կոռուպցիայի նկատմամբ հասարակության և հանրային ծառայողների անհանդուրժողական վերաբերմունքի սերմանումը և տարածումը, կոռուպցիայի համատարած և շարունակական նվազեցումը:

Ռազմավարությունը նախատեսում է 48 միջոցառում, որոնցից 2-ն արդեն ամբողջությամբ ավարտվել են, իսկ մնացյալ 46-ը ենթակա են պարբերական կատարման մինչև 2022 թ.: Միջոցառումները բաժանված են երեք մեծ խմբերում, բովանդակային առումով ընդգրկում են կոռուպցիայի դեմ պայքարի երեք հիմնասյուները. կոռուպցիայի կանխարգելում, հակակոռուպցիոն կրթություն, պատժի անխուսափելիություն:

Իրականացման ենթակա գործողությունները ներկայացված են հինգ ոլորտներում՝ ներառելով ընդհանուր թվով 46 գործողություն, որոնցից 6-ը՝ Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի զարգացման, 25-ը՝ Կոռուպցիայի կանխարգելման, 8-ը՝ Կոռուպցիոն գործերի քննության, 6-ը՝ Հանրային իրազեկման և հակակոռուպցիոն կրթության և 1-ը՝ Մշտադիտարկման, հսկողության և դրա վերաբերյալ հանրային հաղորդակցության ոլորտներում:

Աղյուսակ 1. Հակակոռուպցիոն ռազմավարության ոլորտները և 2021 թվականին իրականացման ենթակա գործողությունների թիվը

Ոլորտներ	2021 թվականին իրականացման ենթակա գործողությունների թիվը
Ոլորտ 1: Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի զարգացում	6
Ոլորտ 2: Կոռուպցիայի կանխարգելում	25
Ոլորտ 3. Կոռուպցիոն գործերի քննություն	8
Ոլորտ 4. Հանրային իրազեկում և հակակոռուպցիոն կրթություն	6
Ոլորտ 5. Մշտադիտարկում, հսկողության և դրա վերաբերյալ հանրային հաղորդակցություն	1
Ընդամենը 2021 թվականին իրականացման ենթակա	46

Ներառական ռազմավարություն ունենալու անհրաժեշտությունից ելնելով՝ Ռազմավարությունը հատուկ կարևորում է հակակոռուպցիոն քաղաքականության իրագործման գործընթացին քաղաքացիական հասարակության և քաղաքացիների ակտիվ ներգրավվածությունը և հանրային վերահսկողության անհրաժեշտությունը: Այս տեսանկյունից հարկ է նշել, որ Ռազմավարությունը նախատեսում է միջոցառումների իրականացման նկատմամբ մշտադիտարկում՝ ինչպես պետության, այնպես էլ հասարակական կազմակերպությունների կողմից:

Այսպիսով, ի կատարումն Ռազմավարության միջոցառումների ծրագրի 48-րդ կետով սահմանված գործողության[1]՝ Իրավաբանների հայկական ասոցիացիան՝ համագործակցելով Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի հետ, ներկայացնում է ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառման ծրագրի 2021 թվականին իրականացման ենթակա գործողությունների կատարման մշտադիտարկման արդյունքները: Մշտադիտարկման հիմնական նպատակն է՝ Ռազմավարության միջոցառումների ծրագրի իրականացման ընթացիկ իրավիճակի և արձանագրված առաջընթացի գնահատումը: Մշտադիտարկման իրականացման համար իրականացվել են տեղեկատվության հարցումներ համապատասխան պետական գերատեսչություններից, ուսումնասիրվել են առկա փաստաթղթերը, մոնիթորինգային զեկույցները, ինչպես նաև իրականացվել է ութ ֆոկուս խմբային քննարկում գործողությունների իրականացման համար պատասխանատու պետական գերատեսչությունների և այլ շահագրգիռ կառույցներին, ինչպես նաև ՔՀԿ-ների, ոլորտային փորձագետների, իրավաբանների շրջանում: Մշտադիտարկման դաշտային աշխատանքներն իրականացվել են 2022 թվականի հունվար-փետրվար ամսին:

[1] Գործողությունը ներառում է՝ կոռուպցիայի, հանրային վստահության մակարդակի և հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ պարբերական հարցումների իրականացում հասարակության շրջանում, հարցումների արդյունքների հրապարակում:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ա. Մշտադիտարկման նպատակներ

Ռազմավարության գործողությունների ծրագրերի մշտադիտարկման և գնահատման նպատակներն են՝

1) գնահատել «ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի՝ 2021 թվականին իրականացման ընթակա գործողությունների կատարման ընթացիկ իրավիճակը և առաջընթացը,
2) պարզել այն գործողությունները, որոնք կատարվել են ժամկետների խախտմամբ, կատարվել են ամբողջությամբ, մասնակի կամ չեն կատարվել և դրանց պատճառները, իրականացման բացերը և թերությունները,
3) գնահատել Գործողությունների ծրագրի իրականացման գործընթացն ընտրված թիրախային ոլորտների համար՝ գործողությունների իրականացման որակական տեսանկյունից:

բ. Գնահատման աղյուսակ

Ընդհանուր առմամբ, ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի՝ 2021 թվականին իրականացման գործողությունները վերաբերում են հետևյալ խումբ գործողություններին՝

- օրենսդրական փաթեթների մշակում, շրջանառում և ներկայացում համապատասխան մարմիններ,
- հակակոռուպցիոն մարմինների, աշխատանքային խմբերի, մասնագիտացված դատարանների, հանձնաժողովների, վարչությունների ձևավորում և կարողությունների զարգացում,
- հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրերի, ներքին բարեվարքության գործողությունների ծրագրերի, վարքագծի տիպային կանոնների մշակում և իրականացում,
- պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության համակարգերի բարեփոխումներ,
- վերապատրաստման ծրագրերի մշակում և դրանց իրականացում,
- քաղաքացիների դիմումների, բողոքների ստացման համակարգերի, տվյալների թափանցիկության և հրապարակման համակարգերի, ներքին օպերացիոն համակարգերի արդիականացում և արդյունավետության բարձրացում,
- հակակոռուպցիոն գործիքակազմերի մշակում և ներդնում հանրային և մասնավոր ոլորտներում,
- Ռազմավարությամբ և դրանից բխող գործողությունների ծրագրերով նախատեսված միջոցառումների մշտադիտարկում:

ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագրի՝ 2021 թվականին իրականացման ենթակա

գործողությունների, ինչպես նաև դրանց սպասվող արդյունքների ուսումնասիրությունը թույլ է տալիս այս գործողությունների իրականացումը գնահատող ցուցանիշները բաժանել երկու խմբի, ինչպես ներկայացված է ստորև՝

Ընթացակարգային ցուցանիշներ

Ընթացակարգային ցուցանիշներն ընդհանուր առմամբ անդրադառնում են այն գործողություններին, որոնք ուղղված են որոշակի ընթացակարգերի ավարտին, օրինակ՝ իրավական փաստաթղթի նախագիծը Վարչապետի աշխատակազմ կամ Ազգային ժողով ներկայացնելը, վերլուծության կամ ուսումնասիրության իրականացումը և հաշվետվության հրապարակումը, հակակոռուպցիոն կանոնակարգերի ներդրումը և այլն: Ընթացակարգային ցուցանիշները վերաբերում են ելքային մակարդակի արդյունքներին և գնահատվում են արդյունքի վրա հիմնված մշտադիտարկման (անգլերեն՝ results-based monitoring) հիման վրա: Ակնկալվում է, որ 2021 թվականի ընթացքում իրականացվելիք գործողությունները գնահատման իրականացման ժամանակահատվածում, որն է՝ 2022 թվականի փետրվար-մարտ ամիսները, արդեն իսկ պետք է ավարտված լինեն: Համապատասխանաբար, մոնիթորինգը արձանագրում է, թե արդյոք գործողությունների ծրագրերով նախատեսված ընթացակարգերը ժամանակին իրականացվել են, և արդյոք կան սահմանված ժամկետից նշանակալի անհամապատասխանություններ և շեղումներ: Անհրաժեշտ է նշել, որ գործողությունների ծրագիրն ընդգրկում է հիմնականում ընթացակարգային ցուցանիշներ ենթադրող գործողություններ: Ընթացակարգային ցուցանիշների դեպքում մշադիտարկումն արձանագրում է՝ թե որ փուլում է գտնվում գործընթացը:

Ընթացակարգային ցուցանիշների կատարողականի գնահատման համար առանձնացվել են գնահատման հետևյալ կատեգորիաները՝

- **Գործողությունը կատարված է ամբողջությամբ –** գործողությունը գնահատվում է «կատարվել է ամբողջությամբ», եթե մշտադիտարկման խմբին ներկայացվել են կամ հասանելի են դարձել վկայող փաստեր (անգլերեն՝ evidence) առ այն, որ գործողությունը կատարվել է ամբողջությամբ ռազմավարության գործողությունների ծրագրով սահմանված ժամկետում:
- **Գործողությունը կատարվել է մասնակի** - գործողությունը գնահատվում է «կատարվել է մասնակի», եթե մշտադիտարկման խմբին ներկայացվել են կամ հասանելի են եղել վկայող փաստեր առ այն, որ գործողության կատարման ուղղությամբ արձանագրվել է նշանակալի առաջընթաց, սակայն այն դեռևս ամբողջությամբ ավարտված չէ:
- **Գործողությունը չի կատարվել** - գործողությունը գնահատվում է «չկատարված», եթե գործողության արդյունքային ցուցանիշը չի կատարվել մշտադիտարկման պահի դրությամբ (փետրվար 2022 թվական) կամ տվյալ գործողության վերաբերյալ մշտադիտարկման խմբին որևէ տեղեկատվություն չի տրամադրվել:
- **Առկա չէ տեղեկատվություն** - գործողությունը գնահատվում է «առկա չէ տեղեկատվություն», եթե գործողության վերաբերյալ մշտադիտարկման խմբին տրամադրվել է որոշակի տեղեկատվություն, սակայն այն բավարար չէ

գնահատելու գործողության կատարման կարգավիճակը և/կամ ժամկետները և այդ կապակցությամբ լրացուցիչ տեղեկություններ չեն տրամադրվել:

- **Գործողությունը կասեցված է -** գործողությունը գնահատվում է «կասեցված է», եթե գործողության կատարման ընթացքում հայտնի են դարձել հանգամանքներ, որոնք որոշակի ժամանակահատվածում անհնար են դարձնում գործողության կատարումը և գործողության կասեցված լինելը ամրագրվել է իրավական որևէ փաստաթղթում կամ որոշմամբ:

Յուրաքանչյուր ոլորտի համար այս գնահատման ընթացքում փորձագիտական թիմի կողմից հաշվարկվել է **կատարողական ցուցանիշ**, որն իրենից ներկայացնում է «ամբողջությամբ կատարված» գործողությունների հարաբերակցությունը տվյալ ոլորտում հաշվետու ժամանակահատվածում նախատեսված ընդհանուր գործողությունների թվին:

〉 Որակական ցուցանիշներ

Որակական ցուցանիշներն անդրադառնում են **ազդեցության մակարդակի արդյունքներին** և Գործողությունների ծրագրերի ներքո իրականացվող գործողությունը կապում են սպասվող արդյունքների և ռազմավարական նպատակների հետ: Այս ցուցանիշները գնահատվելու են մոնիթորինգային խմբի փորձագետների կողմից և վերաբերելու են ընդունված, մշակված իրավական ակտերի համապատասխանությանը գործողությունների ծրագրերով նախանշված ոլորտներին, ռազմավարական նպատակներին, սպասվող արդյունքներին և ելքային իրավիճակում ներկայացված խնդիրների հասցեագրման պոտենցիալին: Ի լրումն, այս ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը համադրվել է ՖԽՔ-ների և խորացված հարցազրույցների արդյունքում դուրսբերված տեղեկատվության հետ: Այս ցուցանիշների կատարողականի գնահատման համար առանձնացվել է գնահատման մեկ չափորոշիչ, այն է համապատասխանության չափորոշիչը:

Համապատասխանության չափորոշիչը վերաբերում է նրան, թե արդյոք իրավական ակտերում կամ օրենսդրական նախագծերում իրականացված փոփոխությունների ուղղությունը համապատասխանում է ռազմավարական նպատակներով սահմանված փոփոխությունների ուղղությանը: Եթե այո, ապա գործողությունը գնահատվում է «համապատասխանում է»: Եթե նշված ուղղություններից գոնե մեկով առկա է անհամապատասխանություն, ապա գործողությունը գնահատվում է «չի համապատասխանում»: Այս զեկույցի շրջանակներում որակական գնահատման է ենթարկվել մեկ գործողություն, այն է՝ «Գործողություն 2. Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման, քննության գործառույթներով օժտված և անկախության բավարար երաշխիքներ ունեցող հակակոռուպցիոն իրավապահ մարմնի՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ձևավորում և բնականոն գործունեության ապահովում» գործողությունը՝ Ոլորտ 1-ի՝ «Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի զարգացում» ներքո:

գ. Գնահատման մեթոդներ

Հետազոտական նպատակներին հասնելու համար կիրառվել է **մեթոդների համադրման մոտեցումը**: Տվյալները հավաքագրվել են առաջնային և երկրորդային աղբյուրներից: Հետազոտության մեթոդները ներառում են տեղեկատվության հարցումը, գրասենյակային ուսումնասիրությունը/փաստաթղթերի վերլուծությունը, ֆոկուս խմբային քննարկումները շահագրգիռ կողմերի հետ և փորձագիտական հարցազրույցները: Դաշտային աշխատանքներն իրականացվել են 2022 թվականի փետրվար-մարտ ամիսներին:

Հաշվի առնելով համաճարակային իրավիճակը երկրում՝ տեղում դեմ առ դեմ հարցազրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ չեն իրականացվել, այլ քննարկումներն իրականացվել են առցանց՝ «Zoom» հարթակի միջոցով: Հետազոտության առանձին մեթոդները ներկայացված են ստորև.

Գրասենյակային ուսումնասիրություն/փաստաթղթերի վերլուծություն և տեղեկատվության հարցում: 2021 թվականի ընթացքում իրականացվելիք գործողությունների վերաբերյալ տեղեկատվությունը հավաքագրվել է գրասենյակային ուսումնասիրության/փաստաթղթերի վերլուծության և տեղեկատվության հարցման միջոցով: Այս մեթոդների միջոցով տեղեկատվություն է հավաքագրվել **ելքային մակարդակի ցուցանիշների** վերաբերյալ:

Ընդհանուր առմամբ, 40-ից ավել տեղեկատվության հարցում է ուղարկվել թվով 20 պետական և այլ շահագրգիռ կառույցների, որոնց վերաբերյալ արդյունքները ներկայացված են ստորև աղյուսակով:

Աղյուսակ 2.Մշտադիտարկման իրականացման նպատակով տեղեկատվության հարցումներ ստացած իրավասու մարմինները/կառույցները և մարմինները և համագործակցության բնույթը

	Տեղեկատվություն տրամադրած իրավասու մարմինները/կառույցները	Տեղեկատվություն տրամադրումը մերժած իրավասու մարմինները/կառույցները
	Վարչապետի աշխատակազմ	Բարձրագույն դատական խորհուրդ *(Մշտադիտարկման իրականացման ընթացքում ԲԴԽ-ը և Դատական դեպարտամենտը չեն ապահովել հանրային հաշվետվողականություն, չեն տրամադրել հայցվող տեղեկատվությունը և հրաժարվել են համագործակցել մշտադիտարկումն իրականացնող խմբի հետ)*
	Արդարադատության նախարարություն	
	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով	
	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	
	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	
	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	
	Ֆինանսների նախարարություն	
	Քաղաքացիական ծառայության գրասենյակ	
	Կենտրոնական բանկ	
	Հակակոռուպցիոն կոմիտե	
	Արդարադատության ակադեմիա	
	ԷԿԵՆԳ ՓԲԸ	

	Ազգային ժողով	
	Ոստիկանություն	
	Գլխավոր դատախազություն	
	Հատուկ քննչական ծառայություն	
	Քննչական կոմիտե	
	Ազգային անվտանգության ծառայություն	
	Մարդու իրավունքների պաշտպան	
	Էկոնոմիկայի նախարարություն	
	Մրցակցության պաշտպանության հանձնաժողով	
	Կենտրոնական ընտրական հանձնաժողով	
Ընդհանուր	**23**	**1**

Առցանց հարցազրույցներ առանցքային տեղեկատուների հետ և ՖԽՔ-ներ: <u>Ընթացակարգային ցուցանիշները</u> գնահատվել են հետազոտական որակական մեթոդների միջոցով, մասնավորապես, առանցքային տեղեկատուների հետ հարցազրույցների և ՖԽՔ-ների միջոցով:

Առանցքային տեղեկատուների հետ հարցազրույցները և ՖԽՔ-ները իրականացվել են այն կոնտակտային անձանց հետ, ովքեր ներգրավված են ռազմավարության գործողություններում որպես կատարող կամ համակատարող կողմ՝ ներառելով հաշվետու ժամանակահատվածում իրականացման ենթակա բոլոր գործողությունները: ԱՏՀ-ները և ՖԽՔ-ներն իրականացվել են այդ գործողությունների իրականացման համար պատասխանատու պետական մարմինների, այլ շահագրգիռ կառույցների, ինչպես նաև Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի անդամների, ՔՀԿ ներկայացուցիչների, իրավաբանների, փաստաբանների, և անհատ փորձագետների հետ: Ընդհանուր թվով իրականացվել է 8 ՖԽՔ, որոնցից 4-ը պետական գերատեսչությունների ներկայացուցիչների, 4-ը՝ ՔՀԿ-ների ներկայացուցիչների, իրավաբանների, փաստաբանների հետ՝ ներառելով մասնակիցներ ինչպես Երևանից, այնպես էլ մարզերից: Ընդհանուր թվով իրականացվել է 6 ԱՏՀ՝ ոլորտային փորձագետների հետ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՈԼՈՐՏ 1: ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

2021թ.	
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	6
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	1
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻ	4
ՈՐԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ	1
ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ	17%

Գործողություն 1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ձևավորում և բնականոն գործունեության ապահովում:

No.	Գործողություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
1	Հանձնաժողովի գործառույթների շրջանակների ընդլայնման վերաբերյալ օրենսդրական փաթեթը ներկայացվել է Ազգային ժողով: Աշխատակազմի հաստիքների թիվն ավելացել է:	ՀՀ ԱՆ Վարչապետի աշխատակազմ ՀՀ ազգային ժողով (համաձայնությամբ) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)	**Ամբողջությամբ կատարված է:** Հանձնաժողովի լիազորությունների ընդլայնմանն ուղղված օրենսդրական փաթեթը Ազգային ժողովի կողմից ընդունվել է: Իրավական ակտերի փոփոխության արդյունքում ավելացել է Հանձնաժողովի հաստիքների թիվը:

Համաձայն «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն Ն որոշմամբ 2021 թվականին կատարման ենթակա միջոցառումների իրականացման մասին» հաշվետվության (այսուհետ՝ ԱՆ 2021թ. մշտադիտարկման հաշվետվություն),[2] սույն միջոցառման շրջանակներում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ ԿԿՀ կամ Հանձնաժողով) լիազորությունների ընդլայնմանն ուղղված օրենսդրական փաթեթն ԱԺ-ի կողմից ընդունվել է 2021 թվականի հունվարի 19-ին: Զուգահեռաբար, իրավական ակտերի փոփոխության արդյունքում ընդլայնվել է Հանձնաժողովի հաստիքները՝ 40-ից հասնելով 55-ի:

[2] Վերոնշյալ հաշվետվությունների առցանց տարբերակները հնարավոր է գտնել հետևյալ հղմամբ՝ https://www.moj.am/legal/browse/h_reports/

Շահագրգիռ մարմինների հետ ՖԽՔ-ի ժամանակ արդրադարձ կատարվեց պաշտոնատար անձանց բարեվարքության վերաբերյալ ԿԿՀ-ի տված եզրակացությունների գաղտնիությանը: Այսպես, ԿԿՀ-ի կողմից հրապարակվող հաշվետվությունների մեջ բարեվարքության գնահատում անցած անձանց մասին տեղեկատվություն չի հրապարակվում, այն պարունակում է ընդհանուր բնույթի տեղեկատվություն տարվա ընթացքում բարեվարքության եզրակացությունների թվի, դրանց առնչությամբ որոշում կայացնող մարմնի գերատեսչությունների թվի վերաբերյալ: Պետական համապատասխան մարմինների ներկակայացուցիչների կողմից նշվեց, որ այս թեմայով բազմիցս քննարկումներ են եղել, այդ թվում միջազգային գործընկերների հետ: Ներկայումս քննարկվում է եզրակացության եզրափակիչ մասի հրապարակման նպատակահարմարությունը, քանի որ եզրակացության ամբողջական հրապարակումը խնդրահարույց է համարվում անձնական տվյալների պաշտպանության տեսանկյունից:

Ինչ վերաբերում է վիճակագրությանը, ապա 2021 թվականի ընթացքում իրականացվել է պետական պաշտոնի հավակնող 141 անձի բարեվարքության ուսումնասիրություն, ինչի արդյունքում համապատասխան մարմիններ է ներկայացվել խորհրդատվական բնույթի 134 եզրակացություն: 2021 թվականի առաջին կիսամյակում կատարվել է 15 անձի բարեվարքության ուսումնասիրություն, երկրորդ կիսամյակում՝ 136 անձի: Առաջիկայում նախատեսվում է դատավորների մասով 45, դատավորների թեկնածուների, Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ և ինքնավար պաշտոն զբաղեցնող միջինում 150 անձանց բարեվարքության շուրջ ուսումնասիրություն կատարել: 2021 թվականի սկզբին ապօրինի ծագում ունեցող գույքի հարցերով դատախազների թեկնածուներից և դատավորների թեկնածուներից բացի ավելացել են բոլոր ատյանների դատավորները, դատախազի առաջխաղացման ցուցակում ընդգրկված բոլոր թեկնածուները, նաև Հակակոռուպցիոն կոմիտեում մասնագիտական պաշտոն զբաղեցնող անձինք: Հանձնաժողովում բարեվարքության ստուգման ենթակա անձանց թվի նշանակալի աճի հետ է կապված մարդկային ռեսուրսների բաշխման խնդիրը: Ստացվում էր, որ մեկ աշխատողը միջինում մեկ ամսվա ընթացքում պետք է կատարեր 60 հոգու բարեվարքություն ստուգում, ինչը արդյունավետ և ճշգրիտ լինել չի կարող: Ուստի առաջացել է հաստիքացուցակը համալրելու կարիք: Սրա կապակցությամբ, ՖԽՔ-ի ժամանակ հարց բարձրացվեց, թե Հանձնաժողովի կողմից Ռազմավարության միջոցառումների ծավալի վերջնական կատարման համար կա արդյոք որոշակի հատկորոշած սահման, ըստ որի արդեն գործի են դրվում գնահատման ցուցիչները, և արդյոք կա հատուկ հաշվարկ թե՝ ինչպիսի և որքան ռեսուրս է (այդ թվում՝ և՛ մարդկային, և՛ ֆինանսական, և՛ նյութատեխնիկական) հարկավոր Հանձնաժողովին՝ իրենց վերապահված գործառույթները ամբողջապես իրականացնելու համար: Ի պատասխան ԿԿՀ-ի նախագահը նշեց, որ հաստիքակազմի ցուցակի կազմումը կատարվել է նվազագույն տարբերակով: Սակայն, ԿԿՀ-ի լիազորությունների ընդլայմանը զուգահեռ կարիք է առաջանում մեծացել նաև տարբեր վարչությունների աշխատողների թիվը, օրինակ՝ բարեվարքության ստուգման և հայտարարագրերի վերլուծության վարչությունները:

Խոսելով ԿԿՀ-ի ինստիտուցիոնալ անկախության, դրա իրավական կարգավիճակի փոփոխման, ինչպես նաև գործունեության արդյունավետության մասին, նշվեց, որ ներկայումս քննարկումներ են տարվում ԿԿՀ-ի անձնակազմի համալրման, բյուջեի ձևավորման, իրավական կարգավիճակի փոփոխման շուրջ՝ որպես ինստիտուցիոնալ անկախության երաշխիք:

Շահագրգիռ կողմերի (ՔՀԿ-ներ, փաստաբաններ, իրավաբաններ) ՖԽՔ-ի ընթացքում քննարկվեցին մի շարք հարցեր, որոնք վերաբերում էին Հանձնաժողովի աշխատանքի թափանցիկությանը, իրավասություններին, կատարված աշխատանքների արդյունքներին և այլն: Մասնավորապես, շահագրգիռ կողմերը նշեցին, որ անհրաժեշտություն կա բարելավել Հանձնաժողովի աշխատանքի թափանցիկությունը և տեսանելիությունը, հանրության հետ աշխատանքը: Համաձայն մասնակիցների՝ Հանձնաժողովը կարիք ունի պարբերաբար ներկայանալ հանրության առջև՝ իր կատարած աշխատանքների արդյունքներով:

Այսպիսով՝ **գործողությունը կատարված է ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ:**

Գործողություն 2. Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման, քննության գործառույթներով օժտված և անկախության բավարար երաշխիքներ ունեցող հակակոռուպցիոն իրավապահ մարմնի՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ձևավորում և բնականոն գործունեության ապահովում:

No.	Գործողություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
2	Հակակոռուպցիոն կոմիտեն ձևավորվել է: Հակակոռուպցիոն կոմիտեին տրամադրվել է առանձին տարածք, բյուջետային ինքնուրույն ֆինանսավորում, գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գործիքակազմ:	ՀՀ ԱՆ ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) ՀՀ քննչական կոմիտե (համաձայնությամբ) ՀՀ հատուկ քննչական ծառայություն (համաձայնությամբ) ՀՀ ոստիկանություն ՀՀ ֆինանսների նախարարություն	**Կատարված է մասնակի:** Հակակոռուպցիոն կոմիտեն ձևավորվել է: Կոմիտեին տրամադրվել է առանձին տարածք, բյուջետային ինքնուրույն ֆինանսավորում, գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գործիքակազմ: Մասնագիտացված ստորաբաժանումների աշխատակիցները չեն վերապատրաստվել:

Ինչպես ներկայացված է ԱՆ 2021թ. մշտադիտարկման հաշվետվությունում, ԱԺ-ի կողմից ընդունվել են Հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծմանն ուղղված օրենսդրական ակտերը, Հակակոռուպցիոն կոմիտեն ձևավորվել է, վերջինիս տրամադրվել է առանձին

տարածք, բյուջետային ինքնուրույն ֆինանսավորում, գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գործիքակազմ: Միևնույն ժամանակ, ներկայացված է, որ մասնագիտացված ստորաբաժանումների աշխատակիցները չեն վերապատրաստվել:

Ըստ նույն աղբյուրի՝ 2021 թ. սեպտեմբերի 16-ի որոշմամբ Կոմիտեի նախագահը նշանակվել է: 30 անձանց ինքնավար պաշտոններում նշանակվելուց հետո սկսվել է Կոմիտեի գործունեությունը: Ըստ Կոմիտեի տրամադրած տեղեկության՝ ինքնավար պաշտոններում նշված նշանակումները կատարվել են ժամանակավորապես և տվյալ պաշտոնը զբաղեցնող անձինք համարվում եմ պաշտոնակատարներ: Կոմիտեի նախագահի կողմից ընդունված ակտերի հիման վրա ձևավորվել է նաև Մրցութային հանձնաժողով, որը աշխատանքներ էր կատարում Կոմիտեի քննիչների համալրման ուղղությամբ:

ՖԽՔ-ի ընթացքում մշտադիտարկման մասնակից փորձագետներից մեկի կողմից բարձրացվեց մտահոգություն այն մասին, որ «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում փոփոխություններ են կատարվել, որով Կառավարությանը վերապահվել է Հակակոռուպցիոն կոմիտեի (այսուհետ՝ ՀԿԿ կամ Կոմիտե) նախագահի նշանակումը, իսկ Կոմիտեի նախագահի տեղակալները նշանակվում և ազատվում են Վարչապետի որոշմամբ: Կոմիտեի նախագահի դեպքում մրցութային խորհուրդը կազմում է մրցույթում հաղթող ճանաչվածների ցուցակ, որտեղ ներառվում են միավորների հանրագումարի արդյունքով առավելագույն միավորներ ստացած առնվազն երկու և առավելագույնը երեք թեկնածուները, բացառությամբ այն դեպքերի, երբ մրցույթին մասնակցելու հայտ է ներկայացրել մեկ թեկնածու: Ստացվում է, որ Կառավարությանը տրվում է հայեցողական իրավունք՝ Կոմիտեի նախագահին նշանակելու հարցում: Այն ինչ, օբյեկտիվ և անկախ կլիներ, երբ Կառավարությանը ներկայացվեր մրցութային խորհրդի կողմից հաստատված մեկ անձի թեկնածություն, և Կառավարությունը ուղղակի կատարեր արարողակարգային բնույթի նշանակում, և ոչ թե օժտվեր հայեցողական որոշում կայացնելու իրավասությամբ: Կան նաև մտավախություններ, որ այս փոփոխություններով Կառավարությունը Կոմիտեի նախագահի նշանակումը հնարավոր է կատարել է Վարչապետի միանձնյա որոշման հիման վրա:

Հարց բարձրացվեց, թե ինչով է բացատրվում այս փոփոխությունը, երբ Ռազմավարությամբ նախատեսված էր օրենքի ընդունում, որով էլ այս գործընթացը պետք է կարգավորված լիներ, իսկ փոխարենը, փաստացի, անտեսվում են ռազմավարական մոտեցումները՝ ժամանակային լուծումներով: Նշվածի վերաբերյալ դիրքորոշում է հայտնել նաև Կոմիտեն, ըստ որի՝ թե՛ Կոմիտեի ծառայողների, և թե՛ Կոմիտեի նախագահի մրցութային կարգով ընտրության համար «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքով նախատեսված կարգավորման մեխանիզմները լիարժեք ապահովում են Կոմիտեի քաղաքական և ինստիտուցիոնալ անկախությունը:

Պետական մարմինների հետ ՖԽՔ-ի ընթացքում մշտադիտարկման մասնակից փորձագետներից մեկի կողմից հարց բարձրացվեց ՀԿԿ նախագահի ընտրության մասով առ այն, թե արդյոք լիակատար կատարվել է բարեվարքության ստուգում՝ նշանակված

Կոմիտեի նախագահի վերաբերյալ: Հնչած հարցերին ի պատասխան ԿԿՀ-ից հայտնեցին, որ բարեվարքության ստուգման փաստաթղթերն այս պահին գաղտնիության ռեժիմի պայմաններում հրապարակային չեն: Այնուամենայնիվ, բարեվարքության ստուգման ուսումնասիրությունը կատարվել է ամբողջական բաղադրիչներով՝ նույն հարցաթերթիկների կիրառմամբ: Նշվեց նաև, որ Կոմիտեի գործունեությունը հնարավորինս արագ գործարկելու համար անհրաժեշտ են եղել ժամանակավոր լուծումներ, քանի որ քննիչների ընտրության փուլերն իրականացնելը բավականին երկար գործընթաց է:

Շահագրգիռ կողմերի հետ ՔՖԽ-ի ընթացքում Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի անդամները վերահաստատեցին իրենց նախկինում հրապարակած այն դիրքորոշումը, որ ՀԿԿ նախագահի ընտրության համար ձևավորված մրցութային խորհուրդը և անցկացված մրցույթը շղարշային էր:[3]
Ըստ Հաշվետվության՝ ՀԿԿ-ի ձևավորմանն ուղղված իրավական ակտերը քննարկվել են շահագրգիռ մարմինների և ՔՀԿ-ների հետ: «Հակակոռուպցիոն կոմիտեիմասին» օրենքը և հարակից օրենքների փաթեթը ներկայացվել է հանրային քննարկման իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական հարթակում՝ www.e-draft.am կայքում, նախագծերի վերաբերյալ կազմակերպվել են հանրային քննարկումներ: Այդուհանդերձ, պետք է նշել, որ շահագրգիռ կողմերը մտահոգություն հայտնեցին առ այն, որ մեկ հարց է, որ նախագծերը ներկայացվում են հանրային քննարկման, և բոլորովին այլ, երբ իրավասու մարմինները հաշվի չեն առնում ՔՀԿ-ների կողմից այդ քննարկումների արդյունքում ներկայացված առաջարկությունները և դիտարկումները:

Այսպիսով՝ **գործողությունը կատարված է ՄԱՍՆԱԿԻ:**

Գործողություն 3. Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների ստեղծում:

No.	Գործողություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
3	Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանները ձևավորվել են: Ապահովված են բավարար մարդկային, վարչական և նյութական ռեսուրսներ մասնագիտացված	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ ազգային ժողով (համաձայնությամբ) Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)	**Կատարված է մասնակի:** Հակակոռուպցիոն դատարանի ձևավորման, ինչպես նաև, կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող դատավորների նշանակման ուղղված օրենսդրական ակտերն ընդունվել են, անհրաժեշտ ԲԴԽ ընթացակարգային որոշումներն ընդունվել են: Միաժամանակ, սույն միջոցառման դեպքում հարկ է հաշվի առնել, որ աշխատանքների կատարումը ձգձգվել է

[3] https://armla.am/48868.html

	դատարանների գործունեության ապահովման համար:	Արդարադատության ակադեմիա	Հակակոռուպցիոն դատարանի ստեղծմանն ուղղված օրենսդրական ակտերի փաթեթի սահմանադրականության վիճարկման, դրա արդյունքում օրենսդրական ակտերի փաթեթի՝ նախատեսված ժամկետից ուշ ուժի մեջ մտնելու հետևանքով:

ՀՀ ԱԺ-ի կողմից 2021 թվականի ապրիլի 14-ին երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել են «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքը և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքները, որոնցով նախատեսվում է Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանի ստեղծումը: Մասնավորապես, Օրենքի համաձայն՝ Դատարանը գործելու է առնվազն 15 դատավորի թվակազմով, որից առնվազն 10-ը պետք է լինեն կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերով մասնագիտացմամբ, իսկ առնվազն 5-ը՝ հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով մասնագիտացմամբ դատավորներ: Համապատասխանաբար ավելացվելու է նաև վերաքննիչ և վճռաբեկ դատարանների թվակազմը:

Օրենքների փաթեթը ՀՀ նախագահի կողմից 2021 թվականի մայիսի 6-ին ներկայացվել է Սահմանադրական դատարան՝ վերջինիս Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով: Սույն թվականի հոկտեմբերի 12-ի նիստում ձայների հավասարության հետևանքով ըստ էության Սահմանադրական դատարանի կողմից որոշում չի ընդունվել: Նշվածով պայմանավորված՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 9-րդ մասի կարգավորումների համատեքստում դիմումը համարվել է մերժված, և քննարկվող իրավական ակտերը ուժի մեջ են մտել 2021 թվականի հոկտեմբերի 29-ին:

Այսպիսով, Հակակոռուպցիոն դատարանի ձևավորման, ինչպես նաև, կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայումն իրականացնող դատավորների նշանակման ուղղված օրենսդրական ակտերն ընդունվել են, անհրաժեշտ ԲԴԽ ընթացակարգային որոշումներն ընդունվել են: Միաժամանակ, սույն միջոցառման դեպքում հարկ է հաշվի առնել, որ աշխատանքների կատարումը ձգձգվել է Հակակոռուպցիոն դատարանի ստեղծմանն ուղղված օրենսդրական ակտերի փաթեթի սահմանադրականության վիճարկման, դրա արդյունքում օրենսդրական ակտերի փաթեթի՝ նախատեսված ժամկետից ուշ ուժի մեջ մտնելու հետևանքով:

Ինչպես ցույց է տալիս գործողության իրականացման համար պատասխանատու պետական մարմինների հետ ՖԽՔ-ը, գործողության ոչ լիարժեք կատարումը կապված է դրա սահմանադրականության վիճարկման հետ: 2021 թվականի դեկտեմբերի վերջին ԲԴԽ-ն հրապարակել էր հայտարարություն, որով հրավիրում էր միջազգային փորձագետներին ներգրավվել գործընթացում: Սկսվել է դատավորների թեկնածուների ընտրության գործընթացը: Դեկտեմբերի 10-ին և 11-ին անցկացվեցին գրավոր փուլերը: Մշտադիտարկման իրականացման պահին այն գտնվում էր ամփոփման փուլում: Ըստ ժամանակացույցի՝

նախատեսվում է, որ 2022 թվականի մայիսին հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանը ստեղծված կլինի և կսկսի իր գործունեությունը: Դատավորների բարեվարքության ստուգումը իրականացնում է ԿԿՀ-ն: Իսկ համապատասխան վերապատրաստումներ կանցկացվեն դատարանի ձևավորումից հետո:

Այսպիսով՝ **գործողությունը կատարված է ՄԱՍՆԱԿԻ:**

Գործողություն 4. ՀՀ Գլխավոր դատախազությունում կոռուպցիոն հանցագործությունների քննության նկատմամբ վերահսկողություն իրականացնող վարչության ստեղծում:

No.	Գործողություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
4	ՀՀ Գլխավոր դատախազությունում ստեղծվել է կոռուպցիոն հանցագործությունների քննության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչություն:	ՀՀ Գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) ՀՀ արդարադատության նախարարություն Արդարադատության ակադեմիա	**Կատարված է մասնակի:** Գլխավոր դատախազության կազմում ստեղծվել է ՀՀ հակակոռուցպիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչություն:

Համաձայն ԱՆ 2021թ. մշտադիտարկման հաշվետվության, 2021 թվականի նոյեմբերի 22-ին Գլխավոր դատախազի 2021 թվականի նոյեմբերի 16-ի N 87 հրամանով Գլխավոր դատախազության կազմում ստեղծվել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունը, մինչև հաշվետու ժամանակաշրջանի ավարտը նշված վարչության համալրված հաստիքների 85%-ն արդեն համալրված է, դատախազների 40%-ը անցել են համապատասխան վերապատրաստումներ: Զուգահեռաբար շուրջ 230 դատախազներ անցել են վերապատրաստումներ կոռուպցիայի դեմ պայքարի և կոռուպցիոն հանցագործությունների քննությանն առնչվող թեմաներով: Այսպիսով, տվյալ միջոցառման շրջանակներում 2021 թվականի համար նախատեսված աշխատանքները կատարվել են մասնակի՝ նկատի ունենալով, որ չի ապահովվել սահմանված քանակի դատախազների վերապատրաստումը:

Համաձայն «Դատախազության մասին» օրենքում առկա հատուկ պահանջի՝ վարչությունում աշխատելու համար իրականացվելու է դատախազների բարեվարքության ստուգում: Ըստ ՀՀ գլխավոր դատախազության ներկայացուցչի՝ Գլխավոր դատախազը նշանակում կատարելուց առաջ նաև հաշվի է առնում Հանձնաժողովի կողմից կատարված բարեվարքության եզրակացությունները: Նախատեսվում էր 13 հաստիք, որից համալրվել է 9 հաստիքը:

Գործողության իրականացման համար պատասխանատու պետական մարմինների հետ ՖԽՔ-ի ընթացքում ներկայացվեց, որ 2019 թվականի հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին տեղի ունեցան դատախազության կառուցվածքային փոփոխություններ՝ պայմանավորված ոչ միայն կոռուպցիոն հանցագործությունների քննության նկատմամբ վերահսկողություն իրականացնող վարչության ստեղծմամբ, այլ ուղղված դատախազների ճիշտ և արդյունավետ գործունեությանը՝ թե՛ անվանական, թե՛ բովանդակային փոփոխություններից բխող: Այնուհետև ընդունվեց օրենսդրական փոփոխությունների փաթեթ, որի բաղկացուցիչ մասն էր կազմում Գլխավոր դատախազությունում կոռուպցիոն հանցագործությունների քննության նկատմամբ վերահսկողություն իրականացնող վարչության ստեղծումը: ՖԽՔ-ի ընթացքում ներկայացվեց նաև, որ Ռազմավարությամբ սահմանված Գլխավոր դատախազությունում կոռուպցիոն հանցագործությունների քննության նկատմամբ վերահսկողություն իրականացնող վարչության ստեղծումից հետո թվով 3 դատախազներ Արդարադատության ակադեմիայում արդեն անցել են համապատասխան վերապատրաստումներ:

Ինչ վերաբերում է գործողության իրականացման ժամկետների խախտմանը, պարզվեց, որ կոռուպցիոն հանցագործությունների քննության նկատմամբ վերահսկողություն իրականացնող վարչության ստեղծումը իրականացվել է 2021 թվականի երկրորդ կիսամյակում, քանի որ օրենսդրական փաթեթում առկա էր նաև բարեվարքության ստուգման պահանջ սահմանելու կարգավորումը: Այդ փաթեթը հակակոռուպցիոն դատարանի ստեղծմանն ուղղված փաթեթի շրջանակներում է ներառված եղել: Քանի որ օրենսդրական այդ ակտերը ամբողջությամբ են Սահմանադրական դատարանում վիճարկվել, «Դատախազության մասին» օրենքի համապատասխան փոփոխությունը ևս վիճարկման առարկա է դարձել, ինչի արդյունքում վարչությունը ստեղծվել է երկրորդ կիսամյակում:

Շահագրգիռ կողմերի հետ (ՔՀԿ-ներ, փաստաբաններ, իրավաբաններ) ֆոկուս խմբային քննարկման ընթացքում կարծիք ներկայացվեց, որ դատախազների ընտրության մրցույթներում մրցութային հանձնաժողովի անդամների կազմում է նաև ՀԿ սկետորի ներկայացուցիչը, ինչը երաշխիքներ է ստեղծում մրցույթներում հանրային մասնակցության և դրանց նկատմամբ հանրային վերահսկողության ապահովման տեսանկյունից:

Այսպիսով՝ **գործողությունը կատարված է ՄԱՍՆԱԿԻ:**

Գործողություն 5. Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման համար պատասխանատու մարմինների, հասարակական կազմակերպությունների կարողությունների զարգացում:

No.	Գործողություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք

5	ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականությունը մշակող համապատասխան ստորաբաժանման աշխատակիցները, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները՝ պարբերաբար վերապատրաստվում են: Իրավասու ստորաբաժանումների գործառույթները հստակ տարանջատված են:	ՀՀ Վարչապետի աշխատակազմ ՀՀ ԱՆ Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	**Կատարված է մասնակի:** Արդարադատության նախարարության համապատասխան ստորաբաժանման կարողությունների զարգացման նպատակով իրականացվել են աշխատակիցների վերապատրաստումներ: Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների համար վերապատրաստումներ չեն անցկացվել:

Համաձայն ԱՆ 2021թ. մշտադիտարկման հաշվետվության, սույն միջոցառման իրականացման շրջանակներում Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման համար պատասխանատու մարմնի՝ Արդարադատության նախարարության համապատասխան ստորաբաժանման կարողությունները շարունակաբար զարգանում են, աշխատակիցները վերապատրաստումների են մասնակցում:

Ըստ վերը նշված հաշվետվության՝ կարողությունների զարգացման նպատակով հաշվետու ժամանակահատվածում վարչության աշխատակիցները մասնակցել են թվով 7 միջոցառումների հետևյալ թեմաներով.

1. «Զարգացման ծրագրերի մոնիթորինգ և գնահատում» խորագրով դասընթաց,
2. Հակակոռուպցիոն և բարեվարքության հարցերով վերապատրաստողների դասընթաց,
3. «Ժամանակի արդյունավետ կառավարում» դասընթաց,
4. «Գույքի հայտարարագրերի էլեկտրոնային համակարգ և կարմիր դրոշակներ» խորագրով տարածաշրջանային առցանց դասընթաց,
5. «Առանց մեղադրական դատավճռի առգրավման և բռնագանձման գործիքների օգտագործումը» խորագրով տարածաշրջանային առցանց դասընթաց,
6. «Իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների թափանցիկության խթանումը» խորագրով միջազգային առցանց դասընթաց,
7. «Հանրային կառավարման ոլորտում կոռուպցիայի կանխարգելում և հակազդում, խարդախության կանխարգելում, դրանց շրջանակում ԵՄ փորձը» առցանց դասընթաց, որը կազմակերպվել էր ԵՄ թվինինգ ծրագրի շրջանակներում Եվրոպական Միության Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակի կողմից:

Նախատեսվում է նաև ՄԱԿ-ի կողմից ներգրավել ազգային փորձագետի, որը կաջակցի ՀՀ ԱՆ-ին՝ հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման ոլորտում կարողությունների ամրապնդման և կատարելագործման գործում:

Պետք է նշել, որ այս գործողության լայն ձևակերպված լինելու հանգամանքը թույլ չի տալիս գնահատել, թե արդյոք ԱՆ-ի համապատասխան ստորաբաժանման կարողությունները զարգացել են, թե՝ ոչ: Ուստի, կարծում ենք, որ Ռազմավարությամբ նման միջոցառումներ նախատեսելու դեպքում անհրաժեշտ է սահմանել գործողության իրականացումը գնահատելու համար անհրաժեշտ ցուցիչներ:
ՀԿ-ների ներկայացուցիչների համար վերապատրաստումներ անցկացնելու ուղղությամբ որևէ շոշափելի գործողություն չի կատարվել, ինչը հաստատվեց նաև ՖԽՔ-ների ընթացքում:

Գործողության իրականացման համար պատասխանատու պետական մարմինների հետ ՖԽՔ-ի ընթացքում ներկայացվեց, որ 2022 թվականին նախատեսվում է ՀԿ-ների ներկայացուցիչների հետ իրականացնել կարողությունների զարգացման միջոցառումներ: Դոնորներից և տարբեր կազմակերպություններից, որոնց հետ ՀՀ-ը համագործակցում է, պարբերաբար ստանում են դասընթացներ կազմակերպելու հրավերներ (նվազագույնը 2 ամիսը մեկ)՝ նախարարության և այլ մարմինների ներկայացուցիչների համար: Հաճախ հակակոռուպցիոն վարչության ողջ անձնակազմը մասնակցում է դրանց: Կարիքը որոշվում է ըստ անձի կատարած գործառույթի:

Հնչեց առաջարկություն զուգակցել ուսուցումները և դոնորների կողմից պետական մարմինների համար կատարվող միջոցառումները: Օրինակ, դոնորները կատարում են պետական մարմինների ներկայացուցիչների համար բաց տվյալներից օգտվելու դասընթաց և կարելի է դրանք նաև կազմակերպել ՀԿ-ների և ԶԼՄ-ների համար:

Շահագրգիռ կողմերի հետ (ՔՀԿ-ներ, փաստաբաններ, իրավաբաններ) ՖԽՔ-ի ընթացքում ներկայացվեց, որ ՀԿ-ների կարողությունների զարգացման կապակցությամբ բազմիցս քննարկումներ կատարվել են և այս գործողության նախաձեռնողությունը եկել է ՀԿ սեկտորից: Այս հարցում իր ներդրումն ու ակտիվ մասնակցությունն է ունեցել Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան, որի նախաձեռնությունների արդյունքում բեղմնավոր գործունեություն է ծավալվել կոռուպցիայի պայքարի ոլորտում և հակակոռուպցիոն ռազմավարության գործողությունների մեծամասնությունը ներառվել է հենց Կոալիցիայի առաջարկություններով: Համաձայն քննարկման մասնակիցների՝ հակակոռուպցիոն ոլորտում ՀԿ-ների կարիքների գնահատումը պետք է ընթանա մի քանի բաղադրիչներով: Դրանցից է՝ հակակոռուպցիոն կրթությունը, որի տիրապետմամբ ՀԿ-ները կկարողանան ճշգրիտ մոնիթորինգ և գնահատում իրականացնել՝ հիմնվելով արդյունավետ մեթոդների վրա: Անհրաժեշտություն կա լիարժեքորեն օգտագործել ՀԿ-ների պոտենցիալն այս ոլորտում:

Այսպիսով՝ **գործողությունը կատարված է ՄԱՍՆԱԿԻ (կատարված է պետական մարմինների մասով, իսկ ՀԿ ներկայացուցիչների մասով՝ ոչ):**

Գործողություն 6. Դոնորների համակարգման մեխանիզմի բնականոն աշխատանքի ապահովում:

No.	Գործողություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
6	Յուրաքանչյուր տարի Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդն անց է կացնում 1 նիստ՝ նվիրված հակակոռուպցիոն ոլորտում դոնորների աշխատանքների համակարգմանը:	ՀՀ Վարչապետի աշխատակազմ	**Կատարված չէ:** Հակակոռուպցիոն ոլորտում դոնորների աշխատանքների համակարգմանը նվիրված Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստ չի անցկացվել:

Համաձայն ԱՆ 2021թ. մշտադիտարկման հաշվետվության՝ 2021 թվականի ընթացքում ապահովվել է դոնորների համակարգման մեխանիզմի բնականոն գործունեությունը, որի շրջանակում ձևավորվել է աշխատանքային խումբ, տեղի են ունեցել համատեղ հանդիպումներ, կազմվել է դոնորների աշխատանքների համակարգման մատրիցա: Այդուհանդերձ, կատարված գրասենյակային հետազոտությունների արդյունքում, պարզ դարձավ, որը 2021 թվականին Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդը երկու նիստ է գումարել (փետրվարի 16-ին և հոկտեմբերի 28-ին): Առաջին նիստի ոչ ծավալուն արձանագրությունը հրապարակվել է 2021 թվականի ապրիլի 9-ին,[4] իսկ երկրորդ նիստինը՝ չի հրապարակվել:[5] Ըստ հրապարակված պաշտոնական արձանագրության՝ առաջին նիստը[6] նվիրված չի եղել հակակոռուպցիոն ոլորտում դոնորների աշխատանքների համակարգմանը, այն ներառել է այլ հարցեր: Երկրորդ նիստում նույնպես չեն քննարկվել դոնորների աշխատանքների համակարգմանը նվիրված հարցեր:[7] Ըստ ՀՀ ԱՆ-ի՝ բովանդակային տեսանկյունից դոնորների համակարգմանն ուղղված աշխատանքները պարբերաբար իրականացվում են ՀՀ ԱՆ-ի կողմից: Հարցին ի պատասխան, թե արդյոք դոնորների հետ աշխատանքի ձևաչափը փոփոխվել է (հաշվի առնելով այն հանգամանքը, որ նիստ տեղի չի ունեցել, սակայն հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ աշխատանքային խմբի շրջանակներում կազմակերպվել է քննարկում)՝ ԱՆ ներկայացուցիչը պարզաբանեց, որ այդ քննարկումը ֆորմալ բնույթ չի կրել:

[4] https://anti-corruption.gov.am/am/news?content.pid=3, https://anti-corruption.gov.am/am/news?content.pid=4
[5] https://anti-corruption.gov.am/am/boardinfo
[6] https://anti-corruption.gov.am/am/news_page?content.cid=130
[7] https://anti-corruption.gov.am/am/news_page?content.cid=132

Սույն միջոցառման իրականացման շրջանակներում ակնկալվող արդյունքով և վերստուգիչ ցուցիչով սահմանված է՝ իրականացվել է տարեկան առնվազն 1 դոնորների համակարգման նիստ, առկա են նիստերի արձանագրությունները, մամլո հաղորդագրությունները տարածված են:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ որպես այդպիսին, Հակակոռուպցիոն քաղաքականության նիստ չի գումարվել, դրանք եղել առանձին և կոլեգիալ հանդիպումներ՝ ուղղված որոշակի շրջանակի հարցերի քննարկմանը, և որոնց վերաբերյալ հանրությանը պատշաճ տեղեկություններ չեն տրամադրվել՝ չհաշված ընդհանուր բնույթի տեղեկատվական կարճ հաղորդագրությունները՝ նորությունների տեսքով:

Այսպիսով՝ **գործողությունը ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ:**

ՈԼՈՐՏ 2: ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

2021թ.	
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	25
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	7
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻ	12
ՈՐԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ	6
ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ	28%

000 և ավելի բնակչություն ունեցող տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի մշակում և իրականացում:

ծողություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
գնահատումների ի հիման վրա, ըստ թյան, 15 000 և ավելի ունեցող տեղական արման մարմիններում հակակոռուպցիոն ումների ծրագրեր	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ) ՀՀ ԱՆ ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	**Գործողությունը կատարված չէ:** ՏԻՄ-երում հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրեր ներդրված չեն

ջանակում կատարված աշխատանքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ թեև 2021 թվականին ներ իրականացվել են տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման ակման, կոռուպցիոն ռիսկերի նվազեցման ուղղությամբ, այնուամենայնիվ սույն միջոցառումը գնահատվում որ միջոցառման ակնկալվող արդյունքով և վերստուգիչ ցուցիչով նախատեսված էր 2021 թվականին 15 000

ունեցող ՏԻՄ-երում վերհանել կոռուպցիոն ռիսկերը, մշակել ծրագրեր և դրանք իրականացնել առնվազն 8
ք 2021 թվականին չեն իրականացվել[8]:

ենյակի փորձագետների և ՏԿԵՆ-ի աշխատակիցների ջանքերի շնորհիվ մշակվել է ՏԻՄ-երում կոռուպցիոն
հատման մեթոդաբանություն և ինքնագնահատում իրականացնող էլեկտրոնային գործիք: Մշակված
և էլեկտրոնային գործիքը քննարկվել և մասամբ հավանության է արժանացել նաև ԿԿՀ-ի կողմից: 2021
ում նախանշված էր որոշ ՏԻՄ-երում իրականացնել ինքնագնահատման պիլոտային ծրագիր՝
ենսունակության և բացերի հղկման նպատակով: Նախանշված աշխատանքներն ամբողջապես ավարտին
համայնքների խոշորացման գործընթացների հետևանքով, սակայն նախատեսվում է 2022 թվականին
ցիլոտային ծրագրերը, որոնց կհետևի բուն մեթոդաբանությունների մշակման գործընթացները:

թյունը ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ:

**սկերի գնահատումների արդյունքների հիման վրա մշակել ոլորտային հակակոռուպցիոն, այդ թվում՝ ներքին
ործողությունների ծրագրեր՝ այդ թվում ներառելով նախկինում ընդունված միջոցառումների ծրագրերով
ևս չկատարված գործողություններ:**

Գործողություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք

ի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության
մասնակցությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N

8	Ռիսկերի գնահատումների արդյունքների հիման վրա մշակվել են ոլորտային հակակոռուպցիոն, այդ թվում՝ ներքին բարեվարքության գործողությունների ծրագրեր՝ այդ թվում ներառելով նախկինում ընդունված միջոցառումների ծրագրերով սահմանված, բայց դեռևս չկատարված գործողություններ	ՀՀ Վարչապետի աշխատակազմ Պետական կառավարման համակարգի մարմիններ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	**Գործողությունը կատարված չէ:** ԿԿՀ-ի կողմից իրականացվել է պետական կառավարման համակարգի բարեվարքության կազմակերպիչների ինստիտուտի ուսումնասիրություն, գնահատվել են առկա խնդիրները և բացերը: Մշակվել է Պաշտպանության նախարարության համակարգում կոռուպցիոն դրսևորումների կանխարգելման ծրագրի նախագիծը:

ԱՆ 2021թ. մշտադիտարկման հաշվետվությունում այս գործողության հետ կապված նշվում է, որ ԿԿՀ-ի կողմից իրականացվել է պետական կառավարման համակարգի բարեվարքության կազմակերպիչների ինստիտուտի ուսումնասիրություն, գնահատվել են առկա խնդիրները և բացերը: Մշակվել է Պաշտպանության նախարարության համակարգում կոռուպցիոն դրսևորումների կանխարգելման ծրագրի նախագիծը:

Գործողության իրականացման պատասխանատու մարմինների հետ ՖԽՔ-ի ժամանակ պատասխանատու պետական մարմնի ներկայացուցչի կողմից նշվեց, որ ռիսկերի գնահատման մեթոդաբանության ուղղությամբ աշխատանքներ են տարվում, միջազգային գործընկերների կողմից առաջարկվել է պատրաստի մեթոդաբանություն, որն ունի նպատակահարմարության և մեթոդների խնդիրներ, ինչի պատճառով մեթոդաբանությունը դեռևս հաստատված չէ: Գործողության չկատարման հաջորդ պատճառն այն է, որ ԿԿՀ-ի աշխատակազմի համալրումը ակտիվ փուլ է մտել 2021թ 2-րդ կիսամյակի ընթացքում, և այս պահին համալրումն (ժամանակահատվածը վերաբերում է 2022 թ.-ի փետրվար ամսվան) ավարտված չէ՝ պայմանավորված մասնագիտացված կադրերի բացակայությամբ:

Շահագրգիռ կողմերի հետ ՖԽՔ-ի ընթացքում բարձրացվեց նախատեսված հետազոտությունների չիրականացման խնդիրը, որի պատճառը մեթոդաբանության բացակայությունն է՝ չնայած նրան, որ առկա են միջազգայնորեն տարածված մեթոդաբանություններ/ստանդարտներ (ISO standards): Նմանատիպ խնդիրները կարող են լուծվել ՔՀԿ-ների հետ համագործակցության՝ տեղեկատվության և փորձի փոխանակման միջոցով:

Որպես աշխատանքների հետաձգմանը հանգեցնող գործոն նշվեց նաև 2020-2021 թթ. Քովիդ 19-ի արտակարգ իրավիճակը և պատերազմը: Նույն պատճառներով հետաձգվել է 2020 թ.-ի համար նախատեսված վարչատարածքային բարեփոխումների

շարունակականության ապահովումը՝ տեղափոխվելով 2021 թ., ինչն էլ իր հերթին Ռազմավարության սույն գործողությունների կատարման ուշացման գործոն է հանդիսացել: ՏԿԵՆ-ը ԵԽ-ի հետ մշակել է մեթոդաբանություն, որը քննարկվել է շահագրգիռ մարմինների, ԱՆ-ի հետ, կարծիքը ստացվել է 2021 թ. դեկտեմբերին, իսկ 2022 թ. հունվարի 24-ին արդեն այն տրամադրվել է ՏԻՄ-երին՝ առաջարկելով եռամսյա ժամկետ մեթոդաբանությունը տեղայնացնելու և ընդունելու համար (ժամկետը պայմանավորված է նրանով, որ ՏԻՄ-երի աշխատակազմերի ձևավորումը դեռևս ընթացքի մեջ է) (վերաբերում է գործողություն 7-ին):

Այսպիսով՝ **գործողությունը ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ:**

ՈԼՈՐՏ 2.1. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ (բարեվարքություն)

Գործողություն 9. Պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց, դատավորների և դատավորների թեկնածուների, դատախազների և դատախազների թեկնածուների, քննիչների բարեվարքության կանոնների պահպանման նկատմամբ հսկողության իրականացման կառուցակարգերի ձևավորում:

No.	Գործողություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
9	Մշակվել և ՀՀ ազգային ժողով է ներկայացվել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին վերապահվել է նաև «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերում ու կարգով դատավորների և դատավորների թեկնածուների, «Դատախազության մասին» օրենքով սահմանված դեպքերում ու կարգով դատախազների և դատախազների թեկնածուների, քննիչների բարեվարքության կանոնների պահպանման վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման, դրանց հիման վրա համապատասխան անձանց խորհրդատվական եզրակացություններ տրամադրելու վերաբերյալ իրավասություն:	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) ՀՀ վարչապետի աշխատակազմ ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ գլխավոր դատախազություն ՀՀ հատուկ քննչական ծառայություն (համաձայնությամբ) ՀՀ Քննչական կոմիտե (համաձայնությամբ) ՀՀ ազգային անվտանգության ծառայություն	**Կատարված է ամբողջությամբ:** Հանձնաժողովի լիազորությունների ընդլայնմանն ուղղված օրենսդրական փաթեթներն Ազգային ժողովի կողմից ընդունվել են:

ԱՆ 2021թ. մշտադիտարկման հաշվետվությունում այս գործողության հետ կապված նշվում է, որ ԿԿՀ-ի լիազորությունների ընդլայնմանն ուղղված օրենսդրական փաթեթներն ԱԺ-ի կողմից ընդունվել են համապատասխանաբար 2021 թվականի հունվարի 19-ին և ապրիլի 14-ին: Զուգահեռաբար, ԿԿՀ-ի կողմից 2021 թվականի ընթացքում իրականացվել է պետական պաշտոնի հավակնող 141 անձի բարեվարքության ուսումնասիրություն, ինչի արդյունքում համապատասխան մարմիններ է ներկայացվել խորհրդատվական բնույթի 134 եզրակացություն: Մեկ անձի վերաբերյալ եզրակացություն չի ներկայացվել ԿԿՀ-ի անդամների ձայների հավասար բաշխման արդյունքում: Իսկ ուսումնասիրություն անցնող անձանցից 6-ը եղել են ԿԿՀ-ի անդամի թեկնածուներ, այս դեպքում ԿԿՀ-ն ուսումնասիրում է միայն անձանց գույքային դրությունը:
Շահագրգիռ մարմինների հետ ՖՔԽ-ի ընթացքում անդրադարձ կատարվեց այն հարցին, թե որքանո՞վ է մասնակցային եղել նշված կառուցակարգերի ներդրման գործընթացը: Համաձայն ԿԿՀ-ի ներակացուցչի՝ մշակման փուլում քննարկումներ են եղել և՛ ՀԿ-ների, և՛ պետական մարմինների, և՛ միջազգային կազմակերպությունների հետ: Շահագրգիռ կողմերի կողմից մատնանշված հիմնական խնդիրը կապված է եղել եզրակացության գաղտնիության հետ, որի վերաբերյալ գնահատականները ներկայացվել են գործողություն 2-ի ներքո:
Մեկ այլ խնդիր, որը կապված է բարեվարքության կանոնների պահպանման նկատմամբ հսկողության իրականացման կառուցակարգերի հետ, վերաբերում է անհամատեղելիության պահանջների պահպանման տիրույթին: Մասնավորապես, այս ոլորտում ԿԿՀ-ի գործիքակազմը ներկա դրությամբ դիմումներն են, հաղորդումները և մեդիամոնիթորինգը: Հարուցված վարույթների մեծ մասը մեդիահրապարակումների հիման վրա են եղել: Այնինչ առկա է անհրաժեշտություն, որ ԿԿՀ-ն վարույթներ հարուցելու իրավասություն ունենա նաև ներքին մշտադիտարկման արդյունքում:

Այսպիսով՝ **գործողությունը կատարված է ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ:**

Գործողություն 10. «Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքների կատարման արդյունավետության գնահատում:

No.	Գործողություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
10	Իրականացվել են գնահատումներ՝ պարզելու «Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքների կատարման ընթացքը:	ՀՀ Վարչապետի աշխատակազմի Քաղաքացիական ծառայության գրասենյակ	**Կատարված է (վերապահումով):** Իրականացվել են գնահատումներ՝ պարզելու «Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական

	Գնահատումների հիման վրա ՀՀ Վարչապետին ներկայացվել է առաջարկությունների փաթեթ, արդյունքները քննարկվել են Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստում:	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	ծառայության մասին» օրենքների կատարման ընթացքը, սակայն արդյունքները չեն քննարկվել Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստում:

ԱՆ 2021թ. մշտադիտարկման հաշվետվությունում, այս միջոցառման շրջանակներում 2021 թվականին իրականացվել են գնահատումներ՝ պարզելու «Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքների կատարման ընթացքը, մասնավորապես՝ Տեղեկատվական հարթակի գործարկմամբ 2021 թվականի ընթացքում հնարավորություն է ստեղծվել գնահատելու էլեկտրոնային եղանակով ընթացող 69 մրցույթների անցկացման թափանցիկությունը, «Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքների պահանջների պահպանումը: Քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից ուսումնասիրվել և գնահատվել է ընթացիկ տարվա հունվարից մինչև դեկտեմբեր ամիսներին Տեղեկատվական հարթակով ընթացող թվով 1867 մրցույթների վերաբերյալ տեղեկատվությունը՝ մրցույթին մասնակցելու թույլտվություն ստացած մասնակիցների փաստաթղթերը, համապատասխան մարմինների կողմից կայացրած որոշումները, հարցազրույցի փուլն անցկացնելու համար ձևավորված հանձնաժողովի կազմերին ներկայացվող պահանջների պահպանումը, հարցազրույցի փուլի գնահատման չափորոշիչների պահանջների պահպանումը, պաշտոնում նշանակված քաղաքացու փաստաթղթերի համապատասխանությունը, իրականացվել են ուղիղ հեռարձակմամբ ընթացող մրցույթների մշտադիտարկումներ: Համապատասխան մարմիններին տրվել են պարզաբանումներ և մեթոդական աջակցություն՝ հայտնաբերված սխալները շտկելու համար: Քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակի և Արդարադատության նախարարության պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային հարթակի ծրագրային փոխգործակցության արդյունքում հնարավոր է դարձել ինքնաշխատ եղանակով՝ անմիջապես, ստանալու տեղեկատվություն հանրային ծառայության պաշտոնում նշանակված անձի կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու վերաբերյալ:

Միջոցառման շրջանակներում նախատեսված գործողությունների արդյունքը համարվում է կատարված վերապահումով, քանի որ իրականացված գնահատումների արդյունքները չեն քննարկվել Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստում:

Նշենք նաև, որ այս գործողության (և մի շարք այլ գործողությունների) մասով Ռազմավարության գործողությունների ծրագրում վերստուգիչ ցուցիչ առկա չէ, որով հնարավոր կլինի հստակ գնահատել գործողության իրականացումը, ինչը Ռազմավարությունում առկա բացթողում է:

Այսպիսով՝ **գործողությունը ԿԱՏԱՐՎԱԾ Է (վերապահումով):**

Գործողություն 11. «Հանրային ծառայության մասին» օրենքին համապատասխան էթիկայի հանձնաժողովների ու բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտի ձևավորում և գործարկում:

No.	Գործողություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
11	Վերլուծվել և գնահատվել է Էթիկայի հանձնաժողովների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների՝ իրենց գործառույթները գործնականում իրականացնելու համար անհրաժեշտ գործիքակազմի ապահովման հարցը: Էթիկայի հանձնաժողովի անդամների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների համար մշակվել են վերապատրաստման ծրագրեր, կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ:	ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)	**Կատարված է մասնակի:** Էթիկայի հանձնաժողովի անդամների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեության համար անհրաժեշտ ուղեցույցները դեռևս չեն մշակվել, վերապատրաստման դասընթացներ 2021 թվականին չեն անցկացվել:

ԱՆ 2021թ. մշտադիտարկման հաշվետվությունում, պետական մարմիններում, որոնք արդեն անցել են նոր չափանիշներով պաշտոնների գնահատման և դասակարգման համակարգին, նշանակվել են բարեվարքության հարցերով կազմակերպիչներ (43 պետական մարմին): Այդ պետական մարմիններում հաստատվել են բարեվարքության հարցերով կազմակերպիչների պաշտոնների անձնագրերը, սահմանվել են 76 բարեվարքության հարցերով կազմակերպիչների իրավունքները, պարտականությունները և գործառույթները, որոնք բխում են «Քաղաքացիական ծառայության մասին» և «Հանրային ծառայության մասին» օրենքներից: Բացի այդ, դեռևս 2020 թվականի հոկտեմբերի 1-ից գործարկվել է քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակը, և 2020 թվականի հոկտեմբերի 1-ից պետական մարմիններում էլեկտրոնային եղանակով էթիկայի հանձնաժողովի ձևավորման նպատակով իրականացվում է քաղաքացիական ծառայողներին քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում էթիկայի հանձնաժողովի անդամի թեկնածուների ցանկում ընդգրկելու գործընթացը, իսկ մինչև էլեկտրոնային հարթակի գործարկումը՝ էթիկայի հանձնաժողովը ձևավորվում էր ոչ էլեկտրոնային եղանակով՝ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից վարվող,

գրասենյակի ղեկավարի որոշմամբ հաստատված թեկնածուների ցանկից: Ներկայումս քաղաքացիական ծառայողներին քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում էթիկայի հանձնաժողովի անդամի թեկնածուների ցանկում ընդգրկելու գործընթացը շարունակվում է, իսկ քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում էթիկայի հանձնաժողովի անդամի թեկնածուների ցանկում թեկնածուներ ընդգրկած պետական մարմիններում քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողով ձևավորելու իրավական հիմք առաջանալու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան մարմնի բարեվարքության հարցերով կազմակերպիչը արդեն իսկ կարող է պատահականության սկզբունքով ձևավորել քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողով:

Միաժամանակ, աշխատանքները գնահատվում են մասնակի են իրականացված, քանի որ Էթիկայի հանձնաժողովի անդամների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործունեության համար անհրաժեշտ ուղեցույցները դեռևս չեն մշակվել, վերապատրաստման դասընթացներ 2021 թվականին չեն անցկացվել:

Պատասխանատու մարմինների հետ ՖԽՔ-ի ընթացքում նշվեց, որ ուղեցույցերը պետք է հիմնվեն բարեվարքության, էթիկայի կանոնների տիպային մոդելների վրա, որոնք այս պահին մշակված չեն: Վերապատրաստումների վերաբերյալ նշվեց, որ 2021 թ. ՄԱԶԾ-ի հետ իրականացվել են վերապատրաստումներ բարեվարքության կազմակերպիչների համար, որոնք սակայն չեն եղել թիրախային, այլ վերաբերել են բարեվարքության ընդհանուր կանոններին, «Հանրային ծառայությունների մասին օրենքի» կարգավորումներին: Այն տվել է ընդհանուր գիտելիքներ, ոչ թե գործնականում կիրառելի հմտություններ:

Շահագրգիռ կողմերի հետ ՖՔԽ-ի մասնակիցների կողմից արձանագրվեց բարեվարքության, էթիկայի կանոնների մշակման վերաբերյալ խնդիրը, երբ նախատեսվում են մշակել ընդհանուր մոդելներ, որոնցից պետք է բխեն առանձին ոլորտներին առնչվող կանոնները: Արդյունքում տվյալ ընդհանուր մոդելի մշակման հետաձգման պատճառով բացակայում են նաև առանձին մոդելները կամ հնարավոր չի լինում դրանք գործարկել:

Քննարկումների արդյունքում փորձագետների կողմից ներկայացվեց առաջարկ բարեվարքության հարցերով կազմակերպիչ նշանակել ոչ թե պետական մարմինների ներկայացուցիչներին, այլ քաղաքացիական հասարակության, փորձագիտական հանրույթի ներկայացուցիչներին որպես տվյալ պետական մարմնում բարեվարքության հարցերով կազմակերպչի անկախության ապահովման երաշխիք: Սա հնարավորություն կտա խուսափել հնարավոր շահերի բախումից, աշխատանքային կոնֆլիկտներից կամ վերադասի ազդեցությունից: Բացի այդ, այս դեպքում նշանակումները արդեն կկատարվեն մասնագիտական կարողությունների և այլ հարակից հմտությունների համապատասխանության գնահատման հիման վրա: Այս դեպքում անհրաժեշտ է նաև ունենալ բարեվարքության կազմակերպիչների ինստիտուտի համակարգման մեկ միասնական մարմին, որը

կիրականացնի ընդհանուր համակարգում: Օրինակ՝ նշյալ համակարգման աշխատանքների գործառույթը կարելի է վերապահել ԿԿՀ-ին:

Այսպիսով՝ **գործողությունը կատարված է ՄԱՍՆԱԿԻ:**

Գործողություն 12. Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության համակարգի բարեփոխում:

No.	Գործողություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
12	Իրականացվում են պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության համակարգի բարեփոխումներին ուղղված միջոցառումները:	ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ	**Կատարված է մասնակի:** 2021 թվականի իրականացվել են աշխատանքներ որոշակի խումբ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության բարելավման առնչությամբ: Զուգահեռաբար պետական համակարգում վարձատրության համակարգի բարելավմանն ուղղված միջոցառումներ են սահմանվել Կառավարության ծրագրով, որոնք նախատեսվում է իրականացնել մինչև 2024 թվականի մարտի 3-րդ տասնօրյակը:

Սույն միջոցառման շրջանակներում կատարված աշխատանքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 2021 թվականի իրականացվել են աշխատանքներ որոշակի խումբ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության բարելավման առնչությամբ: Զուգահեռաբար պետական համակարգում վարձատրության համակարգի բարելավմանն ուղղված միջոցառումներ են սահմանվել Կառավարության ծրագրով, որոնք նախատեսվում է իրականացնել մինչև 2024 թվականի մարտի 3-րդ տասնօրյակը[9]:

[9] Աղբյուր՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն որոշմամբ 2021 թվականին կատարման ենթակա միջոցառումների իրականացման մասին» հաշվետվություն

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2022 թվականի համար պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափի փոփոխություն չի նախատեսվում, իսկ օրենքով սահմանված չափը (66140 դրամ)՝ չի ապահովում նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափի 80 տոկոսը՝ մշակվել և ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունվել է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 10-ի ՀՕ-372-Ն օրենքը:

Մշակվել է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի և վարձատրության համակարգի վերաբերյալ» զեկույցը, որով գնահատվել է պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի և պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցների փոփոխության անհրաժեշտությունը, ներկայացվել են առաջարկություններ՝ պետական պաշտոններ և պետական ծառայության 83 պաշտոններ զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի և (կամ) հիմնական աշխատավարձի չափը որոշող գործակիցների փոփոխության վերաբերյալ, վեր են հանվել վարձատրության համակարգում առկա խնդիրներ:

Պետական համակարգում վարձատրության բարեփոխումներն ամբողջ ծավալով իրականացնելու համար հնարավոր չի եղել ապահովել ՀՀ պետական բյուջեի շրջանակներում անհրաժեշտ ծավալով ֆինանսական ռեսուրսներ, այդ թվում՝ հաշվի առնելով կորոնավիրուսի համավարակի և Արցախյան 44-օրյա պատերազմի հետևանքով սոցիալ-տնտեսական ընդհանուր վիճակով պայմանավորված առաջնահերթությունները: Նույն հանգամանքներով, ինչպես նաև 2021 թ. հունիսի արտահերթ խորհրդարանական ընտրությունների արդյունքում Կառավարության կազմավորմամբ պայմանավորված՝ որոշակիորեն հետաձգվել է նաև հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության հաստատումը և ռեֆորմների մեկնարկի գործընթացը:

Այսպիսով՝ **գործողությունը կատարված է ՄԱՍՆԱԿԻ:**

Գործողություն 13. Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված՝ հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների, քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնների սահմանում:

No.	Գործողություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
13	Մշակվել են հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնները,	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)	**Կատարված է մասնակի:** Հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնները մշակվել են, իսկ քաղաքացիական

	քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնները:	ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ Պետական կառավարման համակարգի մարմիններ	ծառայողի վարքագծի կանոնները դեռևս չեն մշակվել, քանի որ դրանք պետք է մշակվեն արդեն իսկ հաստատված հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների հիման վրա:

Համաձայն ԱՆ 2021թ. մշտադիտարկման հաշվետվության, ԿԿՀ-ը 2021 թվականի ընթացքում գրեթե ավարտին է հասցրել Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների, պետական և համայնքային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագիրքը, որը մշակվել է ԵԽ/ԵՄ Գործընկերություն հանուն լավ կառավարման «Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի և կանխարգելման ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում» II ծրագրի շրջանակներում: Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների, պետական և համայնքային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքի կիրառմամբ պետք է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում վարքագծի պահպանման ուղղությամբ իրականացվի միասնական քաղաքականություն: Օրինակելի վարքագծի կանոնները լրացնում և պարզաբանում են օրենքներով ամրագրված բարեվարքության կանոնները: Այս համատեքստում բարեվարքության կազմակերպիչները ոչ միայն օրինակելի վարքագծի կանոնները վերահսկողներն են, այլ նաև դրանք տարածողը և մշակույթ ձևավորողը: 2021 թվականի 4-րդ եռամսյակի դրությամբ կանոնագիրքը գտնվում է իրավաբան փորձագետների կողմից վերանայման փուլում, նախատեսվում է 2022 թվականի հունվար ամսին կազմակերպել պետական կառավարման համակարգի բարեվարքության կազմակերպիչների հետ հանդիպում՝ կանոնագրքի նախնական շրջանառության նպատակով:

ՖԽՔ-ի ընթացքում պատասխանատու պետական մարմնի ներկայացուցիչը նշեց, որ 2021 թ. ԵԽ աջակցությամբ և միջազգային փորձագետի ներգրավմամբ սկսվել են այս գործողությանն ուղղված աշխատանքները: Այս պահին առկա է տիպային կանոնների նախնական տարբերակը, և ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ տեղական փորձագետների հետ աշխատանքներ են տարվում դրանց լրամշակման ուղղությամբ: Տիպային կանոնների հաստատումը նախատեսվում է ապրիլին, ինչին զուգահեռ հրապարակվելու է նաև դրանց մեկնաբանությունների ձեռնարկը և ոլորտային կանոնագրքերի կազմման և կիրարկման ուղեցույցը: Այսպիսով, հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնները մշակվել են, իսկ քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնները դեռևս չեն մշակվել, քանի որ դրանք պետք է մշակվեն արդեն իսկ հաստատված հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների հիման վրա:

Այսպիսով՝ **գործողությունը կատարված է ՄԱՍՆԱԿԻ:**

Գործողություն 14. Պատգամավորի, քննիչի վարքագծի կանոնների սահմանում:

ողություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
ավորի, քննիչի ծի կանոնները և գործում են:	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) ՀՀ ազգային ժողով (համաձայնությամբ) Քննչական մարմիններ (համաձայնությամբ)	**Կատարված չէ:** Միջազգային փորձի հիման վրա մշակված պատգամավորի, քննիչի վարքագծի կանոնները չեն հաստատվել: Էթիկայի հանձնաժողովի կողմից տարեկան առնվազն 1 վերապատրաստում չի իրականացվել:

3-րդ միջոցառման շրջանակներում իրականացված Հանրային ծառայողների վարքագծի տիպային ան և համայնքային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքի մշակմամբ նախատեսվում է ային ծառայողների վարքագծի կանոնների ներդրման և պահպանման միասնական քաղաքականությունը: մշակված փաստաթուղթը հիմք կդառնա նաև ԱԺ պատգամավորների և քննիչների վարքագծի կանոնների պանման համար: Այս պահի դրությամբ կարելի է ասել, որ 2021 թվականի համար նախատեսված տարված չեն, քանի որ պատգամավորի և քննիչի վարգաքծի կանոնները չեն ընդունվել և չեն գործում[10]:

սով ԿԿՀ ներկայացուցիչը ՖԽՔ-ի ընթացքում նշեց, որ ԿԿՀ-ն բոլոր պետական մարմիններից հավաքագրել ը՝ հասկանալու համար առկա իրավիճակը, սակայն դրանք հաստատված չեն տիպային կանոնների ոճառով: Քննչական կոմիտեի ներկայացուցիչը նշեց, որ վերջիններս արդեն իսկ մշակել են իրենց վարքագծի ծը, և դեռևս 2020 թվականի հունիսին ուղարկել են ԿԿՀ-ի հաստատմանը: ԿԿՀ-ի կողմից հաստատելուց են, որոնք հետագայում կհամապատասխանեցվեն ԿԿՀ-ի կողմից ընդունվելիք տիպային օրինակներին: րկվում է վարքագծի կանոնները և ներքին կարգապահական կանոնները մեկ միասնական փաստաթղթով ը: Կարծիք հնչեց, որ ԱԺ-ն Քննչական կոմիտեի օրինակով կարող էր այս ժամանակահատվածում մշակել իկայի և բարեվարքության կանոններ՝ հետագայում դրանք համապատասխանեցնելով տիպային ռ այս հարցում ԱԺ կողմից առկա է թերացում: ԵԽ Կոռուպցիայի դեմ պայքարի երկրների խումբը (ԳՐԵԿՈ)՝ եպտեմբերի 22-ին հրապարակած Գնահատման չորրորդ փուլի համապատասխանության վերաբերյալ

ի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության
ասկարությունը և դրա հրավիրման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N

մ[11], որը վերաբերում է կոռուպցիայի կանխարգելմանը պառլամենտի անդամների, դատավորների և
անում, կոշտ գնահատականներ է տվել այս գործողության չկատարման մասով:
կույցի 77-րդ և 79-րդ կետերով նշել է.
*ում է Խորհրդարանի անդամներին, ապա օրենսդրական գործընթացի թափանցիկությունը մնում է
՝ շեշտադրելով օրենսդրության մշակման գործընթացում հասարակության ներգրավվածության և «հրապ
հրառման անհրաժեշտությունը: Պատգամավորների էթիկայի կանոնների նախագիծը և «Ազգային ժողովի
ենքում փոփոխություններ կատարելու նախագիծը, որոնցով նախատեսում է մշտադիտարկել
վարքագծի համապատասխանությունը էթիկայի նորմերին, մշակվել է, բայց դեռևս չի ներկայացվել ԳՐԵԿՈ-
ան նպատակով:*
*ի անդամների, դատավորների և դատախազների մասով նշվում են նվերների վերաբերյալ խստացված
չի հաստատվել, թե արդյո՞ք գործում է թույլատրելի նվերների գրանցման ընթացակարգը: (…)»*

թյունը ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ:

ղաքացիական ծառայության ոլորտում արժանիքահեն համակարգի ապահովում:

ություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
ել են ին վների ստակ եր:	ՀՀ Վարչապետի աշխատակազմի Քաղաքացիական ծառայության գրասենյակ Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	**Կատարված է մասնակի:** 2021 թվականի մայիս ամսից ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական ծառայության բարեփոխումների հետագա իրականացմանը» Թվինինգ ծրագրի վերագործարկմամբ սույն միջոցառման կատարմանն ուղղված աշխատանքները շարունակվել են 2021 թվականին, սակայն աշխատանքներն ամբողջությամբ հնարավոր չի եղել ավարտել:

ԱՆ 2021թ. մշտադիտարկման հաշվետվությունում ներկայացված է, որ Հակակոռուպցիոն ռազմավարության հավելվածի 2-ի 15-րդ միջոցառման ապահովման հիմքում դրվել է ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական ծառայության բարեփոխումների հետագա իրականացմանը» Թվինինգ ծրագրի 2-րդ բաղադրիչը, որը վերաբերվում է համալրման և ընտրության ուժեղացված համակարգերի համապատասխանությունը պետական կառավարման սկզբունքներին: Ծրագրի շրջանակներում աշխատանքները գտնվում են ակտիվ փուլում: Միջոցառման կատարումը ձգձգող հանգամանքները պայմանավորված են եղել ծրագրի կասեցմամբ, որի պատճառով չորս ամիս ժամկետով դադարեցվել է Թվինինգ ծրագրի փորձագետների հետ աշխատանքը: Ծրագրի փորձագետների հետ կազմակերպվել են բազմաթիվ հանդիպումներ հեռավար և առկա եղանակով, գնահատվել են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 10-րդ հոդվածով սահմանված մրցութային հանձնաժողովների ձևավորման համար ամրագրված պահանջները, ուսումնասիրվել են Տեղեկատվական հարթակի միջոցով ընթացող մրցույթների հանձնաժողովների կազմերի համապատասխանությունը իրավական ակտերի պահանջներին, գնահատվել են առկա ռիսկերը: Ծրագրի ամփոփումից հետո հնարավոր կլինի սահմանել մրցութային հանձնաժողովների կազմերին ներկայացվող չափանիշների ու պահանջների վերաբերյալ առաջարկությունների փաթեթը:

Այսպիսով, 2021 թվականի մայիս ամսից ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական ծառայության բարեփոխումների հետագա իրականացմանը» Թվինինգ ծրագրի վերագործարկմամբ սույն միջոցառման կատարմանն ուղղված աշխատանքները շարունակվել են 2021 թվականին, սակայն որոշակի հանգամանքներով պայմանավորված սույն միջոցառման վերստուգիչ ցուցիչով և ակնկալվող արդյունքով սահմանված աշխատանքներն ամբողջությամբ հնարավոր չի եղել ավարտել: Ուստի, սույն միջոցառումը մասնակի է կատարված:

ՖԽՔ-ի ընթացքում ԿԿՀ ներկայացուցիչը նույնպես նշեց, որ 2020 թ.-ից ԵՄ փորձագիտական խմբի հետ մեկնարկել է «Աջակցություն քաղաքացիական ծառայության բարեփոխումներին» ծրագիրը, երկրորդ բաղադիչը վերաբերում է ընտրության, համալրման գործընթացների կատարելագործմանը, որը ենթադրում է նաև հանձնաժողովների անդամներին ներկայացվող չափորոշիչների սահմանումը: 2020 թ. ծրագիրը կասեցվել է, վերամեկնարկել է 2020թ. նոյեմբերին: Մշտադիտարկման պահին աշխատանքները ընթացքի մեջ են: :

Այսպիսով՝ **գործողությունը կատարված է ՄԱՍՆԱԿԻ:**

ՈԼՈՐՏ 2.2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ (հայտարարագրում, նվերներ, կարգավորման ազդեցության գնահատում, գնումներ, մասնավոր ոլորտ, իրական սեփականատերեր, տնտեսական մրցակցության պաշտպանություն)

Գործողություն 16. Հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության գնահատման համակարգի արդյունավետության բարձրացում:

No.	Գործողություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
16	Հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության հստակ չափանիշները և շրջանակը սահմանվել է:	ՀՀ ԱՆ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	**Կատարված է մասնակի:** Հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ անհրաժեշտ իրավական ակտի մշակումը գտնվում է ընթացիկ փուլում:

ԱՆ 2021թ. մշտադիտարկման հաշվետվությունում, հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ անհրաժեշտ իրավական ակտի մշակումը գտնվում է ընթացիկ փուլում:

Ըստ ՀՀ ԱՆ-ի՝ նշված միջոցառման առավել արդյունավետ մեխանիզմներ ընտրելու համար միջազգային կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ իրականացվում են քննարկումներ:

Այսպիսով՝ **գործողությունը կատարված է ՄԱՍՆԱԿԻ:**

Գործողություն 17. Գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման համակարգի կատարելագործում: Ծախսերի հայտարարագրման համակարգի ներդրում:

No.	Գործողություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
17	Ընդունված կարգավորումների շարունակական կիրարկման ապահովում:	ՀՀ ԱՆ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով (համաձայնությամբ) (Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով) (համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	**Կատարված է ամբողջությամբ:** Հայտարարագրման համակարգի վերանայմանն ուղղված օրենքները և դրանցից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվել են:

Սույն միջոցառման շրջանակում կատարված աշխատանքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հայտարարագրման համակարգի վերանայմանն ուղղված օրենքները և դրանցից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվել են: Բացի այդ, ծախսերի հայտարարագրման համակարգը ներդրվել է, հայտարարատու պաշտոնատար անձանց շրջանակի ընդլայնման արդյունքում 2019 թ. համեմատությամբ 3 անգամ աճել է հայտարարատու պաշտոնատար անձանց թիվը:

Պետական մարմինների հետ քննարկման ընթացքում հարց բարձրացվեց, թե արդյո՞ք առկա են արտասահմանում արվող ծախսերի հայտարարագրման վերահսկման մեխանիզմներ և արդյո՞ք հնարավոր է համագործակցություն դեսպանատների հետ այս մասով: Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան թույլ է տալիս քրեական գործերով իրավական փոխօգնության շրջանակներում պայմանավորվածություններ ձեռք բերել, բայց քաղաքացիական գործերով հաջողություններ չեն գրանցվում ԿԿՀ-ի կողմից: ԿԿՀ ներկայացուցիչները նշեցին, որ խնդիրը իրոք առկա է, սակայն դեսպանատների հետ չկա որևէ պայմանավորվածություն: Խնդիրը փորձ է արվում լուծել տարվա սկզբում, ընթացքում և ավարտին՝ խնայողությունների, եկամուտների և ծախսերի վերաբերյալ տվյալների համադրման միջոցով: Այդուհանդերձ, այս առումով դեռևս առկա են խնդիրներ: Առկա են ռիսկեր կապված կոռուպցիոն մեխանիզմների բացահայտման հետ, քանի որ չհայտարարագրված գումարներն, օրինակ, կարող են ծախսվել արտասահմանում, կրիպտոարժույթների միջոցով փոխանցումներ անելով և այլն:

Համաձայն փորձագետների հետ խորքային հարցազրույցների, կոռուպցիայի դեմ պայքարի համատեքստում ոչ միայն որոշակի կանխարգելիչ նշանակություն ունի հայտարարագրման համակարգի գործարկումը՝ որպես զսպիչ մեխանիզմ, այլ նաև պատասխանատվության սպառնալիքը՝ վարչական, քրեական, դատավորների դեպքում՝ կարգապահական պատասխանատվության միջոցներով: Համաձայն փորձագետների՝ հայտարարագրումը կարող է ունենալ կանխարգելիչ նշանակություն կոռուպցիոն ռիսկերի նվազեցման առումով, սակայն այն ավելի շուտ ուղղված է թափանցիկության ապահովմանը և չի կարող լինել կոռուպցիայի դեմ պայքարի միակ գործիքը:

Այսպիսով՝ **գործողությունը կատարված է ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ:**

Գործողություն 18. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների հստակեցում:

No.	Գործողություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
18	Ուսումնասիրության հիման վրա «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը մշակվել է և ներկայացվել ՀՀ ազգային ժողով:	ՀՀ ԱՆ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով (Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով)	**Կատարված է մասնակի:** «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի և հարակից այլ օրենքների նախագծերի փաթեթը մշակման փուլում է, սակայն Ազգային ժողով չի ներկայացվել:

Սույն միջոցառման շրջանակներում կատարված աշխատանքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 2021 թվականին «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի և հարակից այլ օրենքների նախագծերի փաթեթը մշակման փուլում է, սակայն ԱԺ չի ներկայացվել, քանի որ Կառավարության ծրագրով սահմանվել են Նախագծերի փաթեթի առավել ընդգրկուն կարգավորման շրջանակ և նախագծերի փաթեթի քննարկման նոր ժամկետներ: Նշված հանգամանքների հաշվառմամբ 2021 թվականին սույն միջոցառման կատարումը գնահատվում է մասնակի կատարված[12]:

ՖԽՔ-ն ընթացքում ԿԿՀ ներկայացուցչի կողմից նշվեց, որ այս թեմայի վերաբերյալ ստացված դիմումների, մեդիայում հրապարակումների հիման վրա մշակվել է փաստաթուղթ, որտեղ ամփոփված են բոլոր առկա արձանագրված խնդիրները: Փաստաթղթում անդրադարձ կա նաև հավատարմագրային կառավարման ինստիտուտին, որն այս պահին համաձայն մասնակցի «ձևական բնույթ է կրում»: Վերջինիս կատարելագործման նպատակով համագործակցության պայմանավորվածություն կա ԵԽ

[12] Աղբյուր՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն որոշմամբ 2021 թվականին կատարման ենթակա միջոցառումների իրականացման մասին» հաշվետվություն

գրասենյակի փորձագետների հետ: Մինչև 2022 թ.մայիս ԱՆ-ի հետ մեկտեղ պետք է ներկայացվի օրենսդրական փոփոխությունների նախագիծը, որի ուղղությամբ այժմ իրականացվում են աշխատանքներ:

ՖԽՔ-ների ընթացքում քննարկվեցին նաև անհամատեղելիությանը վերաբերող կոնկրետ խնդիրներ: Միևնույն ժամանակ, փորձագետներից մեկի հետ խորքային հարցազրույցի ընթացքում նշվեց, որ օրենսդիրը գույքի հավատարմագրային կառավարման առումով գրեթե արգելք չի նախատեսում սուբյեկտների շրջանակի մասով, և հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձն իր գույքը կարող է հանձնել հավատարմագրային կառավարման: Այստեղ մասամբ գործում է նաև Քաղաքացիական օրենսգրքի կարգավորումները, բայց խնդիրը կարող է տեղավորվել ոչ միայն անհամատեղելիության պահանջների պահպանման, այլ նաև շահերի բախման կարգավորումներին հետևելու հարթությունում: Միջազգային փորձում գործում է «կույր կառավարիչների» ինստիտուտը: Փորձագետի կողմից առաջարկություն հնչեց այս գաղափարի շուրջ փորձել օրենսդրական ինչ-ինչ կանոնակարգումներ նախատեսել:

Այսպիսով՝ **գործողությունը կատարված է ՄԱՍՆԱԿԻ:**

Գործողություն 19. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ինստիտուտի կատարելագործում, նվերների ռեեստրի ստեղծում:

No.	Գործողություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
19	Նվերների ռեեստրը մշակվել և գործարկվում է:	ՀՀ ԱՆ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով (համաձայնությամբ) (Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով) (համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	**Կատարված է մասնակի:** Նվերների ինստիտուտի կատարելագործմանն ուղղված իրավական ակտերի նախագիծը մշակման փուլում է, ինչպես նաև սահմանվել է «Հանրային ծառայողների կողմից նվերների ընդունման արգելքի վերաբերյալ» հայեցակարգի նախագիծը, որոնց վերջնական հաստատմամբ կսահմանվի նվերների ռեեստրի ստեղծման իրավական հիմքը:

Համաձայն ԱՆ 2021թ. մշտադիտարկման հաշվետվության, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների պաշտոնական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ինստիտուտի կատարելագործման և նվերների ռեեստրի տեխնիկական առաջադրանքի կազմման նպատակով միջազգային փորձի համապարփակ վերլուծության հիման վրա ՀՀ արդարադատության նախարարության կողմից դեռևս 2020 թվականին մշակվել է «Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց

և հանրային ծառայողների պաշտոնեական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների ռեեստրի ստեղծման» առաջարկությունների փաթեթը: ԱՆ-ի կողմից կազմված առաջարկությունների փաթեթը ներկայացվել է շահագրգիռ պետական մարմիններին՝ կարծիքի, ինչպես նաև ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ: Այժմ իրականացվում են ստացված առաջարկությունների ամփոփման աշխատանքները: Այսինքն՝ նվերների ինստիտուտի կատարելագործմանն ուղղված իրավական ակտերի նախագիծը մշակման փուլում է, ինչպես նաև սահմանվել է «Հանրային ծառայողների կողմից նվերների ընդունման արգելքի վերաբերյալ» հայեցակարգի նախագիծը, որոնց վերջնական հաստատմամբ կսահմանվի նվերների ռեեստրի ստեղծման իրավական հիմքը:

ՖԽՔ-ի ընթացքում ներկայացվեց, որ 2021 թ. ԱՆ-ը ԵԽ աջակցությամբ սկսել է նվերների ընդունման համակարգի հետ կապված օրենսդրական կարգավորումների ուսումնասիրությունը, որին միացել է ԿԿՀ-ը: Վերջինս ներկայացրել է առաջարկներ, որոնք ընդունվել են: Արդեն կան նաև միջազգային փորձագետների առաջարկները, և նախատեսվում է օրենսդրական փաթեթի մշակումը: Հարցին ի պատասխան, ԿԿՀ ներկայացուցիչը նշեց, որ կարգավորումները չեն վերաբերում պետական պաշտոնյաների կողմից արտասահմանում արվող նվերներին, քանի որ դրանք հանրային ծառայողի բարեվարքության տարր են՝ ԿԿՀ կողմից վերահսկվող:

ՖՔԽ-ի ընթացքում հարց բարձրացվեց, թե արդյո՞ք նախատեսվող օրենսդրական փոփոխությունները նաև կարգավորելու են այն նվերների հարցը, որոնք ՀՀ պետական մարմինները տալիս են, օրինակ՝ այլ պետությունների ներկայացուցիչներին՝ այցերի ժամանակ: Այս կապակցությամբ հաջորդ խնդրահարույց հարցը վերաբերում էր նրան, որ նվերներ ձեռք բերելու ուղղությամբ նվազագույն ծախսերի ընդհանուր ստանդարտներ ՀՀ-ում գոյություն չունեն: ԿԿՀ ներկայացուցիչը այս մասով հայտնեց, որ այդ հարցը իսկապես կարևոր է և արդիական, բայց քանի որ նվերների ընդունման արգելքը հանրային ծառայողների բարեվարքության համակարգի տարր է, ուստի կոնկրետ այս օրենքի նախագծով դրա կարգավորում չի նախատեսվի: Սակայն, կիսում են այն տեսակետը, որ առանձին քննարկման առարկա պետք է դառնա նաև այն կանոնը, թե ինչ նվեր կարող է տալ պետական պաշտոն զբաղեցնող անձը՝ ներկայացուցչական ծախսերի շրջանակում:

Այս գործողության իրականացման ընթացքը բացասական գնահատվեց ոլորտային փորձագետի կողմից, համաձայն որի, ավելի քան չորս տարի ընդունված է «Հանրային ծառայության մասին» նոր օրենքը, որով ամրագրված են նվերների ստացման հետ կապված կանոնակարգումները, սակայն գործնական մակարդակում համապատասխան քայլերի իրականացումը դանդաղում է: Օրենսդրի որոշմամբ՝ ի պաշտոնե նվերների ստացման և հանձնման կարգը սահմանում է կառավարությունը, սակայն առ այսօր նման որոշում ընդունված չէ:

Այսպիսով՝ **գործողությունը կատարված է ՄԱՍՆԱԿԻ:**

Գործողություն 20. Լոբբիստական գործունեության օրենսդրական կարգավորման սահմանում, կուսակցությունների, զանգվածային լրատվության միջոցների ֆինանսավորման թափանցիկության ապահովում:

No.	Գործողություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
20	Առաջարկությունների հիման վրա մշակվել և ՀՀ ազգային ժողով է ներկայացվել իրավական ակտերի նախագծերի փաթեթ:	ՀՀ ԱՆ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) ՀՀ Ազգային ժողով (համաձայնությամբ) Կենտրոնական ընտրական հանձնաժողով (համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	**Կատարված է մասնակի:** Ազգային ժողովի կողմից ընդունվել են կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկությանն ուղղված օրենսդրական ակտերը, տեսալսողական մեդիածառայություն մատուցող իրավաբանական անձանց (որոնց շրջանակում ներառված են նաև զանգվածային լրատվության միջոցները) համար իրական շահառուների բացահայտման պահանջ: Մշակվել են լոբբիստական գործունեության օրենսդրական կարգավորումները, զանգվածային լրատվության միջոցների ֆինանսավորման թափանցիկությանն ուղղված առաջարկությունները:

Սույն միջոցառման շրջանակներում կատարված աշխատանքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ԱԺ-ի կողմից ընդունվել են կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկության ուղղված օրենսդրական ակտեր, տեսալսողական մեդիածառայություն մատուցող իրավաբանական անձանց (որոնց շրջանակում ներառված են նաև ԶԼՄ-ները) համար իրական շահառուների բացահայտման պահանջ, իսկ այդ տվյալները հասանելի են բաց և հանրամատչելի ռեեստրում: Զուգահեռաբար մշակվել են լոբբիստական գործունեության օրենսդրական կարգավորումները, ԶԼՄ-ների ֆինանսավորման թափանցիկությանն ուղղված առաջարկությունները[13]:

Պետական մարմինների ներկայացուցիչների հետ ՖԽՔ-ի ընթացքում կարծիք ներկայացվեց, որ նախկինում արված աշխատանքները մոռացվել են, «մի կողմ են դրվել» կորցնելով ինստիտուցիոնալ հիշողությունը, ինչին ի պատասխան ԱՆ

[13] Աղբյուր՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն որոշմամբ 2021 թվականին կատարման ենթակա միջոցառումների իրականացման մասին» հաշվետվություն

ներկայացուցիչը նշեց, որ այս պահին քննարկման փուլում է առհասարակ լոբբիստական գործունեության մասին օրենքի նպատակահարմարության հարցը: Մեկ այլ պետական մարմնի ներկայացուցիչ նշեց, որ ՀՀ ընտրական օրենսդրությամբ սահմանված են բավականին խիստ չափորոշիչներ: Ընտրական գործընթացների համար նախատեսվել են որոշակի շեմեր՝ թե ինչպիսի ծախսեր պետք է իրականացվեն: Հաշվի առնելով ՀՀ գնային քաղաքականությունը՝ նախընտրական հիմնադրամներին ներկայացվող դրամական շեմերը ամբողջ ծավալով քարոզչությունն իրականացնելու, կազմակերպելու առումով քաղաքական ուժերի համար առաջացնում են խնդիրներ: Ծառայությունների և ապրանքների գներն աննախադեպ աճ են գրանցում ամեն տարի, ուստի պետք է համապատասխանեցումներ կատարվեն: Կան ծախսեր, որոնց վերահսկումը հաշվարկելի չէ, օրինակ՝ թռուցիկների տպագրումը, մարզեր, գյուղեր ուղևորվելու համար վառելիքի ծախսը: Ընտրական օրենսգրքի փոփոխությունները բավականին լուրջ խնդիրներ կարող են առաջացնել, օրինակ՝ ԿԿՀ-ի համար: «Մուծում» բառը փոխարինվել է «նվիրատվություն» բառով: Նվիրատվությունը քաղաքացիաիրավական գործարք է, սակայն անձը նախընտրական հիմնադրամին նվիրատվություն չի կատարում: Ուստի, հանգում ենք նրան, որ փոփոխություններ կատարելու գաղափարը ողջունելի է, սակայն դրանց շուտափույթ իրականացումը հանգեցնում է բազում խնդիրների, քանզի դրանց համալիր կերպով չեն արվում: Տվյալ փոփոխություններն ու լրացումները կյանքի կոչելուց հետո պետք է անցնեն լուրջ իրավական փորձաքննություն՝ հաշվի առնելով, որ ընտրական օրենսգիրքը սահմանադրական օրենք է:

Ըստ ԱՆ հրապարակած հաշվետվության՝ նախագծի պատրաստման գործընթացում մասնակցություն են ունեցել մի շարք պետական հաստատություններ և ՀԿներ: Ուսումնասիրելով ՀԿ-ների ցանկը, պարզ է դառնում, որ սույն գործողությունների իրականացմանը չի ապահովվել մասնագիտացված քաղաքացիական հասարակության մասնակցությունը և կարծիքների բազմազանությունը: **Սա առավել մտահոգիչ է այնպիսի պայմաններում, երբ սույն միջոցառման իրականացման պատասխանատու կառույցներից են նաև ՀԿ-ները:**

Այսպիսով՝ **գործողությունը կատարված է ՄԱՍՆԱԿԻ:**

Գործողություն 21. Հանրային նշանակության կազմակերպությունների իրավական կարգավիճակի հստակեցում և դրանցում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման գործիքակազմի ներդրում՝ այդ թվում առկա կոռուպցիոն ռիսկերի վերհանում և դրանց հաղթահարման մեխանիզմների ներդրում:

No.	Գործողություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք

21	Հանրային նշանակության կազմակերպությունների կարգավիճակը հստակեցվել է և ներդրվել է կոռուպցիոն ռիսկերի նվազեցման արդյունավետ գործիքակազմ:	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ ԱՆ Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	**Կատարված չէ:** Հանրային նշանակության կազմակերպություններում հակակոռուպցիոն համապատասխանության ներդրման պրակտիկան չի ընդլայնվել:

Սույն միջոցառման իրականացման շրջանակներում ուսումնասիրվել է հանրային նշանակության կազմակերպությունների իրավական կարգավիճակը, հակակոռուպցիոն համապատասխանության վերաբերյալ միջազգային փորձը, որի արդյունքները քննարկվել են հանրային նշանակության կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, սակայն դեռևս չի հստակեցվել հանրային նշանակության կազմակերպությունների կարգավիճակը: ՖԽՔ-ի ընթացքում ԱՆ ներկայացուցիչը նույնպես հավաստեց, որ ԱՆ-ի կողմից 2021 թ. կատարվել է ուսումնասիրություն, և այս պահին աշխատանքներ են տարվում միջազգային գործընկերների հետ, առաջիկայում հնարավոր է դիտարկել նաև միջազգային փորձագետների ներգրավումը գործընթացում:

Այսպիսով՝ **գործողությունը ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ:**

Գործողություն 22. Գործարար ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության պահանջների ընդունման խթանում:

No.	Գործողություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
22	Մասնավոր ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության պահանջներն ամրագրվել են համապատասխան իրավական ակտերում:	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	**Կատարված է:** Կառավարության հաստատմանն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1769-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և «Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագրքին հավանություն տալու մասին» Կառավարության որոշման նախագիծը

«Մասնավոր ոլորտում հակակոռուպցիոն համապատասխանության պահանջներն ամրագրվել են համապատասխան իրավական ակտերում» գործողության իրականացումը նախատեսվում է որպես 2021-2022 թվականների արդյունք, ուստի այս գործողության իրականացման վերաբերյալ գնահատում չի կատարվել: Ինչպես ներկայացված է ԱՆ 2021թ. մշտադիտարկման հաշվետվությունում, Կառավարության հաստատմանն է ներկայացվել Միացյալ Թագավորության Լավ կառավարման հիմնադրամի կողմից ֆինանսավորվող «Կորպորատիվ կառավարման և ֆինանսական հաշվետվողականության բարելավված կանոնակարգ» ծրագրի շրջանակում «ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» (PwC) ընկերության ու Կորպորատիվ Կառավարման Կենտրոնի աջակցությամբ մշակված «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1769-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագրքին հավանություն տալու մասին» կառավարության որոշման նախագիծը, որով նոր խմբագրությամբ շարադրվել է կորպորատիվ կառավարման կանոնագիրքը: Նախագծով, ի թիվս այլ սկզբունքների, ամրագրվել են մասնավոր հատվածում էթիկական և հակակոռուպցիոն համապատասխանությունը խթանող սկզբունքները, որոնց իրագործման պարտականությունը դրվել է տնօրենների խորհրդի վրա: Բացի այդ, նախագծում նախատեսվել է, որ ընկերություններում պետք է ձևավորվի ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգ, որի կարևոր բաղադրիչներից է հակակոռուպցիոն համապատասխանության գործառույթը: Նախագծով այս գործառույթն իրականացնող անձի վրա դրված է նաև հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրի ներդրմանը նպաստելու և դրա նկատմամբ մշտադիտարկումն իրականացնելու պարտականությունները:

Իրականացվել են «Գործարար բարեվարքություն. կորպորատիվ մշակույթ և հակակոռուպցիոն համապատասխանություն» թեմայով վերապատրաստումներ:

Այս հարցի վերաբերյալ ԱՆ ներկայացուցիչը ՖԽՔ-ի ընթացքում ներկայացրեց, որ Կառավարության որոշման նախագիծ է նախապատրաստվում, որում առկա նոր կարգավորումները հնարավորություն կտան կազմակերպություններում կորպորատիվ կանոնագրքերի ներդրման առավել ճկուն համակարգեր ներդնել:

Կորպորատիվ կառավարման ոլորտի փորձագետի հետ խորքային հարցազրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց Կորպորատիվ կառավարման կանոնագրքին, որի շուրջ քննարկումները շարունակվում են 2019 թվականից: Համաձայն փորձագետի՝ քննարկումների բավականին արդյունավետ շրջան էր 2019 թվականը և մի շրջան 2020 թվականից: Այդ քննարկումների արդյունքում որոշակի փոփոխություններ արտացոլվել են կանոնագրքում, սակայն ներկայումս կանոնագրքի ընդունման գործընթացը դանդաղում է: Փորձագետն առաջարկում է առավելություններ տալ գնումների գործընթացում կորպորատիվ կառավարման լավ փորձ ունեցող կազմակերպություններին, որպեսզի խթանվի կորպորատիվ կառավարման

սկզբունքների կիրառումը: Այս և այլ առաջարկների ընդունումը կախված է կանոնագրքի ընդունումից, որը, համաձայն փորձագետի, «տեղից չի շարժվում»:

Փորձագետի կողմից հնչեց նաև առաջարկություն ռազմավարության մշակման գործընթացում ներգրավել նաև բիզնես համայնքին, քանի որ այս համայնքը ևս հանդիսանում է գործողությունների շահառու կողմ և կարող է լավագույնս արտացոլել այս ոլորտի հիմնախնդիրները: Համաձայն փորձագետների, ներկայումս պետություն-մասնավոր հատված որոշակի քննարկումներ իրականացվում են, սակայն դրանք դեռևս բավարար չեն ոլորտային բոլոր հիմնախնդիրները հասցեագրելու համար: Այսպիսի համագործակցությունը կարող է իրականացվել բիզնես ասոցիացիաների, առևտրաարդյունաբերական պալատների, աջակցող գրասենյակների միջոցով: Առաջարկվում է նաև հաշվի առնել և միասնականացնել տարբեր ասոցիացիաների կողմից մշակվող կանոնակարգերը: Անհրաժեշտություն կա նաև բիզնես հատվածի համար հանրայնացնել կանոնակարգը և նշել հակակոռուպցիոն կանոնակարգեր ունենալու առավելությունները բիզնեսի համար:

Այսպիսով՝ **գործողությունը ԿԱՏԱՐՎԱԾ է:**

Գործողություն 23. Գնումների ոլորտի բարելավում:

No.	Գործողություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
23	Ուսումնասիրության հիման վրա մշակվել և ընդունվել է նախագծերի փաթեթ՝ ուղղված գնման գործընթացների պարզեցմանը, գնման գործընթացի որոշակիության ապահովմանը:	ՀՀ ֆինանսների նախարարություն	**Կատարված է ամբողջությամբ:** Գնումների ոլորտի օրենսդրության բարելավման և հստակեցմանն ուղղված նախագծերի փաթեթը 2021 թվականի նոյեմբերի 17-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1-ին ընթերցմամբ:

Համաձայն ԱՆ 2021թ. մշտադիտարկման հաշվետվության, 2021 թվականի փետրվարի 16-ին կայացած Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստի ընթացքում, ի թիվս այլ հարցերի, քննարկվել է դեռևս 2020 թվականի մշակված և Կառավարության քննարկմանը ներկայացված «Գնումների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» և «ՀՀ քաղաքացիական դատավարության

օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը (այսուհետ՝ Նախագծերի փաթեթ): 2021 թվականի նոյեմբերի 17-ին նախագծերի փաթեթը ԱԺ-ի կողմից ընդունվել է 1-ին ընթերցմամբ:

Ի պատասխան այն դիտարկման, որ վերջին տարիներին ավելացել են մեկ անձից գնումները՝ Ֆինանսների նախարարության ներկայացուցիչը նշեց, որ այս ուղղությամբ աշխատանքներ են տարվում և մեկ անձից գնումների ավելացումը պայմանավորված է նաև բյուջետային ծախսերի մեծացմամբ: Չնախատեսված միջոցառումների առումով իրենց ազդեցությունն են ունեցել նաև համավարակը և պատերազմը: Նախարարության ներկայացուցիչը 2022թ.-ի համար կանխատեսում է առավել բարելավված իրավիճակ:

Ոլորտային փորձագետը, հիմք ընդունելով իրենց կողմից արված հետազոտության արդյունքները, նշեց, որ մեկ անձից գնումների 72%-ը ուղղված են պետական պատվերի շրջանակում առողջապահական ծառայությունների գնմանը, որի դեպքում պետությունն այլընտրանք չունի: Առողջապահության նախարարությունը համապատասխան իրավիճակներում հայտարարում է գնումներ, եթե կա նույն ծառայությունը մատուցող մի քանի հաստատություն: Այս ոլորտում մեկ անձից գնումների խնդիրն այլևս արդիական չի լինի 2023թ.-ից ուժի մեջ մտնող առողջապահական ապահովագրությունից հետո:

Մեկ անձից գնումների մյուս 10%-ը բնական մոնոպոլիաներն են, որտեղ նույնպես այլընտրանք չկա: Փորձագետի կողմից այստեղ առաջարկվում է նոր ընթացակարգ՝ ներմուծել «այլընտրանք չունեցող գնումների» հասկացությունը, քանի որ դրանք ուղղակի արհեստականորեն բարձրացնում են մեկ անձից գնումների ցուցիչը: Մնացած մասը մեծապես մինչև 1 մլն դրամի գնումներն են: Այս մասով առաջարկվում է ՀՈԱԿ-ների ընդհանրական ապրանքների գնումներն իրականացնել կենտրոնացված՝ մանավանդ ներկայիս համայնքների խոշորացման պայմաններում:

Փորձագետը նշում է նաև, որ անհրաժեշտ է ձգտել, որ պետական բոլոր գնումներն արվեն էլեկտրոնային ձևաչափով, ինչը զգալիորեն նվազեցնում է կոռուպցիոն ռիսկերը, այդ թվում՝ ՏԻՄ-երի մակարդակում: Միևնույն ժամանակ, համաձայն փորձագետի, էական է նաև մասնակիցների գործոնը, որոնք կարող են միմյանց հետ պայմանավորվածություններ ձեռք բերել և այլն, այսինքն՝ մտածելակերպի, մշակութային գործոնը ևս մեծ դեր կարող է խաղալ: Այս ոլորտում մեկ այլ փորձագետ ներակայացրեց, որ արդեն իսկ կան դրական արձագանքներ ՓՄՁ-ների կողմից գնումների գործընթացների պարզեցման մասով:

Այսպիսով՝ **գործողությունը կատարված է ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ:**

Գործողություն 24. Իրավաբանական անձանց իրական սեփականատերերի ինստիտուտի ներդրում:

No.	Գործողություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
24	Ճանապարհային քարտեզին համապատասխան՝ տարբեր ոլորտներում շարունակաբար ներդրվում է իրական սեփականատերերի բացահայտման պահանջ:	ՀՀ ԱՆ Պետական կառավարման համակարգի մարմիններ Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	**Կատարված է ամբողջությամբ:** 2021 թվականի հունվարի 18-ին հաստատվել է իրավաբանական անձանց իրական շահառուների ինստիտուտի ներդրման ճանապարհային քարտեզը, իսկ 2021 թվականի հունիսի 3-ին ընդունվել են իրավաբանական անձանց իրական շահառուների բաց և հանրամատչելի ռեեստրի ստեղծմանը, ինչպես նաև Հայաստանում գործող բոլոր իրավաբանական անձանց համար փուլ առ փուլ իրական շահառուների բացահայտման պարտադիր պահանջի սահմանմանն ուղղված օրենսդրական ակտերը:

Ինչպես ներկայացված է ԱՆ 2021թ. մշտադիտարկման հաշվետվությունում, մասնավոր ոլորտում թափանցիկության բարձրացման նպատակով, իրավաբանական անձանց իրական սեփականատերերի բացահայտման գործուն մեխանիզմներ ներդնելու համար դեռևս 2020 թվականին մշակվել և 2021 թվականի հունվարի 18-ին հաստատվել է ՀՀ վարչապետի «Իրավաբանական անձանց իրական շահառուների ինստիտուտի ներդրման ճանապարհային քարտեզը հաստատելու մասին» N 30-Ա որոշումը, որով նախանշվել են իրական սեփականատերերի (շահառուների) բացահայտման առաջնային ոլորտները և համապատասխան ժամկետները: Ճանապարհային քարտեզին համապատասխան 2021 թվականի հունիսի 3-ին ԱԺ-ի կողմից ընդունվել է իրավաբանական անձանց իրական շահառուների բաց և հանրամատչելի ռեեստրի ստեղծմանը, ինչպես նաև Հայաստանում գործող բոլոր իրավաբանական անձանց համար փուլ առ փուլ իրական շահառուների բացահայտման պարտադիր պահանջի սահմանմանն ուղղված օրենսդրական փաթեթը:

Հիմք ընդունելով «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի 60.3-րդ հոդվածի 6-րդ մասը՝ ՀՀ ԱՆ-ի՝ 2021 թվականի օգոստոսի 30-ի հրամանով սահմանվել են իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևը, դրա լրացման և ներկայացման կարգը, իրական շահառուների վերաբերյալ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն ներկայացված վերջին հայտարարագրի հաստատման կարգը, իրական շահառուների բացահայտման համարժեք չափանիշներով կարգավորվող շուկաների ցանկը: Զուգահեռաբար դեռևս 2021 թվականի փետրվարից գործարկվել է պետական գրանցում ստացած իրավաբանական անձանց իրական

շահառուների (սեփականատերերի) վերաբերյալ տեղեկությունների ընդհանուր և հանրամատչելի էլեկտրոնային հարթակը: 2021 թվականից իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրերը ներկայացվում են վերոնշյալ համակարգով:

Համաձայն գործողության իրականացման համար պատասխանատու պետական մարմինների ներկայացուցիչների՝ ինստիտուտն ի սկզբանե՝ 2019 թ. ներդրվել է միայն ընդերքօգտագործողների համար, այնուհետև էներգետիկայի ոլորտում, 2021 թ. հունիսի 28-ին ուժի մեջ մտած օրենքով ներդրվեց իրական սեփականատիրոջ և շահառուների հասկացությունների համախմբված սահմանումը, միաժամանակ, իրական շահառուների բացահայտման պարտականությունը (իրավաբանական բոլոր տեսակի անձանց համար) դրվեց փուլային տարբերակով: Սեպտեմբերին պարտականությունն ուժի մեջ է մտել հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում գործունեություն և տեսալսողական ծառայություն իրականացնող ընկերությունների համար: 2022թ. հունվարից պարտականությունն ուժի մեջ է մտել բոլոր իրավաբանական անձանց համար՝ բացառությամբ ոչ առևտրային կազմակերպությունների և միայն ֆիզիկական անձ ունեցող ՍՊԸ-ների համար: 2023թ. հունվարից պարտականությունը գործելու է բոլոր իրավաբանական անձանց համար:

Ինչ վերաբերում է համակարգին, Կառավարության որոշումներով և որոշակի օրենսդրական փոփոխություններով պայմանավորված՝ իրականացվել են փոփոխություններ: Ընթացքում երբեմն եղել են ծրագրային խնդիրներ, սակայն այժմ խնդիրը կարգավորված է, և իրավաբանական անձինք հայտարարագրերը ներկայացնում են համակարգի միջոցով:

Անդրադառնալով համակարգում առկա տեղեկատվության հանրայնությանը՝ պատասխանատու պետական մարմինների ներկայացուցիչը նշեց, որ վերոնշյալ փոփոխություններով բոլոր իրավաբանական անձնաց համար սահմանվել է հրապարակային տվյալների ընդհանուր կանոն (որոշ տեսակի կազմակերպությունների դեպքերում սահմանելով առանձնահատուկ կանոններ), և այժմ համակարգում կարելի է տեսնել իրական շահառուների վերաբերյալ որոշակի տվյալներ:

Այսպիսով՝ **գործողությունը կատարված է ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ:**

Գործողություն 25. Տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի վերաբերյալ օրենսդրության կատարելագործում:

No.	Գործողություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
25	Առաջարկությունների փաթեթի հիման վրա մշակվել են իրավական ակտերի նախագծեր,	ՀՀ ԱՆ	**Կատարված է մասնակի:** ««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի և հարակից օրենքներում փոփոխություններ և

	ներկայացվել ՀՀ Վարչապետի աշխատակազմ:	Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով (համաձայնությամբ)	լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը Հանձնաժողովի կողմից մշակվել, շրջանառվել, ապա Կառավարության կողմից հավանություն են ստացել և անհետաձգելի կարգով ներկայացվել Ազգային ժողով: 2021 թվականի մարտի 3- ին ընդունվել է ««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-92-Ն օրենքը, որն ուժի մեջ է մտել 2021 թվականի մայիսի 31-ին, բոլոր ենթաօրենսդրական ակտերն ընդունվել են: Իրավական ակտերը չեն քննարկվել Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդում:

Ինչպես ներկայացված է ԱՆ 2021թ. մշտադիտարկման հաշվետվությունում, Ազգային ժողովի կողմից 2021 թվականի մարտի 3-ին ընդունվել և նույն թվականի մայիսի 31-ին ուժի մեջ են մտել «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքները:

Ոլորտի իրավական բարեփոխումների շրջանակում իրականացվել է նաև «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունումը: Այսպես, Հանձնաժողովի կողմից ընդունվել են 18 ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր, այդ թվում՝ Հանձնաժողովի աշխատակարգը, չհիմնավորված բարձր գնի և չհիմնավորված ցածր գնի որոշման կարգը, պետական օժանդակության գնահատման կարգը, պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը, գաղտնագրման ենթակա հաղորդումը ներկայացնելու և այն գաղտնագրելու կարգը, ապրանքների և ծառայությունների անհատականացման միջոցների շփոթության աստիճանի նմանության որոշման կարգը և Հանձնաժողովի գործունեությունն ապահովող մի շարք այլ ակտեր: Ըստ Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի՝ Նախագծերի փաթեթը ներկայացվել է շահագրգիռ բոլոր մարմիններին՝ այդ թվում պետական մարմիններին, Փաստաբանների պալատին, գիտական հանրույթին, հասարակական կազմակերպություններին, դիրքորոշում ստանալու նպատակով: Այն նաև հրապարակվել է www.e-draft.am կայքում:
Միաժամանակ նշենք, որ 2021 թվականի փետրվարի 16-ին[14] և հոկտեմբերի 28-ին[15] կայացած Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստերի արձանագրությունից և հրապարակված տեղեկատվությունից հետևում է, որ նախքան դրանց ընդունումը նախագծերը չեն քննարկվել են խորհրդի նիստում, հետևապես գործողությունն ամբողջությամբ կատարված

[14] https://anti-corruption.gov.am/am/news_page?content.cid=130
[15] https://anti-corruption.gov.am/am/news_page?content.cid=132

չէ: Հիշյալը Հանձնաժողովը պայմանավորեց այն հանգամանքով, որ նախագծերի մշակման և ընդունման ընթացքում կայացել է Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի երկու նիստ. 2020 թվականի հուլիսի 3-ին տեղի ունեցած Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստի ընթացքում օրենքի նախագծերը դեռևս մշակված և ավարտված չէին, որպիսի պայմաններում դրանք չեն քննարկվել: Ինչ վերաբերում է Խորհրդի հաջորդ նիստին, ապա այն տեղի է ունեցել 2021 թվականի փետրվարի 16-ին, երբ օրենքի նախագիծն արդեն իսկ Կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի նիստում հավանության է արժանացած եղել և 2020 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 2117-Ա որոշմամբ անհետաձգելի համարվելով՝ 2021 թվականի հունվարի 18-ին ընդգրկվել է ԱԺ նստաշրջանի օրակարգ և ընդունվել 2021 թվականի մարտի 3-ին:

Այսպիսով՝ **գործողությունը կատարված է ՄԱՍՆԱԿԻ:**

ՈԼՈՐՏ 2.3. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ (էլեկտրոնային կառավարման գործիքների ներդրում, պետական կառավարման գործընթացին հասարակության մասնակցության մեխանիզմների ներդրում և կատարելագործում, վարչարարության պարզեցում)

Գործողություն 26. Քաղաքացիների դիմումների, բողոքների, հարցումների թեժ գծի միասնական հարթակի ներդրում

No.	Գործողություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
26	Վիճակագրական ճկուն գործիքների ներդրման արդյունքում ապահովված է գործադիր իշխանության մարմինների գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը:	ՀՀ Վարչապետի աշխատակազմ ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	**Կատարված է մասնակի:** Քաղաքացիների դիմումների, բողոքների, հարցումների թեժ գծի միասնական հարթակը ներդրվել է, զուգահեռաբար ապահովվել է գործադիր իշխանության մարմինների գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը: Վիճակագրական ճկուն գործիքների ներդրման ուղղությամբ աշխատանքներ չեն իրականացվել:

2021 թվականի ընթացքում ուսումնասիրվել են թեժ գծի հեռախոսակապ ունեցող գերատեսչություններում ներդրված համակարգերը: Դիտարկվել են արդեն գործող թեժ գծի համակարգերը Վարչապետի աշխատակազմի թեժ գծին, ինչպես նաև 158 պետական մարմինների էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության Մալբրի համակարգին ինտեգրելու հնարավորությունները: Միաժամանակ, թեժ գիծը չպետք է ընկալել որպես հեռախոսային համակարգ: Գործում է էլեկտրոնային հարցումների միասնական e-request.am հարթակը, որով քաղաքացիները 2021թ.-ի ընթացքում ուղարկել են 8.000-ից ավելի բողոք և 14.000-ից ավելի հարցում: 2021թ.-ի առաջին կիսամյակում հարթակի միջոցով հասանելի մարմինների քանակը կրկնապատկվել է՝ հասնելով 140-ի: Քաղաքացիների դիմումների, բողոքների, հարցումների թեժ գծի միասնական հարթակը համաձայն մշակված տեխնիկական բնութագրի ծրագրավորվել է և անցնելով թեստավորման համապատասխան փուլեր հաջողությամբ ներդրվել վեբ միջավայրում՝ հասանելիությունը e-hotline.am հասցեով:

Միաժամանակ, համաձայն ՀՀ կառավարության հաշվետվություն՝ սույն միջոցառման շրջանակներում նախատեսված վիճակագրական ճկուն գործիքների ներդրումը չի իրականացվել: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ միջոցառումը համարվում է մասնակի կատարված:

Ինչպես արձանագրվեց ՖԽՔ-ի ժամանակ, հարթակը հարմարեցված չէ հատուկ կարիքներ ունեցող անձանց: Միևնույն ժամանակ հարթակը չի բացառում թղթային տարբերակով դիմումներ, բողոքներ ներկայացնելու հնարավորությունը և այն զուտ լրացուցիչ գործիք է, որն ապահովում է էլեկտրոնային եղանակով դիմումներ, բողոքներ ներկայացնելու հնարավորության մատչելիությունը՝ ի լրումն դիմում-բողոքը թղթային ներկայացման տարբերակի: Հավելվեց, որ քննարկվել է ձայնային եղանակով գործիքի ներդրման հնարավորությունը, սակայն հայերեն լեզվի դեպքում այդ գործիքը դեռևս տեխնիկապես հասանելի չէ և դիմում-բողոքները ընդունվում են միայն տեքստային շարադրմամբ:

Գործողության կատարման պատասխանատու գերատեսչությունների և այլ կառույցների ներկայացուցիչների հավաստմամբ՝ վերջերս իրականացված հարթակի բարելավման աշխատանքների արդյունքում ավելացվել է գնահատման հնարավորություն, որը թույլ է տալիս մի կողմից գնահատել բուն հարթակի գործունեությունը (մատչելիություն, հարմարություն և այլն), մյուս կողմից գնահատվում է նաև համապատասխան պետական մարմնի աշխատանքը (ժամկետներ, բավարարվածություն պատասխաններից):

Այսպիսով՝ **գործողությունը կատարված է ՄԱՍՆԱԿԻ:**

Գործողություն 27. Իրավական ակտերի նախագծերի մշակման գործընթացին հասարակության մասնակցայնության ապահովման արդյունավետության բարձրացում:

No.	Գործողություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
27	Ապահովված է հասարակության լայն շերտերի կողմից պետության իրավաստեղծ գործընթացին մասնակցության հնարավորությունը: Զուգահեռաբար իրականացվում են www.e-draft.am հարթակի, ինչպես նաև դրանից օգտվելու կանոնների մասին հանրության իրազեկման միջոցառումներ:	ՀՀ ԱՆ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	**Գործողությունը կատարված չէ:** Հարթակի հետ կապված հանրային իրազեկման միջոցառումներ չեն իրականացվել: e-draft.am-ի որոշ ֆունկցիաներ այլևս հասանելի չեն:

Սույն միջոցառման շրջանակներում կատարված աշխատանքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հանրային իրազեկման գործընթացը մեկնարկելու համար որոշակի աշխատանքներ են իրականացվել, տեղեկատվական նյութեր են մշակվել, զուգահեռաբար աշխատանքներ են ձեռնարկվել հարթակի բարելավման նպատակով ֆինանսական աջակցության ստացման համար:

Վիճակագրական տվյալների ուսումնասիրությունից հանրության մասնակցության աճի առնչությամբ պարզ է դառնում հետևյալը.

- Ըստ գրանցված օգտատերերի քանակի՝ 2021 թվականին 2020 թվականի համեմատությամբ արձանագրվել է 192% աճ:
- Ըստ տեղադրված նախագծերի քանակի՝ 2021 թվականին 2020 թվականի համեմատությամբ արձանագրվել է 16,55 % աճ:
- Ըստ ներկայացված առաջարկությունների քանակի 2021 թվականին 2020 թվականի համեմատությամբ արձանագրվել է 51,4 % անկում:
- Ըստ կայք կատարած այցելուների քանակի՝ 2021 թվականին 2020 թվականի համեմատությամբ արձանագրվել է 22,1 % աճ:

Այսինքն, թեև օգտատերերի ակտիվություն է նկատվել, ինչը բխում է նրանից, որ շուրջ 2 անգամ աճել է գրանցված օգտատերերի քանակը, ինչպես նաև այցելուների քանակը՝ 22,1 %-ով, սակայն 2021 թվականին ներկայացված առաջարկությունների անկում է գրանցվել: Ինչպես պարզ դարձավ շահագրգիռ կողմերի հետ անցկացված ՖԽՔ-ի արդյունքներից՝ այս անկումը պայմանավորված է նրանով, որ հարթակում ներկայացված առաջարկները չեն ընդունվում պատասխանատու գերատեսչությունների կողմից: Պետական մարմինների հետ անցկացված ՖՔԽ-ի ընթացքում բարձրացված հիմնական մտահոգությունը նույնպես վերաբերում էր վերոգրյալին: Փորձագետները, մասնավորապես նշում էին, որ վերջին շրջանում չեն ստանում ծանուցումներ հարթակից, այն դեպքում, երբ վերբեռնվում են նոր իրավական ակտերի նախագծեր: Այսինքն, հանրությունը չի տեղեկացվում թե ինչ նախագծեր են մշակվել: Խնդիր կա նաև նախագծերի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների ընդունված/չընդունված լինելու ամփոփաթերթերի մասով: Օրինակ, շահագրգիռ կողմերի

ներկայացուցիչները մտահոգություն են հայտնում, որ երբեմն e-draft-ում բացասական արձագանքներ ստացած օրենքների նախագծերը հետագայում ընդունվում են և հարց է ծագում, թե որքանով արդյունավետ է հարթակն այս համատեքստում գործում: ՔՀԿ ներկայացուցիչները և փորձագետները հարցադրում են իրականացնում, թե գործնական քիչ ազդեցություն է ունենում այս հարթակը որոշումների կայացման վրա: Համաձայն փորձագետի՝ e-draft-ում կարծիքների հավաքագրումը ներկայումս ավելի շատ կրում է ձևական բնույթ և ՔՀԿ-ների, շահագրգիռ կողմերի կողմից ներկայացված առաջարկությունները, կարծիքները պատշաճ արձագանք չեն ստանում: Այն իրականում դարձել է նախագծերին ծանոթանալու կայք:

Ըստ ՀՀ ԱՆ-ի՝ հարկ է առավել համալիր ուսումնասիրություն իրականացնել՝ հասկանալու այս կամ այն առաջարկն ընդունելու/չընդունելու պատճառները՝ նկատի ունենալով, որ հաճախ ներկայացվում են ոչ վերաբերելի, կարգավորման առարկայի շրջանակին չվերաբերող առաջարկներ: Բացի այդ, չընդունելու պատճառներից է երբեմն ընդհանուր քաղաքականության ուղղվածությանն անհամապատասխանությունը: Այսպիսով, նշված տեղեկատվության, վերստուգիչ ցուցիչի և ակնկալվող արդյունքի համադրությունից հետևում է, որ սույն միջոցառումը չի կատարվել:

Այսպիսով՝ **գործողությունը ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ:**

Գործողություն 28. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիներին առավել շատ մատուցվող ծառայությունների վերաբերյալ մատչելի տեղեկատվություն ստանալու գործիքակազմի ներդրում:

No.	Գործողություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
28	Իրականացվել են մատուցվող ծառայությունների վերաբերյալ մատչելի տեղեկատվություն ստանալու գործիքակազմի ներդրման միջոցառումներ:	ՀՀ Վարչապետի աշխատակազմ Պետական կառավարման համակարգի մարմիններ Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ (համաձայնությամբ)	**Կատարված է:** Մի շարք պետական մարմինների կայքէջերում հրապարակվել են մատուցվող ծառայությունների վերաբերյալ դիմումի լրացման օրինակելի ձևերը, զուգահեռաբար աշխատանքներ են իրականացվել մատուցվող ծառայությունների վերաբերյալ մատչելի տեղեկատվություն ստանալու գործիքակազմի ներդրման ուղղությամբ:

Ինչպես ներկայացված է «ԱՆ 2021թ. մշտադիտարկման հաշվետվությունում, մի շարք պետական մարմինների պաշտոնական կայքէջերում տեղադրված են որոշ ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն՝ դիմելու կարգը, տարբերակները, դիմումին

ներկայացվող պահանջները և օրինակելի ձևերը: Խնդրի ինստիտուցիոնալ ու համակարգային լուծումների իմաստով ներկայումս հանրային կառավարման բարեփոխումների շրջանակներում նախագծվում է հանրային ծառայությունների մատուցման միասնական հարթակը՝ e-gov.am, որը դառնալու է մեկ պատուհանի սկզբունքով ծառայությունների մատուցման պլատֆորմ և ապահովվելու է մեկ միջավայրում պետության և համայնքների կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը հանրային օգտագործման տեսակետից հարմարավետ տարբեր ձևաչափերով, ուղեցույցներով:

Համաձայն ՖԽՔ-ն ընթացքում ԱՆ ներկայացուցչի կողմից ներկայացված տեղեկատվության, այս գործողության իրականացումը խաչվում է մյուս միջոցառման հետ, որով e-gov.am հարթակի շրջանակում նախատեսվում է մեկ հարթակում համատեղել և ամփոփ ներկայացնել միջպետական, ՏԻՄ-երի կողմից մատուցվող ծառայությունները՝ թե՛ առցանց մատուցվող, թե՛ մյուս տարբերակով մատուցվող ծառայությունների մասով: Այս հարթակն ավելի հասանելի ու հեշտ օգտագործելի կլինի քաղաքացիների համար՝ ի տարբերություն առանձին կայքերում ներկայացված տարբերակի:

Այսպիսով՝ **գործողությունը ԿԱՏԱՐՎԱԾ Է:**

Գործողություն 29. Միասնական օպերատորների sso.am էլեկտրոնային համակարգի արդիականացում և e-gov.am-ի շրջանակներում էլեկտրոնային հարթակի ներդրում:

No.	Գործողություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
29	Ներդրվել է պետական և համայնքային ծառայությունների միասնական շտեմարան, մատուցվող ծառայությունների վերաբերյալ էլեկտրոնային գնահատման հնարավորություն, ինչպես նաև մատուցվող ծառայությունների վերաբերյալ վիճակագրության միասնական համակարգ:	ՀՀ Վարչապետի աշխատակազմ ՀՀ ԱՆ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ (համաձայնությամբ)	**Կատարված է մասնակի:** Ներդրվել է և հանրային ծառայությունների միասնական գրասենյակներում օգտագործվում է sso.am հարթակը՝ միայն ներքին հասանելիությամբ: Մատուցվող ծառայությունների վերաբերյալ էլեկտրոնային գնահատման հնարավորությունների, ինչպես նաև մատուցվող ծառայությունների վերաբերյալ վիճակագրության միասնական համակարգի ներդրման ուղղությամբ աշխատանքներ չեն իրականացվել:

Համաձայն ԱՆ 2021թ. մշտադիտարկման հաշվետվության, նախագծվել է sso.am հարթակը, որը կիրառում են ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 27-ի N 1109-Ն որոշման համաձայն պետական իշխանության մարմինների սպասարկման գրասենյակների գործառույթներ իրականացնող օպերատորները: Սույն միջոցառումը մասնակի է կատարվել, քանի որ մատուցվող ծառայությունների վերաբերյալ էլեկտրոնային գնահատման հնարավորությունների, ինչպես նաև մատուցվող ծառայությունների վերաբերյալ վիճակագրության միասնական համակարգի ներդրման ուղղությամբ աշխատանքներ չեն իրականացվել: Հարկ է ավելացնել, որ սույն հարթակը նախատեսված չէ քաղաքացիների համար, այլ նախատեսված է միայն համայքային միասնական ծառայություններ մատուցող մարմինների ներքին օգտագործման համար:

ՖԽՔ-ի ընթացքում էԿԵՆԳ-ի ներկայացուցչի հավաստմամբ, մատուցվող ծառայությունների վերաբերյալ էլեկտրոնային գնահատումն իրականացնելու են քաղաքացիները: Քաղաքացիների հետ հետադարձ կապի ծրագրի շրջանակում ստեղծվել է Gnahatir.am հարթակը, որը ներկայումս հասանելի է քաղաքացիներին: Երբ քաղաքացին ստանում է որևէ ծառայություն, դրա հետ միասին տրամադրվում է հսկիչ համար, և այդ հսկիչ համարով նա հետագայում կարող է գնահատել ստացված ծառայության որակը՝ պատասխանելով մի քանի հարցերի Gnahatir.am հարթակում: Անդրադառնալով Gnahatir.am հարթակում քաղաքացիների մասնակցությանը՝ էԿԵՆԳ-ի ներկայացուցիչները նշեցին, որ հարթակն ունի վիճակագրության առանձին բաժին, որտեղ ներկայացված են գնահատմանը մասնակցած քաղաքացիների թիվը, պատասխանների բաշխումը, ժամանակահատվածը և այլն:

Շահագրգիռ կողմերի հետ անցկացված ՖԽՔ-ի ընթացքում պարզ դարձավ, որ ՔՀԿ-ները և փորձագետները տեղեկացված չեն Gnahatir.am հարթակի մասին, ինչը թույլ է տալիս եզրակացնելու, որ հարթակի վերաբերյալ հանրային իրազեկման աշխատանքներ բավականաչափ չեն տարվում:

Այսպիսով՝ **գործողությունը կատարված է ՄԱՍՆԱԿԻ:**

Գործողություն 30. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի շրջանակներում պահանջվող տեղեկատվության պրոակտիվ հրապարակման միասնական հարթակի ստեղծում

No.	Գործողություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
30	Տեղեկատվության պրոակտիվ հրապարակման միասնական հարթակի տեխնիկական առաջադրանքը մշակված է:	ՀՀ Վարչապետի աշխատակազմ Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ (համաձայնությամբ) ՀՀ ԱՆ	**Կատարված չէ:** Տեխնիկական առաջադրանքը մշակված չէ:

		ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	

Համաձայն ԱՆ 2021թ. մշտադիտարկման հաշվետվության, տվյալ միջոցառման շրջանակներում 2021 թվականի համար նախատեսված աշխատանքների գնահատման համար առկա տեղեկատվության համաձայն միջոցառումը կատարված չէ: Տեղեկատվության պրոակտիվ հրապարակման միասնական հարթակի տեխնիկական առաջադրանքը մշակված չէ:

Շահագրգիռ մարմինների հետ ՖԽՔ-ի ընթացքում նույնպես հաստատվեց, որ գործողությունը կատարված չէ: ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը համարվում է գործողության իրականացնող կողմ, սակայն նախարարությունից փոխանցվել է տեղեկատվություն, որ դեռևս կատարվում է փորձի ուսումնասիրություն: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ ԱՆ մոնիթորինգային խմբին այս գործողության իրականացման վերաբերյալ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունից փոխանցվել է ոչ լիարժեք տեղեկատվություն, ինչը դժվարացնում է այս գործողության իրականացման գնահատումը: Գործողության իրականացման հետ կապված հետագա տարիների համար նախատեսվում են որոշակի փոփոխություններ: Սրան զուգահեռ, նշյալի վերաբերյալ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունից հայտնում են, որ տեղեկատվության պրոակտիվ հրապարակման միասնական հարթակի տեխնիկական առաջադրանքի մշակման վերաբերյալ նախարարությունը տեղեկատվություն չի ստացել:

Այսպիսով՝ **գործողությունը ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ:**

Գործողություն 31. Ազդարարման համակարգի շարունակական կատարելագործում:

No.	Գործողություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
31	Կատարված ուսումնասիրությունների հիման վրա ազդարարման համակարգի արդյունավետությանն ուղղված առաջարկությունների ներկայացում և քննարկում Հակակոռուպցիոն	ՀՀ ԱՆ ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)	**Կատարված է ՄԱՍՆԱԿԻ:** Ազդարարման համակարգի արդյունավետությանն ուղղված ուսումնասիրությունը շարունակական բնույթ է կրել 2021 թվականին: Այնուամենայնիվ, բացահայտված խնդիրները չեն քննարկվել

	քաղաքականության խորհրդի նիստում:		Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստում:

Համաձայն ԱՆ 2021թ. մշտադիտարկման հաշվետվության, սույն միջոցառման շրջանակներում կատարված աշխատանքներից պարզ է դառնում, որ ազդարարման համակարգի արդյունավետությանն ուղղված ուսումնասիրությունը շարունակական բնույթ է կրել 2021 թվականին: Ուսումնասիրության արդյունքների հիման վրա Վարչապետի աշխատակազմին առաջարկվել է ազդարարման համակարգի օրենսդրության բարելավմանն ուղղված առաջարկությունները ներառել Կառավարության ծրագրում՝ որպես միջոցառումներ, ինչն էլ հաստատվել է Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 16-ի N 1902-Լ որոշմամբ: Բացի այդ, բացահայտված խնդիրների լուծման նպատակով մշակվել է ««Ազդարարման համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթը: Նշվածից հետևում է, որ սույն միջոցառումը կատարված է մասնակի, իսկ ամբողջական կատարված չի գնահատվում այն հանգամանքի հաշվառմամբ, որ բացահայտված խնդիրները չեն քննարկվել Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստում:

ՖԽՔ-ի ընթացքում ԱՆ ներկայացուցիչը փաստեց, որ 2021թ. ներկայացվել է Ազդարարման համակարգի կատարելագործման առաջարկությունների փաթեթ: Առկա են որոշակի խնդիրներ՝ կապված վարչական/ոչ կոռուպցիոն/ոչ քրեական իրավախախտումների հետ: Նախագիծն այս պահին գտնվում է մշակման փուլում:

Քննարկմանը մասնակցող փորձագետները մտահոգություն հայտնեցին, որ համակարգի հանրային իրազեկումը տապալված է, ինչի վկայությունը դիմումների փոքր թիվն է, ինչն էլ իր հերթին գալիս նրանից, որ քաղաքացիները պարզ և մատչելի կերպով չեն պատկերացնում հարթակի կարևորությունը, օգտակարությունը, օգտագործման մեխանիզմները: Մյուս կողմից, կարևոր է նաև վստահության մակարդակի բարձրացումը հանրության շրջանում: Այս համակարգի վերջնական նպատակը գաղտնի ազդարարումներ ստանալը չէ, այլ քաղաքացիների վստահության ապահովումը. միջազգային փորձը ցույց է տալիս, որ անանուն դիմելը տարիների ընթացքում հաղթահարվում է: Ավելին, ԻՀԱ-ի կողմից տարիներ առաջ ստեղծվել է դրա նախատիպ հարթակը՝ Bizprotect.am[16], որն այժմ գործում է: Այնտեղ առկա վիճակագրությունը ցույց է տալիս, որ անանուն դիմողների քանակը անհամեմատելի քչացել է, մեծամասնություն են կազմում անձինք, որոնք տրամադրում են տվյալները: Այսինքն՝ ի սկզբանե առկա

[16] Հղում՝ https://bizprotect.am/

են եղել 2 խնդիր՝ հանրային իրազեկում և վստահություն: Իսկ դրա ուղղությամբ, ինչպես պարզ է դառնում ԱՆ-ի հաշվետվությունից և շահագրգիռ մարմինների ու ՔՀԿ-ների հետ անցկացված ՖԽՔ-ների արդյունքներից, շոշափելի աշխատանքներ և ուսումնասիրություններ չեն արվել:

ԱՆ-ի կողմից նույնպես կարևորեց հանրության շրջանում իրազեկվածության մակարդակի բարձրացումը: 2021թ. վերջում Գլխավոր դատախազությունում տեղի է ունեցել հանդիպում ԵՄ աջակցությամբ իրականացվող «Աջակցություն Հայաստանում արդարադատության ոլորտում բարեփոխումներին» ծրագրի շրջանակներում փորձագետի հետ, և պայմանավորվածություն է ձեռք բերվել սոցիալական գովազդ, սոցիալական արշավ տարածել:

Շահագրգիռ կողմերի հետ ՖԽՔ-ի ընթացքում բարձրացվեց նաև համակարգի աշխատանքի վերաբերյալ առավել համապարփակ վիճակագրության ներկայացման խնդիրը: Ինչ վերաբերում է դիմումների թվի վերաբերյալ վիճակագրական տվյալների վարմանը, ապա համաձայն ԱՆ ներկայացուցչի այս պահին աշխատանքներ են տարվում վիճակագրության վարման բարելավման ուղղությամբ, որպեսզի, մասնավորապես, արտացոլվի հարուցված քրեական գործերի թիվը:

Համաձայն փորձագետի՝ ազդարարման համակարգն իրավական առումով դրված է արդյունավետ հենքերի վրա, սակայն իրականացման տեսանկյունից առկա են բազմաթիվ խնդիրներ: Առաջին հերթին դա կապված է համակարգի հանրայնացման ոչ բավարար մակարդակի հետ: Համաձայն փորձագետի՝ այս համակարգը դեռևս բավարար չափով և արդյունավետությամբ չի ներկայացվել հանրությանը, իսկ որոշ դեպքերում տարբեր կողմերից իրականացվել է հակաքարոզչություն ազդարարման համակարգի դեմ, ինչը նվազեցնում է դրա գործարկման արդյունավետությունը:

Այսպիսով՝ **գործողությունը կատարված է ՄԱՍՆԱԿԻ:**

ՈԼՈՐՏ 3. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2021թ.	
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	8
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	7
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻ	1
ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ	88%

Գործողություն 33. ՀՀ քրեական օրենսգրքում ամրագրված կոռուպցիոն հանցագործությունների հանցակազմերի միջազգային չափանիշների համապատասխանության հարցի ուսումնասիրությունը, անհրաժեշտության դեպքում կոռուպցիոն հանցագործությունները միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

No.	Գործողություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
33	Կոռուպցիոն հանցագործությունների հանցակազմերը, ինչպես նաև վաղեմության ժամկետները միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու անհրաժեշտության վերաբերյալ առաջարկի ներկայացման և ընդունման դեպքում մշակվել է համապատասխան իրավական ակտերի նախագծերի փաթեթ:	ՀՀ ԱՆ ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) ՀՀ հատուկ քննչական ծառայություն (համաձայնությամբ) ՀՀ Քննչական կոմիտե (համաձայնությամբ) ՀՀ ազգային անվտանգության ծառայություն ՀՀ ոստիկանություն	**Կատարված է ամբողջությամբ:** 2021 թվականի մայիսի 5-ին ՀՀ ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է ՀՀ քրեական օրենսգիրքը, որով վերանայվել են կոռուպցիոն հանցագործությունների հանցակազմերը՝ համապատասխանեցնելով դրանք միջազգային չափանիշներին: Բացի այդ, միջազգային չափանիշներին համապատասխան՝ վաղեմության ժամկետների ինստիտուտը ևս վերանայվել է:

Ինչպես ներկայացված է ԱՆ 2021թ. մշտադիտարկման հաշվետվությունում, 2021 թվականի մայիսի 5-ին ՀՀ ԱԺ-ի կողմից երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է ՀՀ քրեական օրենսգիրքը, որի մշակման շրջանակներում վերանայվել են կոռուպցիոն հանցագործությունների հանցակազմերը՝ համապատասխանեցնելով դրանք միջազգային չափանիշներին: Ի թիվս այլ բարեփոխումների՝

նոր Քրեական օրենսգրքի հատուկ մասից հանվել են խրախուսական նորմերը, որոնց ուժով կաշառք տված անձը որոշակի պայմաններում ազատվում է քրեական պատասխանատվությունից: Ընդ որում՝ դրանք հանվել են նախագծի լրամշակման փուլում տեղի ունեցած քննարկումների հիման վրա:

Ընդհանուր առմամբ, վաղեմության ժամկետների ինստիտուտը ևս վերանայվել է, մասնավորապես՝ վաղեմության ժամկետը, ըստ նոր օրենսգրքի, հաշվվում է մինչև անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման կայացումը, այլ ոչ թե դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը: Բացի այդ, նոր օրենսգիրքը սահմանում է վաղեմության առավել երկար ժամկետներ: Ըստ այդմ՝ օրենսդրական նշված փոփոխությունների արդյունքում գործնականում առավել կչեզոքացվի կոռուպցիոն հանցագործությունների պատշաճ քննության վրա վաղեմության ժամկետների հնարավոր ազդեցությունը:

ՖԽՔ-ի ընթացքում պետական մարմինների ներկայացուցիչ մասնակիցները նշեցին, որ Քրեական օրենսգրքում հաշվի են առնվել միջազգային փաստաթղթերով ամրագրված հանցակազմերը: Միաժամանակ հարկ է նշել, որ կոռուպցիոն հանցագործությունների ցանկը գործող օրենսգրքում և արդեն նոր ընդունված քրեական օրենսգրքում համաձայնեցվել է: Այսինքն, մինչև մշակման գործընթացը ցանկը համաձայնեցվել է ՏՀԶԿ գործընկերների հետ, այն տեսանկյունից, որ հաշվի են առնվել նրանց կողմից ներկայացված առաջարկները՝ ցանկում ներառված հանցակազմերի վերաբերյալ: ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի հանցակազմերը, ըստ էության, նույնպես հաշվի են առնված քրեական օրենսգրքերում: Սակայն ինչ վերաբերվում է կոռուպցիոն հանցագործությունների ցանկը ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիային համապատասխանելու տեսանկյունից ուսումնասիրության իրականացմանը, ապա այն չի իրականացվել:

Ինչ վերաբերում է նախագծի մշակման ընթացքում այդ փաստաթղթերի միջազգային պարտավորությունների հաշվառմանը, ապա, համաձայն ԱՆ ներկայացուցիչների, ուսումնասիրվել է նաև միջազգային կառույցների կողմից ներկայացված փաստաթղթերը, ներառյալ՝ ՏՀԶԿ 2018 թ.-ի զեկույցը, որում առանձնացված է կոռուպցիոն հանցագործությունների ցանկը: Միևնույն ժամանակ, ԱՆ ներկայացուցիչները նշում են, որ կոռուպցիոն հանցագործությունների ցանկ նախկին օրենսդրությամբ նախատեսված չի եղել և այն սահմանվել է գլխավոր դատախազի համապատասխան իրավական ակտով: Սակայն, այս ցանկը ՏՀԶԿ մարմինների կողմից ենթարկվել է քննադատության համապատասխան զեկույցներում, այն առումով, որ ցանկը բավականին լայն է (շուրջ 80 և ավել հանցակազմեր): Անհրաժեշտություն կար մշակել ավելի հստակ, հիմնական, թիրախային կոռուպցիոն հանցակազմերի ցանկ:

Այսպիսով՝ **գործողությունը կատարված է ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ:**

Գործողություն 34. Կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման, քննության մեթոդիկայի մշակում, մշակված մեթոդիկայի հիման վրա քրեական հետապնդման մարմինների վերապատրաստում:

No.	Գործողություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
34	Կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման քննության մեթոդիկան ներառված է քրեական հետապնդման մարմինների վերապատրաստման ծրագրերում:	ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ) ՀՀ ազգային անվտանգության ծառայություն Արդարադատության ակադեմիա Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	**Կատարված է ամբողջությամբ:** Կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման քննության մեթոդական ուղեցույցը հաստատվել է Գլխավոր դատախազի կողմից 2021 թվականի մարտի 22-ին, մեթոդիկան ներառվել է վերապատրաստման ծրագրերում: Կոռուպցիոն հանցագործությունների քննության մեթոդիկայի վերաբերյալ իրականացվել են վերապատրաստման դասընթացներ:

Համաձայն ԱՆ 2021թ. մշտադիտարկման հաշվետվության, կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման քննության մեթոդական ուղեցույցը մշակվել է և հաստատվել Գլխավոր դատախազի 2021 թվականի մարտի 22-ի N 35 հրամանով: Ուղեցույցի մեջ մանրամասն վերլուծված են կոռուպցիոն հանցագործությունների էությունը և դրանց կանխարգելման իրավական հիմքերը, կոռուպցիայի հակազդման իրավակազմակերպական հիմքերը, կոռուպցիոն հանցագործությունների քրեաիրավական և կրիմինալիստիկական բնութագրերը: Առանձին գլխում ներկայացված է ապօրինի հարստացման էությունը, իրավական հիմքերը և առանձնահատկությունները: Ներկայացված են նաև կոռուպցիոն հանցագործությունների գործերով պարզաբանման ենթակա հանգամանքները, կոռուպցիոն հանցագործությունների քննության քրեադատավարական և կրիմինալիստիկական բնութագրերը, այդ թվում նաև՝ կոռուպցիոն հանցագործությունների գործերով կատարվող առանձին քննչական գործողությունների առանձնահատկությունները:

Կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման քննության մեթոդիկան ներառված է վերապատրաստման ծրագրերում: 2021 թվականին Հատուկ քննչական ծառայության 7 քննիչներ և Քննչական կոմիտեի 58 քննիչներ անցել են վերապատրաստումներ «Կրիմինալիստիկական տակտիկա և մեթոդիկա», «Կոռուպցիոն հանցագործությունների քննության մեթոդիկա» թեմաներով:

2021 թվականին անցկացվել են դատախազների վերապատրաստումներ «Հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցեր», «Կոռուպցիոն դեպքերի քննություն», «Կրիմինալիստիկական տակտիկա և մեթոդիկա», «Պաշտոնական կոռուպցիայի դեպքերի քննություն», «Կոռուպցիոն բնույթի ֆինանսական հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքար» թեմաներով:

Համաձայն ՖԽՔ-ի ընթացքում ԱՆ ներկայացուցիչների՝ մեթոդական ուղեցույցը տեղադրված է նաև դատախազության կայքէջում: Այն, ըստ էության, համաձայնեցվել է շահագրգիռ մարմինների հետ, քննարկվել է և հաստատվել է՝ համապատասխան առաջարկությունների հաշվառմամբ: Ինչ վերաբերվում է մեթոդիկայի մշակման վրա աշխատող անձանց շրջանակին, ապա այն մշակվել է դատախազության համապատասխան վարչությունների, մասնագիտացված վարչության աշխատակիցների մասնակցությամբ:

Այսպիսով՝ **գործողությունը կատարված է ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ:**

Գործողություն 35. Կոռուպցիոն հանցագործությունների մասին վիճակագրության համալրում:

No.	Գործողություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
35	Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ տեղեկատվության ստացման աղբյուրների դրանց քննության արդյունքում բռնագրավված և բռնագանձված գույքի մասին վիճակագրության վարման կարգերը հաստատված են: Կոռուպցիոն հանցագործությունների մասին քրեական վիճակագրությունը համալրվել է տեղեկատվության ստացման աղբյուրների և քննության արդյունքում բռնագրավված և բռնագանձված գույքի մասին տվյալներով:	ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) ՀՀ ոստիկանություն	**Կատարված է ամբողջությամբ:** 2021 թվականին կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունը համալրվել է կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ տեղեկատվության ստացման աղբյուրների ու կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքում բռնագրավված և բռնագանձված գույքի մասին տվյալներով:

Ինչպես ներկայացված է ԱՆ 2021թ. մշտադիտարկման հաշվետվությունում, 2021 թվականի մայիսի 5-ին ԱԺ-ի ընդունվել է ՀՀ քրեական նոր օրենսգիրքը, որով վերանայվել է կոռուպցիոն հանցագործությունների ցանկը: ՀՀ գլխավոր դատախազի 2019 թվականի դեկտեմբերի 27-ի և 2020 թվականի հուլիսի 2-ի համապատասխան հրամաններով հաստատված կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունը համալրվել է կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ տեղեկատվության ստացման աղբյուրների ու կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքում բռնագրավված և բռնագանձված գույքի մասին տվյալներով:

Ինչ վերաբերում է վիճակագրական տվյալների հասանելիությանը, ապա, ինչպես ՖԽՔ-ի ընթացքում նշվեց ԱՆ ներկայացուցչի կողմից, յուրաքանչյուր տարի այդ վիճակագրական տվյալները դատախազության մասին օրենքով սահմանված կարգով ամփոփվում են: Քանի որ ներկայումս ՀԿԿ-ին է վերապահված կոռուպցիոն գործերով քննությունը, հետագայում այն կդառնա միանձնյա մարմինը, որը կքննի կոռուպցիոն բնույթի հանցագործությունները, կամփոփի վիճակագրությունը և օրենքով սահմանված կարգով, ինչպես այժմ, այդպես էլ հետագայում կտեղադրի այդ տվյալները դատախազության կայք էջում: Առկա է հաշվետվություն, որը որպես առանձին փաստաթուղթ անդրադառնում է միայն կոռուպցիոն հանցագործությունների քննությանը: Նախորդ տարիների համար վիճակագրական տվյալները հրապարակված են, իսկ 2021 թ.-ի համար աշխատանքներն ընթացքի մեջ են:

ՖԽՔ-ի ժամանակ հնչեց առաջարկություն՝ առավել մատչելի դարձնել հրապարակումները, օրինակ ինֆոգրաֆիկների և աղյուսակների տեսքով, ինչը կբարձրացնի կոռուպցիոն հանցագործությունների լուսաբանման թափանցիկությունը և արդյունավետությունը:

Այսպիսով՝ **գործողությունը կատարված է ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ:**

<u>Գործողություն 36.</u> Պետական մարմինների էլեկտրոնային բազաներին քրեական հետապնդման մարմինների հասանելիության ապահովում էլեկտրոնային հարցման եղանակով:

No.	Գործողություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
36	Իրավապահ մարմիններն ունեն էլեկտրոնային եղանակով հարցումների միջոցով պետական մարմինների այն տեղեկատվական բազաներին հասանելիություն, որոնք անհրաժեշտ են կոռուպցիոն և այլ տնտեսական հանցագործությունների արդյունավետ քննության համար:	ՀՀ Վարչապետի աշխատակազմ Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ (համաձայնությամբ) ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) ՀՀ ազգային անվտանգության ծառայություն	**Կատարված է ամբողջությամբ:** Իրավապահ մարմինները Կառավարության փոխգործելիության հարթակի միջոցով կարող են իրականացնել հարցումներ պետական տվյալների շտեմարաններից (Բնակչության ռեգիստր, Կադաստրի կոմիտե, ՃՈ, ՊԵԿ, Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գրասենյակ, Իրավաբանական անձանց պետական ռեգիստր և այլն): Պետական տվյալների շտեմարաններից ստացվող տեղեկատվության շրջանակն ու ձևաչափերը շարունակաբար ընդլայնվում են: Զուգահեռաբար աշխատանքներ են իրականացվում նորաստեղծ Հակակոռուպցիոն կոմիտեի համար ևս ամբողջական հասանելիություն ապահովելու նպատակով:

Ինչպես ներկայացված է ԱՆ 2021թ. մշտադիտարկման հաշվետվությունում, Կառավարության փոխգործելիության հարթակի միջոցով հնարավոր է իրականացնել հարցումներ պետական տվյալների շտեմարաններից (Բնակչության ռեգիստր, Կադաստրի կոմիտե, Ճանապարհային ոստիկանություն, ՊԵԿ, Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գրասենյակ, Իրավաբանական անձանց պետական ռեգիստր և այլն), որը ներդրվել է դեռևս 2018թ-ից ԵՄ աջակցությամբ: Կառավարության փողգործելիության հարթակի հիմնական նպատակը տարբեր պետական մարմինների տեղեկատվական շտեմարանների միջև տվյալների փոխանակումն է անվտանգ միջոցով և փողգործելիության ապահովումը: Պետական տվյալների շտեմարաններից ստացվող տեղեկատվության շրջանակն ու ձևաչափերը շարունակաբար ընդլայնվում են:

ՀԿԿ-ի առնչությամբ հարկ է նշել, որ այն հասանելիություն ունի Ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության, Ինֆորմացիոն կենտրոնի, Ճանապարհային ոստիկանության, Ֆինանսական դիտարկումների կենտրոնի միասնական տեղեկատվական հարթակի, Իրավաբանական անձանց ռեգիստրի, Անշարժ գույքի կադաստրի ռեգիստրի տեղեկատվական բազաներին: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն, որ անհրաժեշտ է ՀԿԿ-ի համար մատչելի դարձնել Կենտրոնական դեպոզիտարիայի և արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման իրավունք ունեցող այլ անձանց կողմից հաճախորդի բացած արժեթղթերի հաշիվների ցանկի, յուրաքանչյուր հաշվի տեսակի և կարգավիճակի վերաբերյալ ծառայողական տեղեկությունների ստացումը, ինչպես նաև բաժնետոմսերի և բաժնետոմսերի սեփականատերերի (անվանատերերի) վերաբերյալ ցանկացած ծառայողական տեղեկության ստացումը, այդ թվում՝ բաժնետոմսերի սեփականատերերի (անվանատերերի), անվանական արժեքի, քանակի, տեսակի և դասի, թողարկողի, բաժնետոմսերով իրականացված գործարքների, բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքի սահմանափակումների վերաբերյալ տեղեկությունների, թողարկողի բաժնետոմսերի սեփականատերերի վերաբերյալ Օրենքի 197-րդ հոդվածի իմաստով Հայաստանյան անվանատերերին և Օտարերկրյա անվանատերերին հասանելի տեղեկությունների ստացումը, մշակվել են «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 3-ի N 1481-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման 202 նախագծերը, որոնք դրվել են հանրային քննարկման, ինչպես նաև ներկայացվել են շահագրգիռ մարմիններին՝ վերջիններիս դիրքորոշման ստացման նպատակով:

Մշակվել է նաև ««Հայաստանի Հանրապետության պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 1998 թվականի մարտի 13-ի թիվ 173 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով նախկին Հատուկ քննչական ծառայության պետին տրված լիազորության փոխարեն նույն լիազորությունը սահմանվել է ՀԿԿ-ի նախագահի համար: Նախագծով առաջարկվող իրավակարգավորման ընդունման արդյունքում ՀԿԿ-ի նախագահի համար

կսահմանվի լիազորություն տեղեկությունները՝ ըստ դրանց բնագավառի կամ գերատեսչական պատկանելիության պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելու համար:

ՖԽՔ-ի ժամանակ նշվեց, որ եթե Ռազմավարությունն ունի կոնկրետ ժամկետներ, ապա փոխգործելիության հարթակը անընդհատ զարգանում է, և ըստ պահանջի պետական մարմինների տվյալների փոխանակման ձևաչափերը փոփոխվում են: Այսպիսով, տարբեր կառույցների պահանջներից ելնելով՝ տարբեր շահագրգիռ մարմինների քննարկումների արդյունքում մշակվում են տեխնիկական առաջադրանքներ, որոնց հիման վրա մշակվում են վեբ ծառայությունների նկարագրերը, և սկսում է տվյալների փոխանակումը որպես այդպիսին:

Իրավական հիմքերի վերաբերյալ պետք է նշել, որ բոլոր էլեկտրոնային համակարգերը ներկայում պետք է համապատասխանեն 10-93 որոշմանը, որը ենթադրում է անվտանգության փոխգործելիության տեխնիկական նվազագույն պահանջներ: Ինչ վերաբերում է անձնական տվյալների փոխանակման իրավական հիմքերին, պետական մարմինները այդ տվյալները ստանում են հստակ կարգով՝ դիմելով կառավարության դիմելիության հարթակի օպերատորին, ստանալով անձնական տվյալների պաշտպանության գործակալության եզրակացությունը իրենց այդ տվյալները օգտագործելու իրավաչափության վերաբերյալ:

Բացահայտված խնդիրների վերաբերյալ հաշվետվության, վիճակագրության վարման մասով նշվեց, որ եթե խնդիրներ առաջանում են, ԷԿԵՆԳ-ի տեխնիկական մասում դրանք նկարագրվում են աշխատանքային կարգով և ստանում են լուծում հենց ծրագրերի կառավարման ու խնդիրների կառավարման գործիքներով: Իսկ բովանդակային խնդիրների դեպքում կապ է հաստատվում վարչական մարմինների հետ, որտեղ են տվյալ խնդիրները լուծում են ստանում: Առաջացած խնդիրների, դրանց լուծումների, ինչպես նաև հարթակի շահառու մարմինների հետ հետադարձ կապի հիման վրա գնահատման մասին ամփոփիչ հաշվետվություններ որպես այդպիսին չեն մշակվում:

Այսպիսով՝ **գործողությունը կատարված է ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ:**

<u>Գործողություն 38.</u> Կոռուպցիոն հանցագործությունների քննության և բացահայտման շրջանակում միջազգային համագործակցության ամրապնդում:

No.	Գործողություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
38	ՀՀ վարչապետի աշխատակազմ են ներկայացվել կոռուպցիոն գործերով միջազգային	ՀՀ ԱՆ	**Կատարված է ամբողջությամբ:** 2020 թվականին մշակված՝ կոռուպցիոն հանցագործությունների քննության և բացահայտման շրջանակում միջազգային

	համագործակցության իրականացման առկա խոչընդոտների հաղթահարման վերաբերյալ առաջարկներ:	ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) ՀՀ ազգային անվտանգության ծառայություն	համագործակցության իրականացմանն առկա խոչընդոտների հաղթահարմանն ուղղված նախագիծը 2021 թվականին կրկին քննարկվել է շահագրիռ մարմինների և միջազգային փորձագետների հետ և ներկայացված առաջարկությունների հիման վրա նախագիծը լրամշակվում է: Վարչապետի աշխատակազմ առաջարկները ներկայացվել էին 2020 թվականին, իսկ նախագծի մշակման աշխատանքներին շահառուները 2020 թվականից ներգրավված են:

Ինչպես ներկայացված է ԱՆ 2021թ. մշտադիտարկման հաշվետվությունում, 2020 թվականին մշակված՝ կոռուպցիոն հանցագործությունների քննության և բացահայտման շրջանակում միջազգային համագործակցության իրականացմանն առկա խոչընդոտների հաղթահարման ուղղված նախագիծը 2021 թվականին կրկին քննարկվել է շահագրիռ մարմինների և միջազգային փորձագետների հետ և ներկայացված առաջարկությունների հիման վրա Նախագիծը լրամշակվում է: Հաշվի առնելով, որ Վարչապետի աշխատակազմ առաջարկները ներկայացվել էին 2020 թվականին, իսկ նախագծի մշակման աշխատանքներին շահառուները դեռևս 2020 թվականից ներգրավված են, հարկ է արձանագրել, որ սույն միջոցառումը 2021 թվականին ամբողջությամբ կատարվել է:

Չնայած ըստ հաշվետվության՝ գործողությունը կատարվել է ամբողջությամբ, ՖԽՔ-ի ընթացքում պարզ դարձավ, որ քրեական գործերի շրջանակում իրավական փոխօգնության հետ կապված հարաբերությունները կարգավորելու նպատակով կազմված քրեական գործերով իրավական օգնության մասին օրենքի նախագիծը գտնվում է վերամշակման փուլում: Ներկայումս դիտարկվում են նախագծի վերաբերյալ միջազգային փորձագետների կողմից ներկայացված կարծիքները: Նշենք, որ այս նախագծով նախատեսվում է կարգավորել տարբեր հարցումների, քննչական գործողությունների կատարման, ապացույցների, գույքի վրա կալանք դնելու կապված հարցերը: Ըստ էության դրանց վերամշակումից հետո նախագիծը կրկին կներկայացվի վարչապետի աշխատակազմ:

Այսպիսով՝ **գործողությունը կատարված է ամբողջությամբ:**

Գործողություն 39. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված կառուցակարգերի ստեղծում

No.	Գործողություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
39	Ստեղծվել և գործարկվում են ապօրինի ծագում ունեցող	ՀՀ արդարադատության նախարարություն	**Կատարված է ամբողջությամբ:**

	գույքի բռնագանձմանը, գույքի կառավարմանը, միջազգային համագործակցությանն ուղղված կառուցակարգեր:	ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) ՀՀ Կենտրոնական բանկ (համաձայնությամբ) ՀՀ ազգային անվտանգության ծառայություն	2020-2021թթ. ստեղծվել են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանը գույքի կառավարմանը, միջազգային համագործակցությանն ուղղված կառուցակարգեր: Միաժամանակ պարզվել է, որ նույն ժամանակահատվածում գործարկվել են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանը և միջազգային համագործակցությանն ուղղված կառուցակարգերը, իսկ գույքի կառավարմանն ուղղված կառուցակարգը կգործարկվի բռնագանձում իրականացնելու դեպքում:

Ինչպես ներկայացված է ԱՆ 2021թ. մշտադիտարկման հաշվետվությունում, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված կառուցակարգերի սահմանման նպատակով Ազգային ժողովի կողմից դեռևս 2020 թվականի ապրիլի 16-ին ընդունվել էին «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ իրականացնելու մասին օրենքները: 2020 թվականի սեպտեմբերի 1-ին ՀՀ գլխավոր դատախազի հրամանով նշանակվել էր ՀՀ գլխավոր դատախազի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ոլորտը համակարգող տեղակալը, իսկ 2020 թվականի սեպտեմբերի 3-ին ՀՀ գլխավոր դատախազության կազմում ստեղծվել էր պատասխանատու ստորաբաժանում՝ Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը:

2021 թվականի ապրիլի 7-ին ՀՀ գլխավոր դատախազի հրամանով սահմանվել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում կնքվող հաշտության համաձայնության կնքման կարգը և օրինակելի ձևը:

Բացի այդ, առկա գործիքակազմի կատարելագործման նպատակով, Գլխավոր դատախազության կողմից մշակվել և ԱՆ-ի կողմից 2021 թվականի դեկտեմբերին շահագրգիռ մարմիններին՝ կարծիքի, ինչպես նաև հանրային քննարկման է ներկայացվել «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը: Ներկայումս իրականացվում են շահագրգիռ անձանց դիտողությունների և առաջարկությունների ամփոփման աշխատանքները, որից հետո կապահովվի նախագծի քննարկման հետագա ընթացքը:

Միաժամանակ, քննարկվող ինստիտուտի արդյունավետ գործունեությունն ապահովելու տեսանկյունից առանձնակի կարևորվում է նշված ոլորտում պրակտիկ աշխատանք ծավալող անձանց մասնագիտական պատրաստվածության բարձրացումը և հետևողական մասնագիտական աճի ապահովումը, ինչով պայմանավորված միջազգային փորձագետների ներգրավվածությամբ արդեն իսկ թվով վեց դասընթաց է կազմակերպվել Վարչության դատախազների համար:

Ապահովվել է նաև միջազգային կառույցների և այլ պետությունների հետ համագործակցությունը: Մասնավորապես, 2020 թվականի նոյեմբերից ՀՀ գլխավոր դատախազությունը անդամակցում է CARIN.NETWORK (Camden Asset Recovery Inter-agency Network) միջազգային ոչ պաշտոնական ցանցին: Անդամակցության շրջանակներում ուղարկվել է թվով 7 հարցում, այդ թվում՝ 2 հարցում՝ Ռուսաստան, մեկական հարցումներ՝ Չեխիա, Սլովակիա, Ֆրանսիա, Հունաստան և Կիպրոս, որոնց արդյունքում ստացվել է թվով 6 պատասխան գրություն: Միաժամանակ, օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացվել է 4 միջազգային հարցում՝ Ռումինիայից, Ուկրաինայից, Բելգիայից, Մոլդովայից: Դրանց շրջանակներում վարչության կողմից կատարվել են բոլոր անհրաժեշտ գործողությունները:

Պետական մարմինների հետ ՖԽՔ-ի ընթացքում անդրադարձ կատարվեց նրան, թե ինչպես են ընտրվում այն անձիք, ում գույքը ենթակա է ուսումնասիրության: Մասնավորապես, նշվեց, որ առկա է ներքին իրավական ակտ, դա Գլխավոր դատախազի ոլորտը կարգավորող տեղակալի հանձնարարականն է: Գործընթաց սկսելու համար որոշակի ազդակներ են պետք: Այդ ազդակների մեծ մասը կապված են հենց քրեական գործերի քննության հետ, այսինքն՝ պետք է առկա լինեն համապատասխան քրեական հետապնդումներ կամ կայացված մեղադրական դատավճիռներ, որպեսզի լինի կասկած ապօրինի ծագման գույքի առկայության մասին: Անդրադարձ կատարվեց նաև այն հարցին, թե արդյո՞ք առկա է մեթոդիկա՝ տարբերակելու հետևանքային հանցակազմ ունեցող՝ ապօրինի հարստացման հետևանքով ձեռք բերված գույքը, որն օրենքով բռնագանձման ենթակա չէ, թե՝ բռնագանձումը կարող է տարածվել նաև այդ շրջանակի վրա: Քանզի պաշտոնատար անձը իր գույքը 2017թ.-ից հետո հայտարարագրելու դեպքում, անգամ դրա ապօրինի ծագում ունենալու պարագայում, օրենքի ուժով բռնագանձման ենթակա չէ: Ըստ Գլխավոր դատախազության ներկայացուցչի՝ հարցը առանձին քննարկման կարիք ունի:

Այսպիսով՝ **գործողությունը կատարված է ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ:**

Գործողություն 40. Կոռուպցիոն իրավախախտումների համար իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի ներդրում:

No.	Գործողություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
40	«Քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու	ՀՀ ԱՆ ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)	**Կատարված է ամբողջությամբ:** Իրավաբանական անձանց ինչպես կոռուպցիոն, այնպես էլ այլ հանցագործությունների համար քրեական պատասխանատվության ինստիտուտը ներդրվել է ՀՀ քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերում՝ այդպիսով ապահովելով պատասխանատվության ինստիտուտի առկայությունը:

	մասին» օրենքների նախագծերը մշակվել և ՀՀ Ազգային ժողով են ներկայացվել:		

Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության (այդ թվում՝ կոռուպցիոն հանցագործությունների համար) ինստիտուտը ներդրվել է ՀՀ քրեական նոր օրենսգրքում, որը 2021 թվականի մայիսի 5-ին Ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է:

Շահագրգիռ մարմինների հետ ՖԽՔ-ի ընթացքում հարց բարձրացրեց, թե հակակոռուպցիոն համապատասխանության ի՞նչ մեխանիզմներ են ներդրվել՝ հաշվի առնելով իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու և հակակոռուպցիոն համապատասխանության ինստիտուտների փոխկապակցվածությունը: Այս մասին ԱՆ ներկայացուցիչը հստակ տեղեկատվություն չտրամադրեց:

Այսպիսով՝ **գործողությունը կատարված է ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ:**

Գործողություն 41. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի 30-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկային համապատասխանեցման նախադրյալների ստեղծում:

No.	Գործողություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
41	Մշակվել և ՀՀ ազգային ժողով է ներկայացվել օրենսդրական փաթեթ՝ ուղղված կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում օպերատիվ-հետախուզական միջոցառումը նաև ապօրինի վարձատրություն տալու կամ ստանալու, իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու, իրական	ՀՀ ԱՆ ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) ՀՀ հատուկ քննչական ծառայություն (համաձայնությամբ)	**Կատարված է մասնակի:** ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի 251-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով «կաշառք ստանալ» և «կաշառք տալ» հասկացությունները նույն օրենսգրքում օգտագործվում են Հայաստանի Հանրապետության քրեական նոր օրենսգրքի 218-220-րդ, 258-րդ, 272-276-րդ, 435-440-րդ, 477- րդ, 496-րդ և 497-րդ հոդվածների իմաստով: Սույն միջոցառման շրջանակներում մշակվել և շրջանառության մեջ է դրվել իրավական ակտի նախագիծ՝

	կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու համար ապօրինի վարձատրություն տալու վերաբերյալ գործերով իրականացնելուն:	ՀՀ քննչական կոմիտե (համաձայնությամբ) ՀՀ ոստիկանություն ՀՀ ազգային անվտանգության ծառայություն	նույնպիսի կարգավորում «Օպերատիվհետախուզական գործունեության մասին» օրենքում նախատեսելու նպատակով: «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքում համապատասխան փոփոխությունը նախատեսող նախագիծը դեռևս չի ընդունվել՝ չնայած այն հանգամանքին, որ համապատասխան կարգավորումներն արդեն իսկ սահմանվել են նոր Քրեական օրենսգրքով:

2021 թվականի հունիսի 30-ին ՀՀ ԱԺ-ի կողմից երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրքը, որը կաշառք ստանալու նմանակումը և կաշառք տալու նմանակումը նախատեսում է որպես գաղտնի քննչական գործողություններ:

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի 251-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով «կաշառք ստանալ» և «կաշառք տալ» հասկացությունները նույն օրենսգրքում օգտագործվում են ՀՀ քրեական նոր օրենսգրքի 218-220-րդ, 258-րդ, 272-276-րդ, 435-440-րդ, 477-րդ, 496-րդ և 497-րդ հոդվածների իմաստով: Սույն միջոցառման շրջանակներում մշակվել և շրջանառության մեջ է դրվել իրավական ակտի նախագիծ՝ նույնպիսի կարգավորում «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքում նախատեսելու նպատակով: «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքում համապատասխան փոփոխությունը նախատեսող նախագիծը դեռևս չի ընդունվել՝ չնայած այն հանգամանքին, որ համապատասխան կարգավորումներն արդեն իսկ սահմանվել են նոր Քրեական օրենսգրքով:

Ինչպես նշվեց ՖԽՔ-ի ժամանակ, այս առումով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում նախատեսված է որպես գաղտնի քննչական գործողություն կաշառք տալու, կաշառք ստանալու նմանակումը, որտեղ այս խնդիրը լուծվել է, և մի շարք հանցակազմեր են ավելացել, որոնց իմաստով կաշառք տալ, կաշառք ստանալը ևս համարվում է գաղտնի քննչական գործողություն կատարելու հիմք: Այս համատեքստում նաև ներկայումս վերամշակման փուլում է գտնվում քրեական դատավարության և քրեական օրենսգրքերից բխող հարակից օրենքներում փոփոխություններ կատարելու նախագծերի փաթեթը, որտեղ ներառվել է նաև օպերատիվ-հետախուզության օրենքում այս կարգավորումը՝ որպես քրեական վարույթից դուրս իրականացվող օպերատիվ հետախուզական միջոցառման հարաբերությունները կարգավորող կարգավորում: Այս փաթեթը վերամշակելուց հետո, արդեն կներկայացվի ԱԺ:

Այսպիսով՝ **գործողությունը կատարված է ՄԱՍՆԱԿԻ:**

ՈԼՈՐՏ 4. ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ ԵՎ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

2021թ.	
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	6
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	4
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻ	1
ՈՐԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ	1
ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ	67%

Գործողություն 42. Հանրային իրազեկման տարեկան արշավի ծրագրի մշակում, հաստատում և իրականացում:

No.	Գործողություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
42	Իրականացված հանրային իրազեկման արշավների հիման վրա անձինք պարբերաբար տեղեկացվում են պետության կողմից հակակոռուպցիոն միջոցառումների իրականացման, ծառայությունների մատուցման ոլորտում իրականացված բարեփոխումների, ազդարարման և բողոքարկման մեխանիզմների, պետական մարմնի հետ հարաբերակցվելիս իրենց իրավունքների վերաբերյալ:	ՀՀ ԱՆ ՀՀ Վարչապետի աշխատակազմ Պետական կառավարման համակարգի մարմիններ Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) Զանգվածային լրատվության միջոցներ (համաձայնությամբ)	**Կատարված չէ:** Կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում ԱՆ կայքում հրապարակված տեղեկությունները հիմնականում կատարված աշխատանքների վերաբերյալ մամուլի հաղորդագրություններ են, և ոչ թե հանրային արշավներ, որոնք հանրամատչելի եղանակով քաղաքացիներին կտեղեկացնեն միջոցառումների իրականացման, ծառայությունների մատուցման ոլորտում իրականացված բարեփոխումների, ազդարարման և բողոքարկման մեխանիզմների, պետական մարմնի հետ հարաբերակցվելիս իրենց իրավունքների վերաբերյալ:

Ըստ ԱՆ-ի կողմից ԻՀԱ-ին տրամադրած տեղեկության՝ մշակվել է «Կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում 2022 թվականի հաղորդակցման գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծ, որը քննարկվում է շահագրգիռ

մարմինների հետ: Ծրագրի հիմնական նպատակն է՝ անիմացիաների և այլ եղանակների միջոցով հասարակությանը ընկալելի դարձնել կոռուպցիոն երևույթների էությունն ու այդ բացասական երևույթների ազդեցությունն անհատի և հասարակության վրա: Զուգահեռաբար ԱՆ-ի կողմից շարունակաբար պատասխանատու մարմինների կողմից Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման վերաբերյալ տեղեկատվական նյութեր են հրապարակվել ԱՆ պաշտոնական կայքում, սոցիալական ցանցերում, զանգվածային լրատվության միջոցներով: Այլ պետական մարմիններ ևս իրականացրել են հանրային իրազեկման աշխատանքներ: Ըստ նույն աղբյուրի՝ հանրային իրազեկման մասին աշխատանքներն ամփոփվում են Հակակոռուպցիոն ռազմավարության տարեկան և կիսամյակային հաշվետվություններում, հրապարակվում են և ներկայացվում են Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդին:

Միևնույն ժամանակ, շահագրգիռ մարմինների և շահակիցների հետ անցկացված ՖԽՔ-ների ժամանակ փաստվեց, որ գործողությունն ըստ էության կատարված չէ, և ոչ թե՝ կատարված է մասնակի: Կատարված գրասենյակային հետազոտությունների արդյունքում պարզ դարձավ, որ ՀՀ ԱՆ կայքում հրապարակված տեղեկությունները հիմնականում կատարված աշխատանքների վերաբերյալ մամուլի հաղորդագրություններ են, և ոչ թե հանրային արշավներ կամ հանրամատչելի իրազեկման նյութեր, որոնք պարզ եղանակով քաղաքացիներին կտեղեկացնեն միջոցառումների իրականացման, ծառայությունների մատուցման ոլորտում իրականացված բարեփոխումների, ազդարարման և բողոքարկման մեխանիզմների, պետական մարմնի հետ հարաբերակցվելիս իրենց իրավունքների վերաբերյալ: Նկատվում է, որ ԱՆ-ը բավականաչափ չի կարևորում այս հարցը, չունի հստակ ռազմավարություն կամ տեսլական և իր առջև որպես առաջնային նպատակ չի դրել հանրության գիտակցության փոփոխման նպատակ: Դիցուք օրինակ՝ ազդարարման համակարգի վերաբերյալ շարքային քաղաքացուն ոչինչ չասող, նրա գիտակցության փոփոխման վրա չազդող, ոչ հանրամատչելի եղանակով կազմված և տեղադրված արտաքին գովազդային վահանակները:

Ինչպես նշվեց շահակիցների հետ անցկացված ՖԽՔ-ի ժամանակ՝ պետություն-հասարակություն փոխգործակցային կապը չափազանց թույլ է: Պետական օղակները չեն կարևորում հասարակության հետ տարվելիք աշխատանքի ներկայացումը ռազմավարությունների բովանդակության մեջ: Չի ուսումնասիրվում, թե նրանց կողմից մեդիա դաշտում հրապարակվող նյութերը հասարակության կողմից ինչ արձագանքի են արժանանում: Ըստ էության, չկա հասարակության հետ աշխատելու որևէ ինստիտուցիոնալ մեխանիզմ: Ցանկացած նյութ հասարակությանը մատուցվելիս պետք է իրականացվի մոնիթորինգ տվյալ ուղղություններով՝ իրավական և լրագրողական էթիկայի առումներով, ինչպես նաև պետք է պարզել՝ արդյո՞ք հաշվի են առնվել ազգային հոգեկերտվածքի հետ կապված հասարակության ընկալման խնդիրները/հարցերը: Հասարակության հետ աշխատելու համար յուրաքանչյուր պետական մարմին պետք է ունենա համապատասխան ֆոկուս խմբեր:

Խորքային հարցազրույցի ընթացքում նույնպես փորձագետի կողմից շեշտվեց, որ այս գործողության կատարման մասով կարևոր է հանրային իրազեկման ծրագրի մշակումը և իրականացումը, այլապես, այս կամ այն կայքում հրապարակումներ անելը դեռևս արշավ չի կարող համարվել և չի կարող է ունենալ համապատասխան արդյունքներ:

Այսպիսով՝ **գործողությունը ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ:**

Գործողություն 43. «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկայի ներառում բոլոր բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դասավանդման մոդուլներում:

No.	Գործողություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
43	Բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում դասավանդվում է «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկա:	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Բուհեր Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ	**Կատարված է ամբողջությամբ:** 2021 թվականին Բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում դասավանդվում է «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկան:

Համաձայն «ԱՆ 2021թ. մշտադիտարկման հաշվետվության, բարձրագույն ուսումնական հաստատություններում 2021-2022 ուսումնական տարվանից դասավանդվում է «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկան, իսկ հասարակագիտական առարկաների շրջանակում իրականացվում են հակակոռուպցիոն քաղաքականությանը վերաբերող թեմաներով դասեր դեռևս 2020 թվականից:

Նախնական և միջին մասնագիտական կրթության ուսումնական հաստատություններում 2020-2021 ուսումնական տարվանից դասավանդվում է «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» թեմայով ուսումնական պարտադիր ծրագիրը:

Ըստ ԿԳՄՍՆ-ի կողմից տրամադրած հավելյալ տեղեկության՝ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2-րդ, 3-րդ, 4-րդ կուրսերում «Իրավունքի հիմունքներ» առարկայի շրջանակում մշակվել և իրականացվում են «Կոռուպցիայի իրավական բնութագիրը», «Հակակոռուպցիոն քաղաքականությունը», «Հակակոռուպցիոն երևույթի հասկացությունը», «Կոռուպցիայի դեմ պայքարը ՀՀ-ում», «Կոռուպցիայի պատճառներն ու հետևանքները», «Հակակոռուպցիոն ոլորտում ՀՀ ստանձնած

միջազգային պարտավորությունները և գնահատումները», «Հակակոռուպցիոն ռազմավարության նպատակը և խնդիրները», «Հակակոռուպցիոն ռազմավարական ուղղությունները» և այլ թեմաներ, որոնց ունկնդրող ուսանողների թիվը 7627 է: Իսկ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 1-ին, 2-րդ, 3-րդ կուրսերում «Իրավունքի հիմունքներ» առարկայի շրջանակում մշակվել և իրականացվում են «Կոռուպցիայի դրսևորումներն ու մակարդակները», «Կոռուպցիայի պատճառներն ու հետևանքները», «Քրեական դատավարության իրավունք հասկացությունը/խնդիրները և սուբյեկտները», «Դատական քննության փուլերը/վարույթը վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում/», «Միջազգային իրավունք», «Հասկացությունը և էությունը» և այլ թեմաներ, որոնց ունկնդրող ուսանողների թիվը 2509 է:

Հիմնվելով ՖԽՔ-ի վրա՝ կարելի է նշել, որ այս պահին չկա ուսումնասիրություն առարկայի դասավանդման արդյունավետության վերաբերյալ, քանի որ դեռևս արդյունքներն ակնհայտ չեն, այն նպատակային կլինի իրականացնել 2022 թվականի ավարտին: Միաժամանակ, ԿԳՄՍՆ-ի կողմից բավարար չափով չպարզաբանվեց այն հարցը, թե ինչպե՞ս է մշակվել դասընթացի բովանդակությունը, ովքե՞ր դասավանդում և ինչպիսի՞ ընթացակարգերով են ընտրվել դասավանդող մասնագետները: Համաձայն ԿԳՄՍՆ-ի կողմից տրամադրած հավելյալ տեղեկության՝ դասընթացի բովանդակությունը մշակվել է յուրաքանչյուր միջին մասնագիտական ուսումնական հաստատության «Իրավունքի հիմունքներ» առարկան դասավանդողի կողմից:

Ըստ փորձագետների՝ այս առումով կարևոր կլինի բուհերում համապատասխան կրթական քվոտաների սահմանումը, օրինակ՝ հակակոռուպցիոն թեմայով ավարտական աշխատանքներ, առանձին առարկա բոլոր ֆակուլտետներում, ընդ որում՝ դա պետք է լինի պետական պատվերով: Միաժամանակ նշվեց, որ ընդհանրապես կարևորագույնը կրթությունն է, և ֆինանսների անբավարությամբ հակակոռուպցիոն կրթության բացթողումները բացատրելը ճիշտ չէ, կարևորը գործընթացի կազմակերպման արդյունավետությունն է: Կարևոր է նաև արդյունավետության գնահատումը և ցուցիչների մշակումը, այն առումով, որ այդ դասընթացները և առարկայի դասավանդումը չպետք է կրեն ձևական բնույթ:

Խորքային հարցազրույցի ընթացքում ոլորտային փորձագետը կարևոր համարեց այս գործողության իրականացումը՝ շեշտելով, որ կրթությունը հակակոռուպցիոն պայքարի հիմնասյուներից մեկն է: Այնուհանդերձ, հակակոռուպցիոն կրթության արդյունքներն անմիջապես տեսանելի չեն լինում: Այդ պատճառով ցանկալի է չսահմանափակվել բուհերով, միջին մասնագիտական հաստատություններով կամ հանրային ծառայողներով, այլև հակակոռուպցիոն կրթությունը սկսել մանկապարտեզից, դպրոցից, որպեսզի հնարավոր լինի յուրաքանչյուր անձի մոտ ձևավորել հակակոռուպցիոն մտածելակերպ: Դա ապահովելու համար կարելի է ընդհուպ հեռախոսային խաղեր, մուլտֆիլմեր կիրառել, որտեղ մատչելի կերպով կփոխանցվի համապատասխան ասելիք՝ քարոզելով ազնիվ քաղաքացու կերպարը:

Այսպիսով՝ **գործողությունը կատարված է ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ:**

Գործողություն 44. Ավագ դպրոցում հակակոռուպցիոն կրթության իրականացում:

No.	Գործողություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
44	Հասարակագիտության դասագրքերում կոռուպցիային առնչվող բաժինների բովանդակությունը փոփոխվել է:	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Բուհեր	**Կատարված է ամբողջությամբ:** «Հասարակագիտություն» առարկայի դասագրքերում կոռուպցիային առնչվող բաժինների վերաբերյալ ուսումնասիրությունն իրականացված է, առաջարկությունները ներկայացված են, փոփոխություններ են կատարվել ավագ դպրոցի՝ 10-րդ և 11-րդ դասարանների առարկայական ծրագրերում, որոնցում հասարակագիտության առարկայի շրջանակում ներառված են կոռուպցիային առնչվող բաժիններ:

2020 թվականին իրականացվել են հանրակրթության պետական չափորոշիչի, առարկայական ծրագրերի և չափորոշիչների վերանայման աշխատանքները: 2021 թվականի փետրվարի 4-ին ընդունվել է «ՀՀ կառավարության 2010թ. ապրիլի 8-ի N 439-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Կառավարության N 136-Ն որոշումը, որը սահմանում է հանրակրթության պետական չափորոշիչի ձևավորման և հաստատման կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու դրույթները: ԿԳՄՍ նախարարի 2021 թվականի ապրիլի 30-ի N 19-Լ հրամանով հաստատվել են 2021-2022 ուսումնական տարում ՀՀ Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում փորձարկելու նպատակով «Հասարակագիտություն» առարկայի փորձնական չափորոշիչը և ծրագրերը:

ՖԽՔ-ի ընթացքում պատասխանատու մարմինների ներկայացուցիչները փաստեցին, որ սույն ուսումնական տարվա ավարտին կարձանագրվեն արդյունքները, կիրականացվի մոնիթորինգի վերլուծություն, ինչը թույլ կտա գնահատել գործողության արդյունավետությունը և հանրապետության մյուս հաստատություններում դրա ներդրման նպատակահարմարությունը:

Այս մասով կարելի է հավելել, որ չափորոշչային խումբը ընտրվել է մրցութային կարգով, և մասնակցել են փորձագետներ, ծրագրերը անցել են փորձաքննություն, որից հետո հաստատվել են նախարարի հրամանով: Քննարկման մասնակիցների կողմից հնչեց քննադատություն առ այն, որ առարկայի շրջանակներում ընտրված թեմաները չեն անցել մասնագիտական քննարկում: Քննարկումը տեղի է ունեցել ընդհանուր առարկայական ծրագրերի շուրջ: Ի լրումն, հակակոռուպցիոն կրթության ոլորտի փորձագետի հետ խորքային հարցազրույցի ընթացքում կարևորվեց ոչ միայն ֆորմալ առումով նմանատիպ առարկաների և դասագրքերի ներդրումը, այլև նյութի մատչելի մատուցումը՝ համեմված գործնական օրինակներով:

Այսպիսով՝ **գործողությունը կատարված է ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ:**

Գործողություն 45. Քաղաքացիական ծառայության համակարգում իրականացվող բարեփոխումների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում, վերապատրաստումների իրականացում՝ այդ թվում կոռուպցիայի կանխարգելման, բարեվարքության, «Մարդու իրավունքներ» թեմայով:

No.	Գործողություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
45	Անցկացվել են իրազեկվածության բարձրացմանն ուղղված պարբերական վերապատրաստումներ, սեմինարներ, միջոցառումներ:	ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ ՀՀ ԱՆ Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	**Կատարված է մասնակի:** 2021 թվականին քաղաքացիական ծառայողների համար անցկացվել են վերապատրաստումներ հակակոռուպցիոն և բարեվարքություն թեմաներով, սակայն մարդու իրավունքների թեմայով վերապատրաստում չի իրականացվել:

2021 թվականի մարտ ամսին Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակը կազմակերպել է վերապատրաստումներ հակակոռուպցիոն և բարեվարքություն թեմայով, որին մասնակցել են համապատասխան մարմինների թվով 63 քաղաքացիական ծառայողներ: 2021 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակը հեռավար եղանակով կազմակերպել է բարեվարքություն կոմպետենցիայի վերաբերյալ վերապատրաստում, որին մասնակցել են համապատասխան մարմինների թվով քաղաքացիական ծառայողներ:

Յուրաքանչյուր վերապատրաստման ավարտից հետո քաղաքացիական ծառայողներն անցել են թեստավորման փուլ՝ վերապատրաստման արդյունավետությունը գնահատելու համար: Թեստավորման արդյունքները դրական են եղել և համապատասխանել են ակնկալվող արդյունքներին: Միևնույն ժամանակ, մարդու իրավունքների թեմայով վերապատրաստում չի իրականացվել:

Անհրաժեշտ է հավելել, որ վերապատրաստումներ անցած քաղաքացիական ծառայողների հետ հետադարձ կապի պահպանման նպատակով 2020 թվականին իրականացվել է գնահատում, որի արդյունքում ծրագիրը լրամշակվել է: Մյուս կողմից, խոչընդոտ է

առաջացնում էթիկայի տիպային կանոնների բացակայությունը: Ինչպես նշում են կատարող մարմինների ներկայացուցիչները, դրանք թույլ կտային վերապատրաստումներն իրականացնել առավել թիրախային:

Ընդհանուր առմամբ, 2021 թ.-ին քաղաքացիական ծառայողների համար անցկացվել են վերապատրաստումներ հակակոռուպցիոն և բարեվարքություն թեմաներով, սակայն մարդու իրավունքների թեմայով վերապատրաստում չի իրականացվել, ուստի միջոցառումը գնահատվում է մասնակի կատարված:

Հակակոռուպցիոն կրթության ոլորտի փորձագետի հետ խորքային հարցազրույցի ընթացքում վերջինս շեշտեց, որ այսպիսի վերապատրաստումները չպետք է կրեն ձևական բնույթ: Կարևորվեց նյութի մատչելի մատուցումը և հանրային ծառայողների կողմից դրա ընկալումը, մասնավորապես այնպես, որ ցույց տրվի կոռուպցիայի բացասական ազդեցությունը պետական կառավարման ոլորտի վրա:

Այսպիսով՝ **գործողությունը կատարված է ՄԱՍՆԱԿԻ:**

Գործողություն 46. Քաղաքացիական ծառայողների համար հեռավար ուսուցման մոդուլների մշակում:

No.	Գործողություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
46	Մշակվել են հեռավար ուսուցման մոդուլներ:	ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ	**Կատարված է ամբողջությամբ:** Քաղաքացիական ծառայողների համար հեռավար ուսուցման մոդելները մշակվել են, իրականացվում է ուսուցում՝ ըստ մոդելների:

2020 թվականին քաղաքացիական ծառայողների համար մշակվել են բարեվարքություն, մարդու իրավունքներ և կոռուպցիայի կանխարգելման թեմաներով հեռավար ուսուցման մոդուլները: Բացի այդ, քաղաքացիական ծառայողների համար Մարդու իրավունքներ թեմայով մշակվել են հեռավար ուսուցման մոդուլներ՝ Երեխաների իրավունքներ, Խտրականության դեմ պայքար և Կանանց իրավունքների և գենդերային հավասարության վերաբերյալ դասընթացի ընդհանուր նկարագիր: Նշված թեմաները ներառվել են քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ծրագրերում:

2021 թվականի 4-րդ եռամսյակում կազմակերպվել է «Բարեվարքություն» թեմայով հեռավար ուսուցում համապատասխան մարմինների քաղաքացիական ծառայողների համար, որին մասնակցել են թվով 133 քաղաքացիական ծառայողներ: Վերապատրաստման մասնակիցների կողմից բարձրացված խնդիրների գնահատման արդյունքում լրամշակվել է «Բարեվարքություն» թեմայով մոդուլը և 2021 թվականի հոկտեմբերին կազմակերպված դասընթացն իրականացվել է լրամշակված տարբերակով: Յուրաքանչյուր վերապատրաստման ավարտից հետո քաղաքացիական ծառայողներն անցել են թեստավորման փուլ՝ վերապատրաստման արդյունավետությունը գնահատելու համար: Թեստավորման արդյունքները դրական են և համապատասխանում են ակնկալվող արդյունքին:

Ընդհանուր առմամբ, վերապատրաստումների 4 մոդուլներից 3-ը մշակվել են ՄԱԶԾ-ի կողմից, իսկ վերջինը՝ բարեվարքության վերաբերյալ, պետական միջոցների հաշվին՝ որպես պարտադիր վերապատրաստման մոդուլ: Ըստ փորձագետների՝ Ռազմավարությամբ նախատեսված չէ մոդուլների կոնկրետ քանակ, արդյունքը և վերստուգիչ ցուցիչը հստակ տրամադրված չեն: Սա դժվարություն է առաջացնում՝ գնահատման տեսանկյունից: Ինչպես պետք է գնահատել, թե արդյոք այդ չորս մոդուլները բավարար են՝ միջոցառումը կատարված գնահատելու համար: Միևնույն ժամանակ հակակոռուպցիոն կրթության ոլորտի փորձագետը ներկայացրեց, որ առանց դասընթացները, այնուամենայնիվ, ունեն սահմանափակումներ, մասնավորապես այն առումով, որ հնարավոր չէ վերահսկել բոլորի իրական մասնակցությունը:

Քննարկման ժամանակ անդրադարձ կատարվեց նաև ֆինանսական միջոցների սղությանը: Ինչպես նշեց շահագրգիռ մարմինների հետ անցկացված ՖԽՔ-ի մասնակիցները մեկը *«Այն գները, որ պետությունը առաջարկում է մոդուլի վերապատրաստման համար ոչ մի կազմակերպություն չի դիմում, շատ լավ կլինի, որ իրականում լինի մրցակցություն»*: Այս մասով, նշվեց, որ փորձ է արվել 2023-2024 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով այդ գումարային չափը բարձրացնել և նախնական պայմանավորվածության արդյունքում դրական համաձայնության է ձեռք բերվել:

Այսպիսով՝ **գործողությունը կատարված է ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ:**

Գործողություն 47. Թափուր պաշտոնների համալրման մրցույթների թեստավորման փուլի օնլայն հեռարձակում:

No.	Գործողություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
47	Միասնականացվել թափուր պաշտոնների համալրման մրցույթների թեստավորման փուլի օնլայն	ՀՀ Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ	**Կատարված է ամբողջությամբ:** 2021 թվականին թափուր պաշտոնների համալրման մրցույթների թեստավորման փուլի առանց հեռարձակման

	հեռարձակման համակարգը և քաղծառայության տեղեկատվական համակարգը:		և քաղաքացիական ծառայության տեղեկատվական համակարգերը գործարկվել են:

Սույն գործողության շրջանակներում 2021 թվականին թափուր պաշտոնների համալրման մրցույթների թեստավորման փուլի առցանց հեռարձակման և քաղաքացիական ծառայության տեղեկատվական համակարգերը գործարկվել են:

Պետական մարմինների հետ ՖԽՔ-ի ընթացքում ավելացվեց, որ նպատակ էր դրվել միասնականացնել զուգահեռ գործընթացները՝ թափուր պաշտոնների մրցույթները և առցանց հեռարձակումը: Ներկայումս հանրապետությունում այդ պահին ընթացող բոլոր մրցույթները միասնականացված ցուցադրվում են Քաղաքացիական ծառայության գրասենյակի պաշտոնական կայքէջում:

Այս գործողության մասով նույնպես արձանագրվեց այն փաստը, որ դրանում սահմանված չէ վերստուգիչ ցուցիչ, որը հարավորություն կատ ամբողջությամբ գնահատել գործողության կատարողականը և ազդեցությունը: Ըստ պատասխանատու մարմինների ներկայացուցիչների՝ չնայած այդ հանգամանքին, անընդհատ իրականացվել է վերահսկողություն և իրավիճակի ստուգում:

Հարթակի գործարկումից մինչ այժմ արձանագրված խնդիրները հիմնականում եղել են տեխնիկական:

Այսպիսով՝ **գործողությունը կատարված է ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ:**

ՈԼՈՐՏ 5. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ, ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴՐԱ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2021թ.	
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	1
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	0
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻ	1
ՈՐԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ	0
ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ	0%

Գործողություն 48. Կոռուպցիայի, հանրային վստահության մակարդակի և հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ պարբերական հարցումների իրականացում հասարակության շրջանում, հարցումների արդյունքների հրապարակում:

No.	Գործողություն	Պատասխանատու մարմին (ներ)	Մշտադիտարկման արդյունք
48	Տարեկան կտրվածքով առնվազն 1 անգամ հասարակության շրջանում, այդ թվում՝ Երևան քաղաքում և ՀՀ մարզերում, իրականացվող հարցման արդյունքում վեր են հանվել հանրության կարծիքով առավել կոռումպացված ոլորտները, առկա կոռուպցիոն ռիսկերը, ներկայացվել է ՀՀ Կառավարության կողմից իրականացվող հակակոռուպցիոն միջոցառումների արդյունավետության վերաբերյալ հասարակության կարծիքը, քայլեր են ձեռնարկվել ուղղված կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը:	ՀՀ Վարչապետի աշխատակազմ ՀՀ ԱՆ Պետական կառավարման համակարգի մարմիններ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (Համաձայնությամբ) Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	**Կատարված է մասնակի:** 2021 թվականին մի շարք պետական մարմինների կողմից նախաձեռնվել և իրականացվել են հարցումներ կոռուպցիոն ռիսկերի պարզման, կոռուպցիայի դեմ պայքարի թեմաներով: Մի շարք հարցումների արդյունքները հասանելի կլինեն 2022 թվականին:

Ըստ ԱՆ-ի հրապարակած հաշվետվության՝ 2021 թվականի ընթացքում ԿԿՀ-ի և ԱՄՆ ՄԶԳ-ի համագործակցության միջոցով սկիզբ է դրվել հասարակության շրջանում առավել կոռումպացված ոլորտների վերհանման, կոռուպցիայի, հանրային վստահության մակարդակի և հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ ուսումնասիրման գործընթացին:

Միևնույն ժամանակ, ԵՄ-ի և ԱՆ-ի միջև պայմանավորվածություն է ձեռք բերվել համատեղ մշակելու կոռուպցիայի, հանրային վստահության մակարդակի և հակակոռուպցիոն միջոցառումների ազդեցության վերաբերյալ պարբերական հարցումների իրականացման միասնական մեթոդաբանությունը և դրա հիման վրա պարբերաբար իրականացնել հարցումներ: ԱՆ-ը հարցումներն անցկացնում է Միջազգային հանրապետական ինստիտուտ (IRI) միջազգային կազմակերպության հետ համագործակցության միջոցով՝ վերջինիս պատվիրակելով հարցումների անցկացումը[17]:

Անհրաժեշտ է նկատել, որ ԱՆ-ի կողմից, որպես այսպիսին, առանձին հարցում հանրության շրջանում չի պատվիրակվում: Միջազգային հանրապետական ինստիտուտի կողմից իրականացվող հարցումներում ներառված են կոռուպցիայի վերաբերյալ միայն մի քանի հարցեր, որոնք ոլորտի վերաբերյալ համապարփակ պատկեր չեն կարող տալ: Միևնույն ժամանակ այլ հետազոտական կազմակերպությունների կողմից հավաքագրած տվյալները ԱՆ-ի կողմից ևս երկրորդային վերլուծության չեն ենթարկվում և չեն կատարվում որոշակի համեմատական վերլուծություններ մի քանի տարիների կտրվածքով՝ տեսնելու դինամիկան այս ոլորտում: Ավելին, ցավալիորեն նկատվում է միտում, որ ԱՆ-ի կողմից իրականացվող հարցումները և հանրային ընկալումների վերաբերյալ հետազոտությունները ավելի շատ բխում են միջազգային կազմակերպությունների կարիքից, և ոչ թե՝ ՀՀ քաղաքացիների: Դրա մասին է վկայում այն պարզ իրողությունը, որ կատարված հետազոտությունները և առաջիկայի համար ձեռք բերված համաձայնությունները իրականացվում են միջազգային կազմակերպությունների հետ համատեղ՝ առանց մասնագիտացված հանրույթի հետ խորհրդակցելու, շրջանցելով մեր ազգային պոտենցիալը: Ի պատասխան այս նկատառման, ԱՆ կողմից ներկայացվել է, որ համապատասխան հարցումները պատվիրակվում են ուսումնասիրությունների արդյունքում վեր հանված կարիքների հիման վրա, և իրականացվում են մասնագիտացված կառույցների կողմից, որոնք ունեն համապատասխան կարողություններ և ռեսուրսներ:

Հնչեց առաջարկություն առ այն, որ պետությունն ինքնուրույն պատվիրակի հետազոտության իրականացում այս ոլորտում, որի համար անհրաժեշտ է նախատեսել առանձին բյուջե:

[17] Բոլոր գրառումները վերցված են «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն որոշմամբ 2021 թվականին կատարման ենթակա միջոցառումների իրականացման մասին» հաշվետվությունից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2019-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ ԵՎ ԸՆՏՐԱՆՔՈՎ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ծանոթագրություն

Ռազմավարության ներքո ընդունվող իրավական ակտերի գնահատման որակական ցուցանիշներն անդրադառնում են ազդեցության մակարդակի արդյունքներին և գործողությունների պլանների (ռազմավարական ուղղությունների) ներքո իրականացվող գործողություն(եր)ը կապում են սպասվող արդյունքների, ռազմավարական առանձնահատուկ նպատակների և ռազմավարական ուղղությունների հետ:
Իրավական վերլուծության է ենթարկվել Ռազմավարության մեկ գործողություն: Այն է՝ «Գործողություն 2. Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման, քննության գործառույթներով օժտված և անկախության բավարար երաշխիքներ ունեցող հակակոռուպցիոն իրավապահ մարմնի՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ձևավորում և բնականոն գործունեության ապահովում»՝ Ոլորտ 1-ի՝ «Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի զարգացում» ներքո:

Կատարված գործողության իրավական վերլուծության ամփոփում[18]

Ռազմավարական առանձնահատուկ նպատակների **համապատասխանության գնահատման** արդյունքում դրանց իրականացումը գնահատվել է հետևյալ կերպ.

ա) Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման, քննության գործառույթներով օժտված հակակոռուպցիոն իրավապահ մարմնի ձևավորում՝ **մասնակի համապատասխան,**
բ) Անկախության բավարար երաշխիքներ ունեցող հակակոռուպցիոն իրավապահ մարմնի ձևավորում՝ **ոչ համապատասխան:**

Ուստի, հաշվի առնելով ռազմավարական առանձնահատուկ նպատակների գնահատման մեթոդաբանությունը, Ռազմավարության բոլոր առանձնահատուկ նպատակները համապատասխանության տեսանկյունից գնահատվում են **ոչ համապատասխան:**

Այսպիսով, Ռազմավարության «Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման, քննության գործառույթներով օժտված և անկախության բավարար երաշխիքներ ունեցող հակակոռուպցիոն իրավապահ մարմնի՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ձևավորում և բնականոն գործունեության ապահովում» գործողության հիմնանպատակների ներքո գրանցած ազդեցության մակարդակի արդյունքները և գործողությունների ծրագրի ներքո իրականացված գործողություն(եր)ը սույն հիմնանպատակի ռազմավարական առանձնահատուկ նպատակների համապատասխանության տեսանկյունից գնահատվում է՝ «Չի համապատասխանում»:

[18] Ամփոփումը կատարվել է ընտրված գործողությունների ներքո ընդունված իրավական ակտերի իրավական վերլուծության արդյունքում: Վերլուծությունը հասանելի է առանձին հավելվածի տեսքով, որը կարող է տրամադրվել ըստ անհրաժեշտության:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ

ՈԼՈՐՏ 1: ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ՝ 17%

Այս ոլորտի ներքո նախատեսված են 6 գործողություններ, որոնցից կատարված է 1-ը, մասնակի կատարված 4-ը, իսկ 1 գործողություն չի կատարվել: Մասնավորապես, կատարված գործողությունների թվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ընդլայնմանն ուղղված օրենսդրական փաթեթի ընդունումը Ազգային ժողովի կողմից: Իրավական ակտերի փոփոխության արդյունքում ավելացել է նաև Հանձնաժողովի հաստիքների թիվը: Ձևավորվել է նաև Հակակոռուպցիոն կոմիտեն, որին տրամադրվել է առանձին տարածք, բյուջետային ինքնուրույն ֆինանսավորում, գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գործիքակազմ: Սակայն, չի իրականացվել մասնագիտացված ստորաբաժանումների աշխատակիցների վերապատրաստումները: Այս գործողության ներքո առանձնացված խնդիրներից է՝ «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի որոշ կարգավորումներ, որոնք հակասում են Ջակարտայի սկզբունքներին, համաձայն որոնց՝ հակակոռուպցիոն անկախ մարմինների ղեկավարները պետք է նշանակվեն մի գործընթացի միջոցով, որն ապահովում է նրա ապաքաղաքական դիրքորոշումը, անկողմնակալությունը, չեզոքությունը, բարեխղճություն ու իրավասությունը: Այն ինչ ընդունված օրենքով ՀՀ կառավարությանը և վարչապետին հնարավորություն է տրվել քաղաքականապես չեզոք թեկնածուների փոխարեն Կոմիտեի նախագահ նշանակելու իշխանությունների համար ցանկալի թեկնածուի՝ մեծացնելով Կոմիտեի գործունեության վրա քաղաքական ազդեցություն ունենալու ռիսկերը: Վիճահարույց է նաև այն կարգավորումը, ըստ որի Կոմիտեի նախագահի երեք տեղակալներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է վարչապետը: Հարկ է նշել, որ Ջակարտայի սկզբունքների համաձայն՝ հակակոռուպցիոն մարմիններն իրենք պետք է լիազորություն ունենան հավաքագրելու և հեռացնելու իրենց անձնակազմի անդամներին, հետևաբար ՀՀ վարչապետի կողմից Կոմիտեի նախագահի տեղակալների նշանակումն ինքնին քաղաքական ազդեցության ռիսկեր կարող է պարունակել: Մշտադիտարկման ընթացքում արձանագրվել են խնդիրներ նաև Կոմիտեի նախագահի ընտրության գործընթացում: Մասնավորապես, մրցութային խորհուրդը չի գործել ամբողջական կազմով, վերջնական որոշումը կայացվել է 7 անդամի փոխարեն 4 անդամով, այնինչ օրենքի կարգավորումը ինքնանպատակ չէ և նմանատիպ որոշումները պետք է կայացվեն ոչ թե նվազագույն, այլ՝ առավելագույն ձայներով: Բացի այդ, մտահոգություններ են արձանագրվել Կոմիտեի նախագահի և նրա հետ փոխկապակցված անձանց կողմից ներկայացրած գույքի և եկամուտների հայտարարագրերի վերլուծության մասով: Մասնակի է կատարվել նաև Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանների ձևավորմանն ուղղված գործողությունը՝ օրենսդրական ակտերի փաթեթի սահմանադրականության վիճարկման պատճառով: «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում կատարվել են փոփոխություններ և լրացումներ, մշակվել և ԱԺ կողմից 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունվել է ««ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ 331-Ն օրենքը: Փոփոխություններ են կատարվել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում, սակայն այդ փոփոխությունները վերաբերում են սահմանափակ թվով դատավորների, մասնավորապես՝ նրանց, ովքեր հանդիսանում են Հակակոռուպցիոն դատարանի դատավորներ, Վերաքննիչ քրեական դատարանի կոռուպցիոն հանցագործությունների գործերը քննող առանձին դատավորներ և Վերաքննիչ քաղաքացիական դատարանի քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով և «Ապօրինի

ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործեր քննող առանձին դատավորներ: Այս համատեքստում առնվազն խնդրահարույց է այն մոտեցումը, որ հակակոռուպցիոն դատարանի դատավորների և ընդհանուր իրավասության դատարանի դատավորների միջև սահմանվել է ոչ արդարացի վարձրատրություն, սակայն միևնույն ժամանակ՝ նախատեսված չէ համաչափ մոտեցում, մի կողմից, հակակոռուպցիոն դատարանի դատավորների վարձրատրության, մյուս կողմից, նրանց պատասխանատվության և մասնագիտական փորձառնության միջև, այլ կերպ ասած՝ նախատեսված չեն հակակոռուպցիոն դատարանի դատավոր նշանակվելու համար ավելի խիստ՝ լրացուցիչ պահանջներ և սահմանափակումներ: Պետք է նաև նշել, որ հակակոռուպցիոն դատարանները չեն կարող դիտարկվել որպես կոռուպցիայի դեմ պայքարի ունիվերսալ գործիք, որը տալիս է բոլոր խնդիրների լուծումը: Այս դատարանները կարող են արդյունավետ լինել միայն ամբողջ իրավապահ համակարգի արդյունավետ աշխատանքի դեպքում: Գլխավոր դատախազության կազմում ստեղծվել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչություն: Նախատեսվում էր նաև վերապատրաստումների իրականացում, որը սակայն իրականացվել է Արդարադատության նախարարության համապատասխան ստորաբաժանման աշխատակիցների մասով, սակայն չի կատարվել հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասով: Չի անցկացվել նաև հակակոռուպցիոն ոլորտում դոնորների աշխատանքների համակարգմանը նվիրված Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստ:

ՈԼՈՐՏ 2: ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ՝ 28%

Այս ոլորտի ներքո նախատեսված է 25 գործողություն, որից կատարվել է 7-ը, մասնակի կատարվել՝ 12-ը և չի կատարվել 6 գործողություն:

Ոլորտ 2-ի ներքո նախատեսված գործողությունների ներքո 2021 թվականին Ազգային Ժողովի կողմից ընդունվել են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի լիազորությունների ընդլայնմանն ուղղված օրենսդրական փաթեթները: Իրականացվել են գնահատումներ՝ պարզելու «Հանրային ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքների կատարման ընթացքը, սակայն արդյունքները չեն քննարկվել Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստում: Ընդունվել են հայտարարագրման համակարգի վերանայմանն ուղղված օրենքները և դրանցից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերը, սակայն այս ոլորտում դեռևս առկա են լուրջ խնդիրներ: Մասնավորապես, գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրման և վերլուծության գործընթացը ամբողջովին ավտոմատացված չէ, որոշ ուղղումներ կատարվում են մեխանիկական եղանակով: Ապահովված չէ էլեկտրոնային հայտարարագրման համակարգի և Կառավարության այլ հարթակների ու տվյալների շտեմարանների միջև փոխգործելիությունը՝ տեղեկատվության ինքնաշխատ ներմուծման և համադրման համար: Համակարգում նախատեսված չեն հայտարարագրերի բարդ վերլուծական և հաշվետվողական հնարավորություններ: Նաև նախատեսված չէ ավտոմատացված հաշվետվությունների համակարգ, որը կապահովեր ԿԿՀ-ի գործունեության թափանցիկությունը և հաշվետվողականությունը: Այն ամբողջը, անշուշտ, ազդում է նաև հայտարարագրման համակարգի արդյունավետ գործարկման վրա: Այսպես՝ 2021 թվականին հայտարարատու պաշտոնատար անձանց թիվը կազմել է շուրջ 9000, ընտանիքի անդամների հայտարարագրերը ներառելու դեպքում հայտարարագրերի թիվը կազմել է շուրջ 30000-33000: Նույն ժամանակահատվածում ԿԿՀ-ի կողմից հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ հարուցվել է ընդամենը 42 վարույթ, որից 26-ի վերաբերյալ է 2021 թվականին Հանձնաժողովը կայացրել վերջնական որոշում: Այս 26 վարչական վարույթի քննության արդյունքներով թվով 2 որոշումներով հայտարարատու անձանց նկատմամբ կիրառվել է նախազգուշացում, իսկ 8-ի նկատմամբ

կիրառվել է վարչական տուգանք՝ 200.000-ական ՀՀ դրամի չափով: Մնացած 16 վարչական վարույթի գործերով ԿԿՀ-ն կայացրել է գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշումներ: ԿԿՀ-ի կողմից կարգապահական վարույթներ են հարուցվել ԲԴԽ 3 անդամների նկատմամբ, որոնցից երկուսի դեպքում հայտարարագրերի լրացման կարգի խախտման կապակցությամբ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու հիմքով, մյուս դեպքում՝ ԿԿՀ-ին հայտարարատու պաշտոնատար անձի գույքի փոփոխություն հաստատող պատշաճ նյութեր կամ պարզաբանումներ չներկայացնելու հիմքով: Հիշյալ գործերով Հանձնաժողովը ԲԴԽ անդամներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդություններ է ներկայացրել ԲԴԽ-ին, որի արդյունքում երկու գործը կարճվել է, իսկ մեկի դեպքում միջնորդությունը մերժել է: 2021 թվականի ընթացքում դատախազության կողմից հայտարարագրերում կեղծ տվյալ ներկայացնելու կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելու, և հայտարարագրերը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով դիտավորությամբ չներկայացնելու հանցակազմերով հարուցվել է համապատասխան հոդվածներով հարուցվել է ընդամենը 14 քրեական գործ: Այնուհետև, ընդունվել է Գնումների ոլորտի օրենսդրության բարելավմանը և հստակեցմանն ուղղված նախագծերի փաթեթը: Հաստատվել է իրավաբանական անձանց իրական շահառուների ինստիտուտի ներդրման ճանապարհային քարտեզը, ընդունվել են իրավաբանական անձանց իրական շահառուների բաց և հանրամատչելի ռեեստրի ստեղծմանը, ինչպես նաև Հայաստանում գործող բոլոր իրավաբանական անձանց համար փուլ առ փուլ իրական շահառուների բացահայտման պարտադիր պահանջի սահմանմանն ուղղված օրենսդրական ակտերը:

Մասնակի կատարված գործողությունները հետևյալ են՝ վերլուծվել և գնահատվել է Էթիկայի հանձնաժողովների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների՝ իրենց գործառույթները գործնականում իրականացնելու համար անհրաժեշտ գործիքակազմի ապահովման հարցը, սակայն նրանց գործունեության համար անհրաժեշտ ուղեցույցները դեռևս մշակված չեն, վերապատրաստման դասընթացները նույնպես չեն իրականացվել: 2021 թվականի իրականացվել են աշխատանքներ որոշակի խումբ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության բարելավման առնչությամբ: Մշակվել են հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնները, սակայն քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնների առումով դեռևս մշակված փաստաթղթեր չկան: Որոշակի աշխատանքներ են տարվել մրցութային հանձնաժողովների ձևավորման հստակ չափանիշների սահմանման ուղղությամբ, սակայն այդ աշխատանքները դեռևս ամբողջությամբ ավարտված չեն: Ընթացիկ փուլում է գտնվում հակակոռուպցիոն կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ անհրաժեշտ իրավական ակտի, «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի, Նվերների ինստիտուտի կատարելագործմանն ուղղված իրավական ակտերի նախագծերի մշակումը: «Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագրքին հավանություն տալու մասին» Կառավարության որոշման նախագիծը ներկայացվել է կառավարության հաստատմանը: ««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը Հանձնաժողովի կողմից մշակվել, շրջանառվել, ապա Կառավարության կողմից հավանություն են ստացել և անհետաձգելի կարգով ներկայացվել Ազգային ժողով, սակայն այս նախագծերը չեն քննարկվել Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդում:

Ներդրվել է Քաղաքացիների դիմումների, բողոքների, հարցումների թեժ գծի միասնական հարթակը, սակայն վիճակագրական ճկուն գործիքների ներդրման ուղղությամբ աշխատանքներ դեռևս չեն իրականացվել: Մի շարք պետական մարմինների կայքէջերում հրապարակվել են մատուցվող ծառայությունների վերաբերյալ դիմումի լրացման օրինակելի ձևերը: Ներդրվել է և հանրային ծառայությունների միասնական գրասենյակներում օգտագործվում է sso.am հարթակը, սակայն Մատուցվող ծառայությունների վերաբերյալ էլեկտրոնային գնահատման հնարավորությունների, ինչպես նաև մատուցվող ծառայությունների վերաբերյալ վիճակագրության

միասնական համակարգի ներդրման ուղղությամբ աշխատանքներ չեն իրականացվել: Ազդարարման համակարգի արդյունավետությանն ուղղված ուսումնասիրությունը շարունակական բնույթ է կրել 2021 թվականին: Այնուամենայնիվ, բացահայտված խնդիրները չեն քննարկվել Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստում:

Չկատարված գործողությունների թվում են ՏԻՄ-երում և պետական տարբեր գերատեսչություններում հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրերի ներդրումը: Չեն հաստատվել պատգամավորի, քննիչի վարքագծի կանոնները, չի իրականացվել վերապատրաստում Էթիկայի հանձնաժողովի կողմից: Հանրային նշանակության կազմակերպություններում չի ընդլայնվել հակակոռուպցիոն համապատասխանության ներդրման պրակտիկան: Չի իրականացվել նաև e-draft.am հարթակի հետ կապված հանրային իրազեկման միջոցառումներ և չի մշակվել տեղեկատվության պրոակտիվ հրապարակման միասնական հարթակի տեխնիկական առաջադրանքը: Միևնույն ժամանակ, պետք է արձանագրել, որ գործնականում առկա են խնդիրներ կապված www.e-draft.am կայքի մասին հանրային ոչ բավարար իրազեկվածության, իրավական ակտերի նախագծերի՝ շահագրգիռ մարմիններին և կազմակերպություններին հասանելիության, հանրային քննարկման մասնակիցների առաջարկների մերժման հիմքերի ու պատճառաբանությունների ներկայացման և հասանելիության ապահովման, հաշմանդամություն ունեցող անձանց կայքից օգտվելու հնարավորության, իրավական ակտերի վերաբերյալ ներկայացված առաջարկների՝ նախագծի ընդունման հետագա գործընթացի վրա որոշիչ նշանակության հետ կապված:

ՈԼՈՐՏ 3. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ՝ 88%

Կոռուպցիոն գործերի քննության ոլորտում նախատեսված են եղել 8 գործողություններ, որոնցից 7-ը կատարված են, իսկ 1-ը կատարված է մասնակի:

Մասնավորապես՝ ընդունվել է ՀՀ քրեական օրենսգիրքը, որով վերանայվել են կոռուպցիոն հանցագործությունների հանցակազմերը՝ համապատասխանեցնելով դրանք միջազգային չափանիշներին: Գլխավոր դատախազի կողմից հաստատվել է կոռուպցիոն առանձին հանցագործությունների, այդ թվում՝ ապօրինի հարստացման քննության մեթոդական ուղեցույցը: Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունը համալրվել է կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ տեղեկատվության ստացման աղբյուրների ու կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքում բռնագրավված և բռնագանձված գույքի մասին տվյալներով: Բարելավվել է կառավարության փոխգործելիության հարթակը, որի միջոցով կարող են իրավապահ մարմիններն իրականացնել հարցումներ պետական տվյալների շտեմարաններից: ՀՀ քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերում ներդրվել է իրավաբանական անձանց ինչպես կոռուպցիոն, այնպես էլ այլ հանցագործությունների համար քրեական պատասխանատվության ինստիտուտը: Գործարկվում են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանը, գույքի կառավարմանը, միջազգային համագործակցությանն ուղղված կառուցակարգեր: Այս ոլորտում, թերևս պետք է նշել, որ խնդրահարույց են մնում «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի որոշ կարգավորումներ: Մասնավորապես՝ անձի վրա դրվում է իր գույքի ձեռքբերումը օրինական եկամտի աղբյուրների վերաբերյալ տվյալներով հիմնավորելու այնպիսի պարտականություն, որը չի եղել մինչև օրենքի ընդունումը: Երրորդ անձանց հասանելի են դառնում անձանց լայն շրջանակի մասնավոր կյանքին և անձնական տվյալներին առնչվող տեղեկություններ: Ապացուցման բեռի անհամաչափ բաշխման, անհավասար մրցակցային դատավարական պայմանների և գործի նյութերին ծանոթանալու սահմանափակ ժամկետի արդյունքում խախտվում է նաև անձի արդար դատաքննության իրավունքը: Բացի այդ, դատախազությանը վերապահվել է ապօրինի ծագում ունեցող գույքի գործերով ուսումնասիրություն

իրականացնելու և դատարան հայց ներկայացնելու լիազորություններ, որոնք դուրս են վերջինիս՝ Սահմանադրությամբ սպառիչ կերպով թվարկված լիազորությունների շրջանակից:

Մասնակի է կատարվել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքում համապատասխան փոփոխություններին վերաբերող գործողությունը, որի դեպքում օրենքի նախագիծը դեռևս չի ընդունվել՝ չնայած այն հանգամանքին, որ համապատասխան կարգավորումներն արդեն իսկ սահմանվել են նոր Քրեական օրենսգրքով:

ՈԼՈՐՏ 4. ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ ԵՎ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ՝ 67%

Այս գործողության ներքո նախատեսվում է 6 գործողություն, որից կատարվել է 4-ը, մասնակի կատարվել՝ 1-ը, և չի կատարվել 1-ը: Մասնավորապես, բարձրագույն ուսումնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում դասավանդվում է «Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ» առարկան: «Հասարակագիտություն» առարկայի դասագրքերում կոռուպցիային առնչվող բաժինների վերաբերյալ ուսումնասիրությունն իրականացված է, առաջարկությունները ներկայացված են, փոփոխություններ են կատարվել ավագ դպրոցի՝ 10-րդ և 11-րդ դասարանների առարկայական ծրագրերում, որոնցում հասարակագիտության առարկայի շրջանակում ներառված են կոռուպցիային առնչվող բաժիններ: Այստեղ մտահոգիչ են գնահատվել այն հարցերը, թե ինչպե՞ս է մշակվել առարկայական բովանդակությունը, ինչպիսի՞ ընթացակարգերով են ընտրվել դասավանդող մասնագետները և արդյո՞ք նրանք ունեն համապատասխան գիտելիքներ և փորձ: Մշակվել են քաղաքացիական ծառայողների համար հեռավար ուսուցման մոդելները, իրականացվում է ուսուցում՝ ըստ մոդելների: Գործարկվել են թափուր պաշտոնների համալրման մրցույթների թեստավորման փուլի առցանց հեռարձակման և քաղաքացիական ծառայության տեղեկատվական համակարգերը:

Որպես մասնակի կատարված գնահատված գործողություն, 2021 թվականին քաղաքացիական ծառայողների համար անցկացվել են վերապատրաստումներ հակակոռուպցիոն և բարեվարքություն թեմաներով, սակայն մարդու իրավունքների թեմայով վերապատրաստում չի իրականացվել:

Չեն իրականացվել հանրային իրազեկման արշավներ, որոնց միջոցով հանրությունը կտեղեկացվեր պետության կողմից հակակոռուպցիոն միջոցառումների իրականացման, ծառայությունների մատուցման ոլորտում իրականացված բարեփոխումների, ազդարարման և բողոքարկման մեխանիզմների, պետական մարմնի հետ հարաբերակցվելիս իրենց իրավունքների վերաբերյալ: Մշտադիտարկման արդյունքները ցույց տվեցին, որ ՀՀ ԱՆ կայքում հրապարակված տեղեկությունները հիմնականում կատարված աշխատանքների վերաբերյալ մամուլի հաղորդագրություններ են, և ոչ թե հանրային արշավներ կամ հանրամատչելի իրազեկման նյութեր, որոնք հանրամատչելի պարզ եղանակով քաղաքացիներին կտեղեկացնեն միջոցառումների իրականացման, ծառայությունների մատուցման ոլորտում իրականացված բարեփոխումների, ազդարարման և բողոքարկման մեխանիզմների, պետական մարմնի հետ հարաբերակցվելիս իրենց իրավունքների վերաբերյալ: Նկատվում է, որ ԱՆ-ը բավականաչափ չի կարևորում այս հարցը, չունի հստակ ռազմավարություն կամ տեսլական և իր առջև որպես առաջնային նպատակ չի դրել հանրության գիտակցության փոփոխման նպատակ:

ՈԼՈՐՏ 5. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ, ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴՐԱ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ՝ 0%

Այս ոլորտի ներքո նախատեսված 1 գործողությունը կատարվել է մասնակի: Մասնավորապես, 2021 թվականին մի շարք պետական մարմինների կողմից նախաձեռնվել և իրականացվել են հարցումներ կոռուպցիոն ռիսկերի պարզման, կոռուպցիայի դեմ պայքարի թեմաներով: Այնուամենայնիվ, ԱՆ կողմից առանձին հարցումներ այս թեմայով չեն արտապատվիրվում և իրականացվում: Մշտադիտարկման աշխատանքները ցավալիորեն որոշակի միտում ցույց տվեցին առ այն, որ ԱՆ-ի կողմից իրականացվող հարցումները և հանրային ընկալումների վերաբերյալ հետազոտությունները ավելի շատ բխում են միջազգային կազմակերպությունների կարիքից, և ոչ թե՝ ՀՀ քաղաքացիների: Դրա մասին է վկայում այն պարզ իրողությունը, որ կատարված հետազոտությունները և առաջիկայի համար ձեռք բերված համաձայնությունները իրականացվում են միջազգային կազմակերպությունների հետ համատեղ՝ առանց մասնագիտացված հանրույթի հետ խորհրդակցելու, շրջանցելով մեր ազգային պոտենցիալը:

2. ՄԵԹՈԴԱԿԱՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

- Որոշ գործողությունների համար, գործողությունների նկարագրերը և վերստուգիչ ցուցիչները հստակ չեն, ինչը հնարավորություն չի տալիս գնահատել գործողությունների իրականացման կատարողականը: Օրինակ, Գործողություն 46-ով նախատեսվում է «Քաղաքացիական ծառայողների համար հեռավար ուսուցման մոդուլների մշակում», սակայն չի մանրամասնված, թե քանի մոդուլի մշակում է նախատեսված ավարտվել հաշվետու ժամանակահատվածում: Իսկ օրինակ Գործողություն 28-ով նախատեսվում է. պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիներին առավել շատ մատուցվող ծառայությունների վերաբերյալ մատչելի տեղեկատվություն ստանալու գործիքակազմի ներդրում, որի շրջանակներում նախատեսվում է 2021 թվականի ընթացքում իրականացնել մատուցվող ծառայությունների վերաբերյալ մատչելի տեղեկատվություն ստանալու գործիքակազմի ներդրման միջոցառումներ: Քանի որ հաստակ չէ թե որն է «առավել շատ մատուցվող ծառայությունների» շրջանակը, ուստի դժվար է գնահատել թե ինչ ծավալով է կատարվել այս գործողությունը: Նմանատիպ գործողություններ են նաև գործողություններ 12, 20, 22, 23, 41, 47-ը: Այսպիսով, Ռազմավարությամբ տրամադրված չէ որոշ գործողությունների հստակ վերջնարդյունքը և վերստուգիչ ցուցիչը:

  Առաջարկվում է Ռազմավարության վերանայման կամ նոր ռազմավարության մշակման դեպքում գործողությունների նկարագիրը դարձնել առավել մանրամասն և վերստուգիչ ցուցանիշներում տրամադրել քանակականացված արդյունքներ, ինչի պարագայում գործողության իրականացման գնահատումը կդառնա հնարավոր և իրատեսական:

- Թեև ընդհանուր առմամբ գործողությունների ծրագրերով նախատեսված են վերապատրաստումներ, սակայն վերապատրաստումների համար նախանշված չեն ծավալները, ինչպես նաև գործողությունների ծրագրերով այս վերապատրաստումների արդյունավետության և մասնակիցների բավարարվածության գնահատումներ չեն նախատեսվում: Սա հնարավորություն չի տալիս գնահատել վերապատրաստումներ ենթադրող գործողությունների արդյունքային ցուցանիշերը: Օրինակ, Գործողություն 5-ով նախատեսվում է Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման համար պատասխանատու մարմինների, հասարակական կազմակերպությունների կարողությունների զարգացում, սակայն գործողության լայն ձևակերպված լինելու հանգամանքը թույլ չի տալիս գնահատել, թե արդյոք ԱՆ-ի համապատասխան ստորաբաժանման կարողությունները զարգացել են, թե՝ ոչ:

Ռազմավարությամբ կարողությունների զարգացման, վերապատրաստումների գործողություններ նախատեսելու դեպքում անհրաժեշտ է սահմանել գործողության իրականացումը գնահատելու համար անհրաժեշտ ցուցիչներԱռաջարկվում է վերապատրաստումներ նախատեսող գործողությունների համար նախատեսել մասնակիցների թվի և վերապատրաստումների արդյունավետությանը/մասնակիցների բավարարվածությանը վերաբերող վերստուգիչ ցուցանիշներ:

- Հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների ծրագրով նախատեսվող գործողությունների մշտադիտարկման ենթակա ինդիկատորները հիմնականում ներառում են ելքային մակարդակի ինդիկատորներ (output level indicators): Այս ինդիկատորները հիմնականում վերաբերում են նրան, թե արդյոք Հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների ծրագրով նախատեսված այս կամ այն գործողությունը կատարվե՞լ է, թե՝ ոչ, այնինչ գործողության և ակնկալվող արդյունքի կապի վերաբերյալ ինդիկատորները հիմնականում բացակայում են: Սա ենթադրում է, որ կատարված գործողությունների ազդեցության գնահատում չի իրականացվում և չի գնահատվում, թե արդյոք գործողության կատարումը հանգեցրել է ցանկալի արդյունքին/արդյունքներին: Օրինակ, սույն զեկույցում ներկայացված գործողություններ 1, 2, 3, 21, 43-ի վերլուծություններն ու գնահատականները թույլ են տալիս եզրակացնելու որ այդ ինդիտակորները ամբողջապես հնարավորություն չեն ընձեռում գնահատել կատարված գործողությունների որակական ասպեկտները: Այսպես, 43-րդ միջոցառմամբ նշված չէ թե քանի բուհում պետք է դասավանդվեն հակակոռուպցիոն թեմաները կամ առնվազն քանի ուսանող պետք է անցնի դասընթացները/թեմաները: Փոխարենը, վերստուգիչ ցուցանիշը ընդհանուր բնույթ ունի, և սրանից կարելի է մեկնաբանել, որ անգամ մեկ բուհում ուսումնական այդ մոդելի կիրառումը իրավասու մարմինները կարող են գնահատել որպես կատարված, սակայն արդյունքում առաջանում են որակական խնդիրներ:

  Առաջարկվում է Հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների ծրագրերի իրականացման արդյունավետության չափման ինդիկատորներ ներառել նաև ազդեցության մակարդակի ինդիկատորներ (impact level indicators), որոնց միջոցով հնարավոր կլինի գնահատել, թե արդյոք իրականացված գործողությունները հանգեցրել են ցանկալի արդյունքներին և ինչպիսի ազդեցություն են ունեցել երկարաժամկետ հատվածում:

- Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների կատարողականը գնահատելու և մշտադիտարկելու նպատակով որոշ վերստուգիչ ցուցանիշների համար հիմք են ընդունվում մեկ աղբյուրից տրված գնահատականները, ցուցիչները, և համեմատականներ չեն կատարվում այլ վստահելի աղբյուրների կողմից տրված արդյունքների, տեղեկությունների հետ:

  Առաջարկվում է վերստուգիչ ցուցանիշների ստուգման նպատակով համադրել մի քանի աղբյուրներից ստրամադրած տեղեկությունները՝ գործողությունների կատարողականը արդյունավետ գնահատելու համար:

3. ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ

1. Վերանայել բարեվարքության ստուգման վերաբերյալ ԿԿՀ-ի խորհրդատվական եզրակացությունների մատչելիությունը, այն դարձնել բաց և հասանելի հանրության համար՝ ապահովելով օրենքով նախատեսված անձնական տվյալների գաղտնիությունը՝ հանրամատչելի անձնական տվյալների հաշվառմամբ:

2. Շահերի հայտարարագիր ներկայացնող սուբյեկտների շարքում ավելացնել հայեցողական պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձանց:

3. Գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրման և վերլուծության գործընթացը ամբողջովին ավտոմատացնել՝ սահմանափակելով դրանում մեխանիկական եղանակով ուղղումների կատարումը, կիսաավտոմատացված ծրագրերի մուտքագրումը: Ապահովել այս համակարգի և Կառավարության այլ հարթակների ու տվյալների շտեմարանների միջև փոխգործելիությունը՝ տեղեկատվության ինքնաշխատ ներմուծման և համադրման նպատակով: Համակարգում նախատեսել հայտարարագրերի բարդ վերլուծական և հաշվետվողական հնարավորություններ: Արհեստական բանականության և հատուկ ալգորիթմների միջոցով մշակել և ունենալ կոնկրետ չափանիշների վրա հիմնված ավտոմատացված հաշվետվություններ, որը կապահովի ԿԿՀ-ի գործունեության թափանցիկություն և հաշվետվողականություն:

4. Հակակոռուպցիոն կոմիտեի կազմում մրցութային կարգով ստեղծել հակակոռուպցիոն և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում մասնագիտական փորձառություն ունեցող հասարակական կազմակերպություններից բաղկացած խորհուրդ, որը հանրային վերահսկողություն կիրականացնի Կոմիտեի գործունեության նկատմամբ: Նախատեսել նաև, որ Կոմիտեն հաղորդում կներկայացնի այս խորհրդին և խորհրդի անդամներին իրավունք վերապահվի հարցեր տալու:

5. Օրենքով սահմանել համապատասխան կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր, որպեսզի Կոմիտեի նախագահի կողմից՝ Կոմիտեի ծառայողների առաքինության ստուգում, այդ թվում՝ պրովոկացիոն եղանակներով, իրականացնելը չդառնա «գործիք» իր համար «ոչ ցանկալի» ծառայողներին աշխատանքից հեռացնելու համար: Նախատեսել նաև, նման եղանակով Կոմիտեի նախագահի առաքինության ստուգման իրավական հնարավորությունը և այդ ստուգման գործընթացի նկատմամբ վերահսկողության իրականացումը: Անհրաժեշտ է լրացուցիչ քննարկել այն սուբյեկտային կազմը, որոնք իրականացնելու են այս գործառույթները:

6. Վերացնել Կոմիտեի նախագահին տրված ավելորդ հայեցողական լիազորությունները՝ Կոմիտեում պաշտոն զբաղեցնող անձանց պաշտոնի սահմանային տարիքը հինգ տարի ժամկետով կամայականորեն երկարաձգելու կամ չերկարաձգելու մասով: Այս առաջարկը չընդունելու դեպքում, սահմանել Կոմիտեի նախագահի, նրա տեղակալների և Կոմիտեում պաշտոն զբաղեցնող այլ անձանց համար պաշտոնի սահմանային տարիքի նույնանման չափորոշիչներ՝ առանց տարբերակման (Կոմիտեի նախագահի և նրա տեղակալների պաշտոնի սահմանային տարիքը՝ 65-ն է, իսկ Կոմիտեում պաշտոն զբաղեցնող այլ անձանցը՝ 60):

7. Վերացնել Կոմիտեի նախագահի կողմից միանձնյա որոշմամբ պահուստային ֆոնդից հատկացումներ կատարելու կարգավորումը, և Օրենքով նախատեսել, որ նախքան պահուստային ֆոնդից հատկացումներ կատարելը, դրանց չափը պետք է համաձայնեցվի Կոմիտեի գործունեությունը վերահսկող հասարակական կազմակերպություններից բաղկացած խորհրդի անդամների հետ:

8. Կոմիտեի նախագահի տեղակալներին պաշտոնի նշանակելու և պաշտոնից ազատելու իրավասությունը վերապահել Կոմիտեի նախագահին՝ հիմնվելով Ջակարտայի սկզբունքների վրա, համաձայն որոնց՝ հակակոռուպցիոն մարմիններն իրենք պետք է լիազորություն ունենան հավաքագրելու և հեռացնելու իրենց անձնակազմի անդամներին:

9. Սահմանել հակակոռուպցիոն կոմիտեում պաշտոն զբաղեցնող անձանց կարգապահական պատասխանատվության քննության նոր մարմին, այն է՝ կարգապահական հանձնաժողովը:

10. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի ընտրության համար նախատեսված Խորհուրդը համարվում է ձևավորված դրանում առնվազն չորս անդամի ներգրավումից հետո: Նախատեսել, որ մրցութային խորհրդի ձևավորման համար պահանջվող նվազագույն չորս անդամների կազմում պարտադիր ներգրավված լինեն մարդու իրավունքների պաշտպանի և մասնագիտական քաղաքացիական հասարակության ներկայացուցիչը, որից հետո միայն այն կհամարվի ձևավորված:

11. Սահմանել, որ մրցութային խորհուրդը մրցույթում հաղթող ճանաչի առավելագույն միավոր հավաքած մեկ թեկնածուի, իսկ միավորների հավասարության դեպքում անցկացնել մրցույթի հաջորդ փուլ: Այս դեպքում նախատեսել, որ Կառավարության նշանակումը կրում է արարողակարգային բնույթ: Այսպիսով, մի կողմից հաշվի առնելով այն, որ Կոմիտեի նախագահը չի կարող ընտրվել Ազգային ժողովի կողմից, քանի որ Կոմիտեն չի համարվում անկախ սահմանադրական մարմին, ինչպես նաև, ըստ «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի՝ այն նաև չի համարվում ինքնավար մարմին, մյուս կողմից էլ հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության կողմից Կոմիտեի նախագահի նշանակումն իր մեջ քաղաքական ազդեցության ռիսկեր է պարունակում, որը չի բխում միջազգային հայտնի սկզբունքներից, ուստի առավել օբյեկտիվ և անկախ կլինի, որ մրցութային խորհրդի որոշմամբ առավելագույն ձայներ հավաքած թեկնածուն նշանակվի Կոմիտեի նախագահ:

12. Ակտիվացնել աշխատանքները, այդ թվում՝ մարզերում, որպեսզի բնակչությունը, այդ թվում երիտասարդները, ձեռք բերեն/զարգացնեն հակակոռուպցիոն գիտելիքներ՝ հակակոռուպցիոն դպրոցների և այլ նախաձեռնությունների միջոցով: Անհրաժեշտ է մշակել մեթոդական ուղեցույցեր, պատրաստել սոցիալական գովազդներ, մանկապարտեզներում, դպրոցներում և բուհերում ներդնել հակակոռուպցիոն գիտելիքների փոխանցման մեխանիզմներ՝ ուղղված հակակոռուպցիոն ոլորտում կրթության ներդրմանը և իրազեկվածության մակարդակի բարձրացմանը: Հակակոռուպցիոն գիտելիքներ պետք է տրվեն այնպիսի հիմնարար թեմաների վերաբերյալ, ինչպիսիք են՝ կոռուպցիայի հասկացությունը, պատմությունը և տիպաբանությունը, հակակոռուպցիոն միջազգային նախաձեռնությունները, իրավական փաստաթղթերը և մարմինները, կոռուպցիայի դեմ պայքարը և դրա փուլերը, կոռուպցիայի դեմ պայքարի երեք հենասյուները, կոռուպցիայի դեմ պայքարի հայաստանյան մարմինները, բարեվարքությունը և առաջնորդությունը, հնարավոր հակակոռուպցիոն գործիքները, այդ թվում՝ ազդարարման համակարգը, և այլն:

13. Ապահովել տարբեր գործողությունների և օրենսդրական ակտերի ընդունման գործընթացում հանրային քննարկումների թիրախային, մասնակցային և իմաստալից կազմակերպումը, ներգրավել ոլորտային անկախ և մասնագիտացված կառույցների, և չսահմանափակվել միայն e-draft.am կայքում իրավական ակտերի նախագծերի հրապարակումով: Յուրաքանչյուր ներկայացված առաջարկ մերժելու դեպքում ներկայացնել դրա հիմնավորումները՝ զերծ մնալով օրինակելի (շաբլոնային) տեքստերից: Դիտարկել իրավական ակտերի նախագծերի հասարակական փորձաքննության անցկացումը:

14. e-draft.am կայքը հասանելի դարձնել նաև հաշմանդամություն ունեցող անձանց:

15. Ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների վերանայված ծրագրում կամ նոր ընդունվելիք ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրում նախատեսել այնպիսի գործողություններ (օրինակ՝ ոլորտային հակակոռուպցիոն քաղաքականությունների մշակում), որոնք միտված կլինեն առանձին ոլորտներում, մասնավորապես, սոցիալական, կրթական, առողջապահության և մի շարք այլ ոլորտներում կոռուպցիայի ներկայիս մակարդակը նվազեցնելուն:

16. Կոռուպցիայի տեսանկյունից բարձր ռիսկայինություն ունեցող ոլորտներում իրականացնել կոռուպցիոն ռիսկերի ուսումնասիրություն և դրանց հիման վրա մշակել և ներդնել ոլորտային հակակոռուպցիոն քաղաքականություններ:

4. ՎԵՐՋՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

2021թ.	
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	46
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ	19
ՈՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻ	19
ՈՐԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ	8
ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ	41%

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ՝ 41%

- Այսպիսով, Ռազմավարության գործողությունների ծրագրով նախատեսված և 2021 թվականին իրականացման ենթակա 46 գործողություններից **կատարվել է 19-ը (41%)**, **մասնակի կատարվել է 19-ը (41%),** իսկ մնացած **8 գործողությունը կա՛մ ընդհանրապես չի կատարվել, կա՛մ կատարման առաջընթացը բավարար չէ գործողության կատարումը «մասնակի» գնահատելու համար (18%):** Ընդհանուր առմամբ, Ռազմավարությամբ նախատեսված գործողությունների ծրագրի կատարողականը կարելի է գնահատել **«միջին»**՝ հաշվի առնելով, որ ամբողջությամբ կատարված գործողությունների մասնաբաժինը ցածր է 50%-ից, իսկ մասնակի կատարված գործողությունների մասնաբաժինը մոտ է 50%-ին:
- Կոռուպցիայի դեմ պայքարի համատեքստում կարևոր են ոչ միայն օրենսդրական փոփոխությունները, այլև այդ փոփոխությունների արդյունքում ձեռնարկվող պատժիչ, կանխարգելիչ և կրթական գործողությունները, այդ թվում՝ հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մարմինների իրական անկախության ապահովումը, գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման համակարգի շարունակական բարելավումը, ապօրինի ծագում ունեցող գույքի վերադարձման գործընթացի անխոցելի իրավական հիմքերի ներդրումը, հակակոռուպցիոն կրթությունը, հանրային իրազեկվածության աստիճանի բարձրացմանն ուղղված միջոցառումները,աշխատանքը թիրախային խմբերի հետ, հանրության որակական մասնակցությունը կոռուպցիայի դեմ պայքարին: Ընդհանուր առմամբ, վերը նշված խնդիրները դեռ արդիական են, և օրենսդրական ակտերի ընդունմամբ դրանք վերջնական լուծում դեռ չեն ստացել: Ի լրումն, թերակատարված են մնում հասարակական կազմակերպությունների հետ աշխատանքը, հանրային իրազեկման արշավների կազմակերպումը և տեղեկատվության պրոակտիվ հրապարակում ենթադրող գործողությունները, ինչը թերևս կարող է նախանշել, որ այսպիսի գործողությունների համար պատասխանատու պետական մարմինները պատշաճ ուշադրություն չեն դարձնում կոռուպցիայի դեմ պայքարում հանրության իրազեկմանը և մասնակցությանը:
- Նկատի ունենալով Ռազմավարության և դրանից բխող գործողությունների կատարողականի միջին ցուցանիշները և առանձնացված ու իրավական վերլուծության ենթարկված գործողությունների ներքո գրանցած ազդեցության

մակարդակի արդյունքների ու իրականացված գործողությունների ոչ համապատասխան լինելը, ինչպես նաև հիմնվելով 2022 թվականի փետրվարի 9-ից 14-ը կայացած 8 ՖԽՔ-ների ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության, այլ իրավասու մարմինների ու կազմակերպությունների, մասնագիտական և փորձագիտական հանրույթի հետ ձեռք բերված նախնական պայմանավորվածությունները՝ առաջարկում ենք նոր՝ 2023 թվականից գործողության մեջ դրվող Հակակոռուպցիոն ռազմավարությունը մշակել՝ հիմք ընդունելով սույն զեկույցում բարձրացված դիտարկումները, հատկորոշած բացթողումները և առաջարկությունները, այդ թվում չկատարված գործողություններին ուղղված վերանայման և նորովի մշակելու առաջարկները՝ ապահովելով գործընթացի բարձր մասնակցայնություն՝ ոլորտի բոլոր դերակատարների ներգրավվմամբ: